

Ա. Լ. ԲՐԱԻՆՈՎՍԿԱՅԱ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՅԵՎ
ՊԱՅԲԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՍ
ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԹԱՐԳՄ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՅ ԱՌԺՈՂԿՈՄՍՍԻ ՍԱՆ-ԼՈՒՍ-ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

616.053. 2

f - 99

29 JUL 2010

616.053.2

Ը - 99

Ա. Լ. ԲՐԱԻԼՈՎՍԿԱՅԱ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՅԵՎ
ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ
ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԹԱՐԳՄ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԱՆ-ԼՈՒՍ-ԲԱԺԻՆ

1939 թ.

ՅԵՐԵՎԱՆ

06.03.2013

5233



24112-60

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Դիբեքը գրված է կոլտնտեսային մասսայական ընթերցողի համար, նա պարունակում է մանկական վարակիչ հիվանդությունների (զիֆտերիայի, ֆուբեշի, կարմրուկի, բնական ծաղիկի, կապույտ հազի, ջրծաղիկի, մանկական լուծերի) նկարագրությունը, գործնական ցուցումներ և տալիս կոլտնտեսային կյանքի պայմաններում նրանց դեմ մղվող պայքարի և նրանց կանխման մասին: Հատուկ ուշադրություն է դարձրած կոլտնտեսականների ինֆեկցացրածությունից պաշտպանության հարցերին առողջապահության գործում:

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Բուլշևիկները կուսակցությունը և խորհրդային կառավարությունը միշտ ել մեծ ուշադրություն են դարձրել և դարձնում են վարակիչ հիվանդությունների դեմ մղվող պայքարի գործին, մասնավորապես յերեխաների մեջ վարակիչ հիվանդությունները վերացնելու ուղղությամբ տարվող պայքարի գործին:

Կուսակցության 18-րդ համագումարը հատուկ ուշադրություն դարձրեց Ստալինյան յերրորդ հնդամյակի ընթացքում սանիտարա-պրոֆիլակտիկ աշխատանքները բարելավելու և ուժեղացնելու հարցի վրա: Ս.հ. թե ինչ է ասվում այդ մասին կուսակցության 18-րդ համագումարում ընկեր Մոլոտովի տված զեկուցման մեջ. «Սոցիալական ապահովագրության ծախսերը և կուսակցության, առողջապահության,

քաղաքացիական մայրերի նպաստների և բանվորների ու ծառայողների կուլտուրական-կենցաղային սպասարկման այլ բնագավառների վրա պետություն կատարած ծախսերը բարձրացվում են մինչև 53 միլիարդ ռուբլու, այդ նշանակումով և, վերջերս, հնգամյակի ընթացքում աճումը 1,7 անգամից ավելի՝ յե... Ի հաշիվ պետական այդ միջոցների ավելացման... ընդարձակվում են սանիտարա-պրոֆիլակտիկ ձեռնարկումները...»:

Խորհրդային Միության մեջ ամեն տարի բաղձաթիվ յերեսաներ են ծնվում:

Առողջապահական մարմինները միշտ պետք և պատրաստ լինեն մեր յերկրի այդ յերիտասարդ քաղաքացիների առողջության պահպանության ուղղությամբ և առաջին հերթին նրանց դանաղան ինֆեկցիաներից պաշտպանելու ուղղությամբ:

Ինչպես յերեվում և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առաջին գումարման յերրորդ սեսիայում ԽՍՀՄ Ֆինսոցկոմի տված զեկուցումից, ընթացիկ տարում միայն առողջապահության համար կառավարությունը բաց և թողնում 8,812 միլիոն ռուբլի, վերը 1938 թ. համեմատությամբ աճել և 1204 միլիոն ռուբլով կամ 15,8 տոկոսով:

Խորհրդային կառավարությունն ստեղծում և բուլսր անհրաժեշտ պայմանները առողջապահական մարմինների նորմալ աշխատանքի համար: Առողջապահական մարմիններից և կախված բաց թողնել այդ միջոցները նշված ճիշտ հունով և մեր կուսակցության ու կառավարության վերջման համաձայն, կենսագործել հսկայական կարեւորություն ունեցող այն խնդիրները, վերոնք տանում են դեպի կենցաղը ու

աշխատանքի պայմանների հետագա ևլ ավելի առողջացմանը մեր քաղաքներում և կուլտուրական-թյուններում:

Մեր ծաղկող հայրենիքի յերեսաների զարգացման ու դաստիարակության, յերեսաներին այս կամ այն վարակիչ հիվանդություններից պահպանելու վերաբերյալ Ստալինյան հուպատարությունը մենք պետք և կատարենք լրիվ կերպով և կկարողանանք լրիվ ու ինչպես հարկն և կատարել Խորհրդային հասարակայնության լայն ու ակտիվ մասնակցությամբ:

Առաջարկված դերքը բավականին հաջող կերպով տեղեկություններ և տալիս այն մասին, թե ինչ բան և վարակը, ինչպիսի վարակիչ հիվանդություններ են պատահում յերեսաների մեջ և վեր ամենազլիսպվորն և, ինչպես պայքարել նրանց դեմ, ինչպես անել, վորպեսզի կուլտուրականի մասնակցությամբ մենք կարողանանք ժամանակին ու լիովին վունչացնել վարակը: Կուլտուրական-թյունների սանիտարական լիազորների մասնակցությամբ համաճարակային հիվանդությունների դեմ պայքարի ուղին— դա ճիշտ ուղի յե. այդ իմաստով, ընկեր Բրախիովսկայի կաղմած այս դերքը հասարակական տան լիազորների համար կծառայի վորպես ձեռնարկ— տեղեկագիրք:

Հեղինակը առանձին, յուրաքանչյուր վարակիչ հիվանդության կոնկրետ որինակներով ցույց և տալիս վարակիչ հիվանդությունները կանխելու և վերացնելու աշխատանքի դրվածքի ձեվերը:

Այդ տեսակետից այս դերքը կարող և արժեքավոր գործնական ոգնություն ցույց տալ վոչ միայն յերեսաների մայրերին ու հայրերին, այլ և մեր յե-

բխտասարդությանը, կոմյերիտականներին, պիտներ-
ներին ու դպրոցականներին:

Մի քանի վարակիչ հիվանդութիւններ լիակա-
տար վերացումը և մյուսներէ առաւելագոյն չափով
նվազեցումը հնարավոր և միայն կոլտնտեսային լայն
հասարակայնութեան մերձավոր ու ակտիվ մասնակ-
ցութեամբ:

Հսկայական քայլերով դարգացող ու ծաւալվող
մեր սոցիալիստական շինարարութեան մեջ, կոլտնտե-
սութիւններում չպետք և լինեն վարակիչ հիվանդու-
թիւններ և մենք պետք և վերացնենք նրանց մոտակա
տարիներում:

Ընկեր Բրախլովսկայայի կազմած այս գիրքը
կողմնի մեղ դրանում:

Հարկավոր և այստեղ հիշատակել, վոր դրքի
հայերեն թարգմանութեան մեջ կատարված են վորոշ
փոփոխութիւններ պատմաստումների ժամկետների
ու պատմաստողների տարիքի մեջ, ինչպես նաև մի
չարք այլ խնդիրներում, վորոնք բոլորն են դրքի բը-
նագրի լույս տեսնելուց հետո համաճարակային հի-
վանդութիւնների դեմ մղվող պայքարում ստացված
արդյունքներից և գործի նոր դրվածքից:

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

31 մայիսի 1939 թ.

Յերևան

1. ԻՆՉ Ե ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Բոլորը շատ լայն գիտեն, վոր կան հիվանդու-
թիւններ, վորոնք մեկից մյուսին չեն փոխանցվում և
կան այնպիսի հիվանդութիւններ, վորոնք հիվանդնե-
րից փոխանցվում են առողջներին: Յեթե մեկը հիվանդ
և յերկամների բորբոքումով, նրա մոտ գտնվող
մարդիկ չեն վարակվի այդ հիվանդութեամբ: Յերի-
կամների բորբոքումը հիվանդից առողջին չի փոխանց-
վում:

Այլ խնդիր և, յերբ մարդ հիվանդ և տիֆով, քու-
թեշով կամ ծաղիկով. այդ դեպքում նա վտանգավոր և
իրեն աղաւաղների, նրան այցելող հոգեբերի և բոլոր
նրանց համար, ովքեր գտնվում են նրա մոտ:

Այն հիվանդութիւնը, վորը հիվանդից փոխանց-
վում և առողջին, կոչվում է՝ վարակիչ հիվանդու-
թիւն:

Յեթե տանը վորեւե մեկը հիվանդանում և տիֆով,
ապա մեկ-յերկու շաբաթից հետո հիվանդանում և
ընտանիքի մյուս անդամը, յերբորդը, չորբորդը:
Մարդիկ կարող են հիվանդանալ դոլդի զանազան
ծայրամասերում և մեկ-յերկու ամսից հետո կարող
են շատերը հիվանդանալ ամբողջ գոլդում:

Որինակ, յերեխան հիվանդանում և քութեշով.
կան այնպիսի ծնողներ, վորոնք չգիտեն, վոր այդ

Հիվանդութիւնը վարակիչ է և դրա համար ել չեն
վզուշանում: Առողջ յերեխաները դանձում են միջեմ-
նույն սենյակում: Հիվանդ յերեխայի հետ միասին:
Այնտեղ մտնում են նաև հարևանների յերեխաները:
Մեկ-յերկու շաբաթից հետո քութեշով Հիվանդանում
են թե այդ, և թե հարեան տանն ապրող յերեխա-
ները:

Յեթե դուռը կարմրուկով Հիվանդանում է մեկ
յերեխա, ապա նրանից վարակւում են շատերը,
նույնիսկ բոլոր յերեխաները, վորոնք անցյալում չեն
հիվանդացել կարմրուկով:

Վարակիչ Հիվանդութիւններն արագորեն և հեշ-
տությամբ են փոխանցւում մեկից մյուսին, նրանք
ընդերկում են ամբողջ դուռեր, շրջաններ և քաղաք-
ներ:

Շատերը դեռ հիշում են, թե ինչպես ցարակաւ
իշխանութեան որով, 1908 թ. Մերձվորդյան յերկրի
համարյա բոլոր դուռերում և քաղաքներում մարդիկ
մասսայականորեն հիվանդացան խոլերայով:

Դեռ այժմ ել Հնդկաստանում ծաղկից, ժան-
տախտից և խոլերայից մահանում են տասնյակ և
հարյուր հազարավոր մարդիկ:

Այնտեղ վարակիչ Հիվանդութիւնների համաճա-
րակները իսկական ժողովրդական աղետներ են յերկ-
րի համար:

Հին ժամանակներում վարակիչ Հիվանդութիւն-
ների նկատմամբ մարդիկ անողնական էին: Նրանք
չգիտեցին, թե ինչից են առաջանում վարակիչ Հիվան-
դութիւնները և ինչպես պաշտարել նրանց դեմ:

Գիտնականները շատ յերկար և համոռեն աշ-
խատել են ու հետազոտել, մինչև վոր վարողացել են
դանել վարակիչ Հիվանդութիւնների տարածման
պատճառները և նրանց դեմ պաշտարելու միջոցները:

ԻՆՁԻՑ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Վարակիչ Հիվանդութիւններն առաջանում են
մանրագույն, հասարակ աչքով անտեսանելի կենդանի
էյակներից: Նրանք ընկնում են մարդու մարմնի մեջ՝
բերանի, քթի և մաշկի քերծվածքների միջոցով: Այդ
կենդանի էյակները կոչ-
ւում են միկրոբներ կամ
բակտերիաներ: Միկրոբ-
ներին կարելի չէ տեսել
միայն ուժեղ խոշորացնող
ապակու — մանրադիտակի
(միկրոսկոպի) միջոցով:

Միկրոբները, ինչպես
բոլոր կենդանի էյակները՝
սնվում, բաղմանում, ա-
ճում և մահանում են:

Կան միկրոբներ, վորոնք
մեծ ոգուտներ են տալիս
մարդուն, բայց և կան
այնպիսիները, վորոնք
միայն են հասցնում նրան:

Հոդի մեջ ապրում են
միկրոբներ, առանց վորոնց
չեն կարող սննվել և աճել
բույսերը:

Հացի թթվածորի (խաշ)
և մակարդի մեջ դանւում



Նկ. № 1

են միլիարդներով միկրոբներ, վորոնք խմորում են առաջացնում խմորի մեջ, շատացնում են դադերը և բարձրացնում խմորը:

Ուրիշ տեսակի միկրոբները ոգից ընկնելով կաթի մեջ թթվեցնում են նրան: Առանց միկրոբների ոգնութեան, մենք չենք կարող պատրաստել պանիր, մենք չենք կարող ունենալ վոչ հաց, վոչ դարեճուր և վոչ ել կվաս: Դրանք ոգտակար միկրոբներ են, վորոնք հարկավոր են մարդուն և մեծ ոգուտ են տալիս նրան:

Բայց կան և ուրիշ միկրոբներ, վորոնք վնասակար են մարդուն, վորոնք ընկնելով մարդու և կենդանիների որդանիղմի մեջ, հիվանդություններ են առաջացնում. այդ միկրոբները կոչվում են ախտածիւ միկրոբներ:

Ինչումն է ուժը այն մանր կենդանի եյակների, վորոնք հասարակ աչքով, առանց խոչորացույցի անտեսանելի յեն: Այդ մանրագույն եյակներն ինչպես կարող են հիվանդություններ առաջացնել ամբողջ, առողջ մարդու մարմնի մեջ:


Միկրոբները մարդու և կենդանու մարմնի մեջ տարագրեն բաղմանում են և մի քանի ուրից հետո որդանիղմում միլիարդներով միկրոբներ են վուտակվում:

Միկրոբների գլխավոր վնասը վոչ միայն նրանում է, վոր նրանք բաղմաթիվ են, այլ վոր նրանք ապրելով մարդու մարմնի մեջ՝ ուժեղ թուլներ են արտադրում: Արյունը տարածում է այդ թուլներ ամբողջ որդանիղմի մեջ:

Մարդը թունավորվում է այդ թուլնով և հիվանդանում:

Տարբեր հիվանդությունների միկրոբներ տարբեր են լինում:

Տիֆի միկրոբը նման է գիֆտերիայի, սիբիրախտի կամ խոլերայի միկրոբներին: Վորոչ միկրոբներ գնդաձև են, դասավորված անջատ իրարից, կամ չլթայի կամ վողկյուղի ձևով. ուրիշները ուղղաձև




Նկ. № 2

Միկրոբներ՝ ա) սիբիրախտի, բ) տուբերկուլյոզային ցուպիկներ, գ) խոլերայի, դ) վորվայնատիֆի: են, ինչպես ցուպիկներ, մյուսները պտուտաձև են՝ խցանհանի նման:

Վորոչ միկրոբներ, որինակ, գիֆտերիայի միկրո-

բը գտնվում է գլխավորապես բկանցքում, իսկ վորովայնիսիֆինը՝ աղիքներում: Յուրաքանչյուր միկրոբ արտադրում է իրեն յուրահատուկ թուլյնը և յուրաքանչյուր տեսակի միկրոբ առաջացնում է իրեն հատուկ, ուրիշ հիվանդության չնմանիլող հիվանդություն:



Նկ. № 3

Դիֆտերիայի միկրոբներ

Ծաղիկով հիվանդից, վորի մարմնի մեջ գտնվում են ծաղկի միկրոբներ, կարելի չէ վարակվել միայն ծաղիկ հիվանդությամբ: Ուղեբայով հիվանդից կարելի չէ վարակվել միմիայն խոլերայով: Ծաղիկը

նման է խոլերային, և դիֆտերիան՝ քութեչին, վորովհետև այդ հիվանդություններից ամեն մեկն առաջանում է տարբեր միկրոբներից:

Վորոշ միկրոբներ մարդու մարմնից դուրս չեն կարող ապրել և մարդու որգանիցմից դուրս դալու ղեպքում, չուտով վոչնչանում են, ինչպես որինակ՝ կարմըրուկի և կապույտ հագլի միկրոբները:

Վորոշ միկրոբներ կարող են յերկար ապրել նաև մարդու մարմնից դուրս՝ ջրում, հողում, իրերի վրա: Որինակ՝ սիբիրախաի միկրոբները կարող են շատ յերկար՝ 2—3 տարուց ավելի ապրել հողում:

Յեթե սիբիրախաից ընկած կենդանին թաղված է վոշ խորը, վորեև արոտատեղի մոտ, այդ դեպքում անասունները կարող են վարակվել սիբիրախաիով:

Մարդու մարմնից դուրս, միկրոբները ավելի լավ կարող են ապրել մութ, խոնավ, ողափոխությունից զուրկ, կեղտոտ շենքերում, վորտեղ չեն թափանցում արևի ճառագայթները և թարմ ոդը: Այդպիսի տեղերում ախտածին միկրոբները կարող են շատ յերկար ապրել:

Այն տեղում, վորտեղ տիրում է կուտակվածություն, նեղվածք և կեղտոտություն, այնտեղ, վորտեղ իշխում է քաղցը, թերսնումը, ուր մարդիկ տգետ են, այդ տեղում՝ վարակիչ հիվանդություններն արագորեն են առաջանում և տարածվում:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՅԵՎ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ

Վոչ միայն յերիտասարդները, այլև հասակավոր մարդիկ դիտեն բազմաթիվ ծանր վարակիչ հիվանդությունների մասին, լսելով այդ պրպերից և նախա-

պապերից: Ներկայումս ո՞վ է խոսում «սեւ մահվան» — «Ժանտախտի» մասին: Այնինչ 100 տարի սրանից առաջ, հարյուր հազարավոր մարդիկ մահանում էին ժանտախտից:

Մենք սկսում են մոռանալ նաև խոլերայի մասին, վերջ դեռ մոտ անցյալում՝ 1908 թ. հազարավոր զոհեր տարավ Մերձվորլան յերկրում: Մենք մոռացության ենք տալիս այն խոլերան, վորի պատճառով սրանից 25 տարի առաջ, տեղի ունեցան գյուղացիական խռովություններ: 1926 թվից հետո մեր յերկրում խոլերան իսպառ չի յերեացել:

Խոլերայի, ինչպես նաև վորովայնատիֆի միկրոբներն ընկնում են ջրի մեջ հիվանդ մարդու կղանքի հետ և կարող են յերկար ապրել ջրում: Աղբը և աղտեղություններն ապականում են ջուրը ջրհորներում: Ճանճերն իրենց թեփերով ու թաթիկներով խոլերայի միկրոբներն աղտեղություններից փոխադրում են սննդամթերքների վրա: Այդպիսով մարդիկ սննդի և ջրի միջոցով վարակվում և հիվանդանում էին խռովերայով ու մեռնում հազարաներով:

Յարական իշխանության ժամանակ կարևոր չէին համարում բացատրել գյուղացիներին, թե ինչից են առաջանում և տարածվում վարակիչ հիվանդությունները: Գյուղացիներն ապրում էին աղքատության մեջ, վատ պայմաններում, նրանք անզրադես էին, անկուրտուրական, և չգիտեին, թե ինչպես պետք է կանխել վարակիչ հիվանդությունները և ինչպես պաշտարել նրանց դեմ:

Յեւ դարմանալի չէ, վոր այդ պայմաններում վարակիչ հիվանդությունները շատ լայնորեն ելին տարածվում և համաճարակներ առաջացնում:

Ներկայումս, յերբ կրտսեռականներն ունեւոր

են դառնում, յերբ լիկվիդացիայի յե յենթարկվում անզրադեսությունը հասակավոր աղքատակության մեջ և մտցված է պարտադիր յոթամյա հանրակրթական ուսուցումը յերեսմաների համար՝ այժմ մենք արդեն վերացրել ենք ամենածանր վարակիչ հիվանդությունները, մենք նրանց մասին սկսում ենք մոռանալ:

200 տարի սրանից առաջ մարդիկ բոլորովին անոգնական էին վարակիչ հիվանդությունների դեմ՝ պաշտարելու համար: Նրանք չգիտեին, թե ինչու են վարակիչ հիվանդությունների ելությունը, ինչպես պաշտարել նրանց դեմ և կանխել նրանց:

Մի շարք գիտնականների յերկար աշխատանքներից հետո պարզվեց, վոր վարակիչ հիվանդությունները «ասածու պատիժ» չեն, ինչպես մտածում էին տգետ մարդիկ, այլ հիվանդություններ են, վորոնք առաջանում են միկրոբներից:

Գիտնականները սովորեցին աճեցնել միկրոբներն իրենց լաբորատորիաներում: Նրանք ուսումնասիրեցին միկրոբների կյանքը, թե ինչպես են նրանք սնվում, աճում, բազմանում և ինչպես կարելի յե նրանց վռչելու չացնել: Գիտնականներին հաջողվեց գատել և ուսումնասիրել այն թույները, վորոնք արտադրվում են միկրոբների կողմից: Յերբ ուսումնասիրվեցին միկրոբների կողմից արտադրվող թույները, գիտնականներն աշխատեցին գտնել հիվանդացած մարդկանց բուժելու համար անհրաժեշտ հակաթույները: Շատ վարակիչ հիվանդությունների դեմ այդպիսի նյութեր արդեն կան, վորոնք կոչվում են բուժական չիճուկներ: Այդպիսի չիճուկներով բուժում են գիֆտերիան,

դիզենտերիան (արյունալուծը), քուժեչը և այլ վարակիչ հիվանդություններ:

Հասկապես կարևոր եր դռնել այնպիսի միջոցներ, վրորնը կարողանային վոչ միայն բուժել, այլև վարակից նախապահպանել մարդկանց և կենդանիներին:

Համառ աշխատնքից հետո, դիտնականները գտան այնպիսի միջոց, վորը միլիոնավոր մարդկանց և կենդանիների աղատում ե հիվանդություններից և մահից: Այդպիսի միջոցներ հանդիսանում են նախապահպանական պատվաստումները:

Ներկայումս կոլտնտեսականները հնարավորութուն ունեն լմանալու, թե ինչից են առաջանում վարակիչ հիվանդությունները և ինչպես պայքարել նրանց դեմ: Տպագրվում և տարածվում են միլիոնավոր դրքուկներ ու թերթիկներ, վորոնց մեջ բացատրվում ե՝ թե ինչպես պետք ե պայքարել առողջ կենցաղի համար: Չկա դյուզ, չկա կոլտնտեսութուն, վորտեղ բժիշկը չգորույցի այն մասին, թե ինչպես ստեղծել լավագույն կուլտուրական կյանքի պայմաններ: Տարեց-տարի աճում ե կոլտնտեսականների բարեկեցութունը: Կոլտնտեսականները համառ պայքար են տանում առողջ, կուլտուրական կենցաղի համար:

Դրա շնորհիվ մենք այժմ վերացրել ենք շատ վարակիչ հիվանդություններ: Այնպիսի վարակիչ հիվանդությունից, ինչպիսին ե բժավոր տիֆը, մենք պետք ե աղատվենք և կաղատվենք ամենամոտիկ տարիներում:

**ԻՆՁՊԵՍ ԵՆ ՓՈԽԱՆՑՎՈՒՄ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Վարակիչ հիվանդությունը հիվանդից ա-

ռողջ մարդուն փոխանցվում ե դանադան ճանապարհներով: Վորակնդի վարակիչ հիվանդությունը կարողանա փոխանցվել հիվանդից առողջին, պետք ե, վոր վարակիչ հիվանդություն առաջացնող միկրոբը դատվի հիվանդի մարմնից և ընկնի առողջ մարդու որդանիդմի մեջ: Վարակի աղբյուրն առաջին հերթին հանդիսանում ե հիվանդ մարդը և նրա արտադատումները:

Ախտածին միկրոբները հիվանդի մարմնից դատվում են կամ բերանից, քթից՝ թքի և լորձի հետ, կամ թե մեղի և կղանքի, թարախի կամ արյան հետ:

Յեթե մարդ հիվանդ ե քուժեչով կամ դիֆտերիայով, ապա միկրոբները բուն են դնում դիտավորապես նրա բկանցքում: Հաղի, փուչտոցի կամ խոսակցության ժամանակ միկրոբները դատվում և ընկնում են ողի մեջ թքի և լորձի կաթիլների հետ: Յեթե առողջ մարդը գտնվում ե հիվանդի մոտ, ապա այդ միկրոբներն ընկնում են նրա վրա և կարող են վարակել նրան: Թքի և լորձի կաթիլներն ընկնում են պստերի, հատակի և հիվանդից վոչ հեռու գտնված իրերի վրա: Յեթե այդպիսի իրերն ողտադործվեն առողջի կողմից, վերջինս կարող ե վարակվել: Ծաղկի դեպքում վարակիչ ե թարախը, վորը գտնվում ե թարախակույտներում-կեղեվի տակ, դրա համար ել վարակիչ ե նաե ինքը կեղեքը, վորը թեղիտվում ե ու թափվում և վարակում հիվանդի մոտ գտնվող իրերը: Ծաղկի վարակը փոխանցվում ե նաե ողի, թքի և լորձի կաթիլների միջոցով, ինչպես դիֆտերիան և քուժեչը:

Վորովայնատիֆի և դիզենտերիայի միկրոբները դատվում են հիվանդի որդանիդմից նրա կղանքի հետ:

Վարակիչ հիվանդի կղանքի, թքի և թարախի ամենա-
փոքրիկ մասնիկում կարող են սարուռնակվել միլիոնա-
վոր միկրոբներ: Յեթե մարդ խնամում է վարա-
կիչ հիվանդին, պատրաստում նրա անկողինը, տեղափո-
խում է հիվանդին վամ կերակրում նրան, և հետո անվա-
ճեռներով ձեռք տալիս հացի և ալյուսեղիքների, դրա-
նով վարակում է վերջիններին: Այդպիսի ուտելիքներ
գործածելիս կարելի չէ վարակվել: Այնտեղ, վորտեղ
չկան լավ դուղարաններ, ուր աղբը թափվում է
բակում, բանջարանոցում, այնտեղ վորովայնատիֆի
միկրոբները քչվում—տարվում են անձրեվաջրերի
կողմից, վորոնք ընկնելով լճակների, հորերի և գե-
տերի մեջ վարակում են ջուրը: Այդ ջրերը գործա-
ծելու դեպքում՝ մարդիկ վարակվում են վորովայնա-
տիֆով:

Մի քանի վարակիչ հիվանդություններով մարդիկ
վարակվում են կենդանիներից: Այսպես որինակ՝ սիբի-
րախտով կարելի չէ վարակվել սիբիրախտով հիվանդ
կովից, յեթե դոժծածեն սիբիրախտով հիվանդ կենդա-
նու միսը, կամ մաշկեն, կտրատեն սիբիրախտից ըն-
կած կենդանու մարմինը:

Լինում են դեպքեր, յերբ սիբիրախտով վարակ-
վում են մուշտակի միջոցով, վորը սրատրաստվել է
սիբիրախտից ընկած վոչխարի մորթուց:

Զիուց կարելի չէ վարակվել խնախտով (սապ):
Պատառած կենդանիների կծելուց մարդը հիվանդա-
նում է կատաղությամբ:

Միջատները նույնպես կարող են վարակ տեղափո-
խել: Այսպես, յեթե վոջիլը կծում է բծավոր կաճ հե-
տադարձ տիֆով հիվանդ մարդուն, հիվանդի ար-
յան հետ միասին նա ծծում է նաև այդ հիվանդու-

թյուններն առաջացնող միկրոբները: Վոջիլի որդանիզ-
մում միկրոբները բաղմանում են: Յեթե այդ վոջին
անցնում է առողջ մարդուն և վծում նրան, նա
փոխանցում է վարակը: Այդպիսով, վոջիլի կծելու
միջոցով մարդը վարակվում է բծավոր կաճ հետա-
դարձ տիֆով:

Ճանճերը, վորոնք թուշում են ամեն տեղ, նստում
են դոմաղբի և կղանքի վրա, իրենց թեկերով և թա-
թիկներով վորովայնատիֆի և դիֆտերիայի
միկրոբները փոխադրում են անդամթերքների վրա,
յեթե նրանք ծածկված չեն: Լուռն փոխադրում է Ժան-
տախտի վարակը, մոծակը հիվանդ մարդու արյունից
առողջ մարդու արյան մեջ է փոխադրում մալարիայի
միկրոբները:

Ընկնելով մարդու մարմնի մեջ, միկրոբներն ըս-
կըսում են սատիկ բաղմանալ. մեկը բկանցքում,
մյուսները աղիքներում, յերբորդը՝ թոքերում, արջան
մեջ: Նրանցից վոմանք մնում են նույն տեղում վոր-
տեղ ընկել են, ուրիշներն արյան միջոցով տարած-
վում են որդանիզմի մեջ:

Մենք արդեն ասացինք, վոր միկրոբները գտնվե-
լով մարդու որդանիզմի մեջ ուժեղ թուշն են արտա-
դրում, վորն արյան միջոցով տարածվում է վողջ
մարմնում, թունավորում որդանիզմը: Բայց որդանիզ-
մը անպաշտպան չի մնում միկրոբների թուշների
հանդեպ, նրանում ակտիվ է սղաջար այդ թուշների
դեմ: Որդանիզմում սրտադրվում են հատուկ նյու-
թեր—հակաթուշներ: Յեթե հակաթուշնն որդանիզմում
արտադրվում է անբավարար քանակով, իսկ մուտք
գործած միկրոբները մեծ քանակությամբ ուժեղ
թյուն են արտադրում, այդ դեպքում հիվանդը մահա-

նում է: Յերբ որդանիդմբ բալական քանակությամբ հակաթույն է արտադրում, նա հաղթահարում է վարակին և հիվանդն առողջանում է:

Առողջ մարդիկ հանդիպելով վարակիչ հիվանդներին միշտ վարակվում են արդյոք: Վոչ, վոչ միշտ: Թույլ և հիվանդությունից հետո հյուսված մարդն ավելի հեշտ է վարակվում, քան առողջ և ամբողջով մարդը: Այն մարդը, վոքը վարակիչ հիվանդությունն անցկացնելուց հետո իր որդանիդմբ հակաթույն ունի, այլևս այդ հիվանդությամբ նորից չի վարակվում:

Մարդ հիվանդանում է այն դեպքում, յերբ նրա մարմնի մեջ ընկած ախտածին միկրոբները բալական նաչափ բաղմանում են. դրա համար պահանջվում է վորոչ ժամանակամիջոց, վորի տեվողությունը տարբեր է դանադան հիվանդությունների ժամանակ՝ մի քանի ժամից սկսած մինչև մի քանի շաբաթ:

Այն ժամանակամիջոցում, յերբ միկրոբը բազմանում է մարդու որդանիդմբ և նրա արտադրած թույնը դեռ բալականաչափ չէ, վորպեսզի թունավորի որդանիդմբ և հիվանդացնի՝ մարդն իրեն առողջ է դուռ, թեև արդեն տեղի է ունեցել որդանիդմբի վարակումը: Այդ ժամանակամիջոցը, այսինքն վարակվելու մոմենտից մինչև հիվանդության նշանների յերևան դալը կոչվում է վարակիչ հիվանդության դադտնի շրջան: Քուլթելի դադտնի շրջանը տևում է 2—12 օր, վորովայնատիֆինը 10—21 օր և այլն:

Յեթե մարդու որդանիդմբի մեջ ընկել են քիչ միկրոբներ, կամ նրանք թուլացած են և արտադրած թույնն ուժեղ չէ, մարդ չի հիվանդանում. նա չի հի-

վանդանում: Նաև այն դեպքում, յերբ որդանիդմբ բալական քանակությամբ հակաթույն է արտադրում: Որինակ, քուլթելի համաճարակի ժամանակ՝ ընտանիքում բոլոր յերեխաները չլիման մեջ են դտնվում վարակիչ հիվանդի հետ, սուկայն հիվանդանում են վոչ բոլորը: Այն յերխաները, վորոնց որդանիդմբ բալարար քանակությամբ հակաթույն է արտադրում, քուլթելով չեն հիվանդանում:

Յեթե մարդու որդանիդմբ չկա պատրաստի հակաթույն և նա չի կարողանում արագ կերպով արտադրել այն՝ մարդ հիվանդանում է: Բայց հետագայում, հիվանդության ընթացքում որդանիդմբի պայքարը միկրոբների և թույնների դեմ շարունակվում է. որդանիդմբն ուժեղ կերպով հակաթույն է արտադրում: Այն դեպքերում, յերբ որդանիդմբ հիվանդության ժամանակ բալարար քանակությամբ հակաթույն է արտադրում, միկրոբները վոչնչանում են. նրանց թույնները անվնաս են դառնում և մարդ առողջանում է: Իսկ յեթե մարդու որդանիդմբ թուլացած է ապա նա չի կարողանում պայքարել միկրոբների դեմ՝ և մարդ մահանում է:

Բայց կան և մի քանի վարակիչ հիվանդություններ, վորոնցով հիվանդանում են բոլոր մարդիկ, յերբ այդ հիվանդությունների միկրոբներն ընկնում են նրանց որդանիդմբի մեջ: Այդ հիվանդությունների դեպքում մեր մարմինը չի կարողանում միանգամից արտադրել այդ հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ հակաթույնը, ուստի և բոլոր վարակվածները հիվանդանում են: Այդպիսիք են որինակ՝



կարմրուկի միկրոբները՝ բոլոր մարդիկ, վորոնց որ-
դանիզմի մեջ ընկել են կարմրուկի միկրոբները հա-
մարյա համատարած հիվանդանում են կարմրուկով
(յեթե նրանք առաջուց չեն հիվանդացել կարմրու-
կով)։ Ամրակազմ մարդիկ սովորաբար ավելի հեշտու-
թյամբ են տանում հիվանդությունը, քան թուխալագի
և հյուսված մարդիկ։

Վարակիչ հիվանդություններից հետո, առողջա-
ցածները միանգամից չեն ազատվում միկրոբներից,
վորոնք բազմացել ելին նրանց որդանիզմում։ Մարդիկ
կարող են միանգամայն առողջ լինել, բայց նրանց
որդանիզմը դեռ պարունակում և արտադրում է անց-
կացրած հիվանդության միկրոբները։ Նրանց որդա-
նիզմից դատված միկրոբներն ընկնելով առողջ մարդ-
կանց վրա կարող են վարակել նրանց։ Մարդիկ, վո-
րոնք իրենք առողջ են, բայց իրենց մարմնի վրա վարա-
կիչ հիվանդությունների հարուցիչներ՝ միկրոբներ
(բացիլներ) են կրում, կոչվում են բացիլակիրներ։

Բացիլակիր կարող են լինել վոչ միայն այն
մարդիկ, վորոնք անց են կացրել վարակիչ հիվանդու-
թյունը, այլ և մարդիկ, վորոնք բոլորովին չեն հի-
վանդացել այդ հիվանդությամբ։

Մենք արդեն ասացինք, վոր վոչ բոլոր մարդիկ են
հիվանդանում, վորոնց որդանիզմի մեջ ընկել են վա-
րակիչ հիվանդության միկրոբները։ Յեթե միկրոբնե-
րն ընկել են մարդու մարմնի մեջ և բազմացել են,
թեև հիվանդություն չեն առաջացրել, այդ դեպքում
նրանք դառնում են մարդուց սովորական ճանապարհ-
հով—դիֆտերիայի միկրոբները՝ թքի և լորձի միջո-

ցով, վորովայնատիֆինը՝ կղանքի և ալյն։ Իսկ քանի
վոր միկրոբները դուրս են արտադրվում, ապա այդ
մարդու արտադատումները վարակիչ են ուրիշների
համար։

Այն մարդկանց մասին, վորոնք չեն հիվանդացել,
չնայած վոր նրանց որդանիզմի մեջ ընկել են վարակիչ
հիվանդությունների միկրոբներ, ասում են, վոր նը-
րանք զգայունակ չեն այդ վարակիչ հիվանդություն-
ների հանդեպ։

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

Վաղուց ի վեր հայտնի յե, վոր մարդիկ մեկ ան-
գամ հիվանդանալով ծաղկով, քութեչով, կարմրուկով
և ուրիշ վարակիչ հիվանդություններով, յերկրորդ ան-
գամ չեն հիվանդանում այդ հիվանդությամբ, կամ
հազվադուրս դեպքերում են հիվանդանում։ Նրանք
դառնում են անզգայունակ այն վարակիչ հիվան-
դության հանդեպ, վորը նրանք արդեն անց են կաց-
րել։

Այդ առաջանում է նրանից, վոր հիվանդության
ժամանակ, մարդու մարմնը, ինչպես ասացինք, հա-
կաթույն է առաջացնում միկրոբների և նրանց աը-
տադրած թույների դեմ։ Այդ հակաթույնը ազա-
տում է հիվանդներին մահից։ Վարակիչ հիվանդու-
թյունների մեծ մասից հետո, այդ հակաթույնը մը-
նում է արյան մեջ ամբողջ կյանքի ընթացքում, դրա
համար ել մարդ յերկրորդ անգամ չի հիվանդանում,
նույնիսկ յեթե դրա մարմնի մեջ ընկնում են այդ
հիվանդության միկրոբները։

Բոլորին հայտնի յե նաև, վոր յերբ մարդը մեկ անգամ անց ե կացնում թեթև ծաղկի հիվանդությունը, այլևս նա չի վարակվում ծաղկով, յեթև նա թեթևորեն հիվանդացել ե քութեչով, ապա նա այլևս չի հիվանդանա այդ հիվանդությամբ, նույնիսկ յեթև նա ապրել ե քութեչով հիվանդի մոտ: Հետևաբար, վոչ միայն ծանր, այլև թեթև հիվանդության դեպքում մարդ ընդմիջտ պաշտպանված ե լինում այդ վարակիչ հիվանդությամբ յերկրորդ անգամ հիվանդանալու վտանգից:

Բնակչության վորոչ անկուշտուրական տարրերի մեջ վաղուց ե վեր այսպիսի մի սովորություն կար, յեթև յերեսան հիվանդ եր թեթև քութեչով, նրա մոտ դնում եյին ուրիշ յերեսաներ, վորպեսզի նրանք վարակվեն ե նույնպես թեթև անցկացնեն քութեչը: Բայց հաճախ պատահում եր, վոր առաջին յերեսան թեթև եր տանում քութեչը ե արագ առողջանում, իսկ յերկրորդը, վարակվելով առաջինից, հիվանդանում եր ծանր ձևի քութեչով ե մահանում եր:

Պետք ե հիշել, վոր յերբ մարդ հիվանդանում ե, նրա հիվանդության թեթև կամ ծանր լինելը կախված վոչ միայն միկրոօրգանից ե նրա արտադրած թույններից, այլ ե նրանից, թե կարող ե այդ մարդու որդանիզմը բավարար քանակությամբ հակաթույն արտադրել:

Առաջին հիվանդացած յերեսան կարող եր տարիքով մեծ լինել, ամրակալմ, ապրած ալիլի լավ պայմաններում ե նրա որդանիզմը անհրաժեշտ քանակությամբ հակաթույն եր արտադրում ե նա թեթև ձևով

եր հիվանդանում: Յերկրորդ յերեսան, ընդհակառակը, կարող եր լինել ալիլի փոքրահասակ, կամ ալիլի թույլ որդանիզմի տեր՝ նրա որդանիզմը զգալիությամբ եր հակաթույն արտադրում ե դրա համար չի կարողանում հաղթահարել վարակին՝ յերեսան մահանում ե:

Ահա թե ինչու առողջ յերեսային վոչ մի դեպքում չպետք ե թողնել հիվանդի հետ միևնույն բնակարանում: Յերեսայի համար դա վտանգավոր ե:

Յերբ բժշկները դրանում համոզվեցին, սկսեցին այնպիսի միջոցներ փնտրել, վորպեսզի մարդուն հնարավորություն տան թեթև անցկացնել վարակիչ հիվանդությունը, վորպեսզի մարդը հետագայում այդ հիվանդությամբ ծանր չհիվանդանա:

Մարդիկ սկզբում սովորեցին պատվաստել ծաղիկը թեթև ձևով՝ հետո սկսեցին փնտրել միջոցներ, թե պատվաստումներով ինչպես նախապահպանել ուրիշ հիվանդություններից:

Յերկրորդ հիվանդությունը, վորի դեմ սկսեցին պատվաստումներ կատարել՝ դա կառաղությունն ե: Բոլորին հայտնի յե, վոր յերբ մարդուն կծում ե վատաղած շունը, կատուն կամ ուրիշ կատաղած կենդանի, ապա անհրաժեշտ ե մարդուն անմիջապես տեղափոխել այնտեղ, վորտեղ կա, այսպես կոչված, պատերազան կայան: այնտեղ նրան կպատվաստեն, վորպեսզի նախապահպանեն կառաղությամբ հիվանդանալուց:

Փրանսիական հռչակավոր դիտնական Պաստերը գտավ այդ նախապահպանական պատվաստումը. մարդու մաշկի տակ սրբկում են կառաղությունից մահա-

ցած ճաղարի ուղեղից ստացած պատվաստակը: Կատաղությունից սատկած ճաղարի ուղեղի մեջ դտնվում է շատ թուլացած, մարդու համար անստանդ միկրոբ՝ կատաղության թուլյնը: Այդ թուլյնը սրսկվում է փոքր քանակով. թեև այդ թուլյնը թուլացված է, բայց ընկնելով մարդու մարմնի մեջ, նա որդանդմում հակաթուլյն է արտադրում կատաղության դեմ:

Այդ հակաթուլյնը վռնչացնում է կատաղության թուլյնը և կատաղած կենդանիների կծած մարդը չի հիվանդանում:

Ծաղկի և կատաղության դեպքերում մարդու որպանիզմի մեջ մտցվում են թուլացած միկրոբներն ու նրանց թուլյնը, վորոնք չեն կարող իսկական հիվանդություն առաջացնել, բայց վորոնք նախապատրաստում են որդանդմը պայքարելու վարակիչ հիվանդությունների դեմ, գրգռելով նրան հակաթուլյնը արտադրանելու համար:

Մարդուն վարակիչ հիվանդություններից նախապահպանելու համար կա նաև մի այլ միջոց: Դա նախապահպանողական պատվաստումներն են, վորը պատրաստում է սպանված միկրոբներից և նրանց թուլյներից: Այդ սպանված միկրոբները չեն կարող մարդուն վնաս հասցնել: Որդանդմը, վորի մեջ սպանված միկրոբներ է ներմուծվել, հակաթուլյնը են արտադրում այդ միկրոբների և նրանց թուլյների դեմ: Յերբ հետագայում մարդու մարմնի մեջ կենդանի միկրոբներ են ընկնում, նա չի հիվանդանում, վորովհետև նրա որդանդմում արդեն հակաթուլյն կա: Այդպիսի պատվաստումներ կատարվում են պաշտպանելու հա-

մար մարդուն վորովայնատիֆով և դիֆտերիայով հիվանդանալուց:

Ներկայումս մարդիկ սովորել են պատվաստումներ կատարել դիֆտերիայի և քութեչի դեմ:

Վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումները հանդիսանում են ամենաեյական և ամենակարևոր միջոցը, վորով կարելի յե կանխել շատ վարակիչ հիվանդություններ, և դիտնականները լարված ուժերով աշխատում են պատվաստումները դտնելու մյուս վարակիչ հիվանդությունների դեմ:

**ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՅՔԱՐԸ՝ ԴԱ ՆՐԱՆՑ
ԿԱՆԻՈՒՄՆ Ե.**

Այն բոլորից, ինչի մասին մենք խոսեցինք, պարզվում է, թե վորքան դժվար է պայքարել վարակիչ հիվանդությունների դեմ այն դեպքում, յերբ նրանք արդեն առաջացել են: Նրանք փոխանցվում են մեկից մյուսին, մեկ տնից մյուս տունը, մեկ կոլխոզից մյուսը: Մենք արդեն դիտենք, վոր վարակիչ հիվանդություններից կարող են մահանալ հազարավոր և տասնյակ հազարավոր մարդիկ:

Վաղուց ի վեր հայտնի յե, վոր ամելի լավ է կանխել վարակիչ հիվանդությունները մինչև նրանց սկսվելը, քան պայքարել նրանց դեմ, յերբ նրանք արդեն տարածվել են ազգաբնակչության մեջ, յերբ սկսվել է համատարած հիվանդությունը, այսինքն համաճարակը:

Ինչպես վարելի յե կանխել վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը:

Մենք արդեն իմացանք այն մասին, վոր կեղտը, կուտակվածությունը, նեղվածությունը, սանկտարա-
կան անդրադիտությունը և աղգարնակության անկու-
տուրալանությունը նպաստում են վարակիչ հիվան-
դությունների առաջացման և տարածմանը:

Վարակիչ հիվանդությունները կանխելու համար
անհրաժեշտ է առաջին հերթին՝ բարելավել կյանքի
ընդհանուր պայմանները, բարձրացնել ընդհանուր սա-
նիտարական գործիտությունը, բարձրացնել աղգա-
րնակության կուլտուրական մակարդակը:

Պայքարը լավագույն կյանքի համար, կուլտու-
րական կյանքի համար, կուտակցության և հառապա-
րության կողմից զբված և վորպես առաջնակարգ
նշանակություն ունեցող մի խնդիր:

Կենցաղի բարելավման տեսակետից մենք շատ բան
ենք արել կոլտնտեսություններում: Շատ կոլտնտե-
սություններում տարվում են նոր շինարարություն,
չառ կոլտնտեսականներ կուլտուրական կյանք և կեն-
ցաղ են ստեղծել իրենց համար:

Բայց մի քանի տարվա ընթացքում դժվար է վե-
րացնել այն բացերը, վորոնք գոյություն են ունեցել
առաջարկի ընթացքում:

Խորհրդային իշխանության գոյության կարճ ժա-
մանակաշրջանում հնարավոր չէր վերականգնել բոլոր
դժուրները և բոլոր խրճիթները և փոխարինել այն՝
նոր, լուսավոր և առողջ բնակարաններով: Դեռ բավա-
կանաչափ կան վատ կառուցված խրճիթներ, վորոնցում
քիչ և լույսը և ողջ Անժիլականորեն խրճիթին կից կա-
ռուցված են շենքեր, վորտեղ անասուններ են պահ-
վում: Տեղ-տեղ կարելի չէ հանդիպել խրճիթների,

վորտեղ ձմռանը հորթեր, գառներ, հավեր են պա-
հում:

Դեռ կան շատ խրճիթներ, վորոնք կառուցված են
առանց ողանցքների և դրա համար շենքի ողափոխու-
մը անհնարին է, լինում են և այնպիսի անկուլտուրա-
կան ընտանիքներ, վորտեղ չկան առանձին անկողին-
ներ և բոլորը ընում են միասին, վորտեղ ողտադոր-
ծում են ընդհանուր յերեսարքիչ և ուտում են ընդհա-
նուր ամանից: Այսպիսի բնակարաններում կան ախ-
տածին միկրոբների բազմանալու և վարակիչ հիվան-
դությունները՝ հիվանդներից առողջներին փոխանցե-
լու բոլոր պայմանները:

Մինչև լավ աներով նոր դժուրներ կառուցելը, ան-
հրաժեշտ է շտապ կերպով բարելավել գոյություն
ունեցող բնակարանները: Լուսավորությունում ողանցք-
ներ չլինելը հեշտ է, դա պետք է իրադրոծել բոլոր
կոլտնտեսականների տներում:

Բնակարանում մաքրություն և կարգ պահպանելը,
նույնպես դժվար չէ: Հարկավոր է միայն վոր խրճի-
թում ապրողները բոլորն են հասկանալ, վոր իրենց
և վորջ ընտանիքի և յերեխաների առողջությունը
զլխավորապես կախված է մաքրությունից: Ամեն ոք
հատակը պետք է մաքրել խմորով, ալկոլով, իրերի փո-
շին սրբել խմորով չորով, առատադից և պատերից
ալկոլով մաքրել վոստայնը: Հնդրոյակը մեկ անգամ
պետք է լվանալ հատակը տնք մոխրաջրով: Այդպի-
սի կարգ ստեղծելուց հետո, մարդ ալյեմ չի ուզենա
ապրել կեղտոտության մեջ, նա զբվանք կզբա: Այդ
աշխատները դժվար չէ լամեն մեկը կարող է կատա-
րել: Ինչ մեծ նպաստ է ունենում մաքրության խրճիթում:

Անհրաժեշտ է ունենալ առանձին անկողին՝ ընտանիքի բոլոր անդամների համար: Շատ կոլտնտեսականներ իրենց համար մահճակալներ են դնում, իսկ յեթե բոլորի համար մահճակալներ չկան, կարելի չէ առանց նրանց ել կառավարվել, բայց անհրաժեշտ է, վոր ամեն մեկն ունենա իր առանձին անկողինը: Անկողինը պետք է պահել մաքուր, հաճախ դուրս բերել արևի տակ, ողափոխել:

Հազուապատեղեք պետք է վանոնավոր կերպով կախել պատին և ծածկել շորով, սխր չփռչոտվի:

Պետք է վերջ տալ ընդհանուր ամանից ուտելու սովորությանը: Յուրաքանչյուրը պետք է ունենա իր առանձին ամանը: Այն կոլտնտեսություններում, վորտեղ ընդհանուր ճաշարան կա, արդեն սովորել են ուտել առանձին ամանից: Անհրաժեշտ է այդ կիրառել նաև տանը: Ընդհանուր ամանից ուտելը առանձնապես վտանգավոր է յերեխաների համար: Մեծահասակները լինելով բացելակիրներ, կարող են իրենք չհիվանդանալ, բայց դրանց միկրոբները (ընդհանուր ամանից ուտելու ժամանակ) կարող են ընկնել յերեխայի որդանիզմի մեջ, վարակել և հիվանդացնել նրանց:

Հայտնի յեն շատ դեպքեր, յերբ ընդհանուր ամանից ուտելու ժամանակ մարդիկ վարակվել են սիֆիլիսով նրանից, ով հիվանդ է յեղել այդ ծանր ախտով և ուրիշների հետ միասին կերել է ընդհանուր ամանից:

Վոչ մի դեպքում յերեսորբիչը ընդհանուր չպետք է լինի: Լինում են դեպքեր, յերբ յերեսորբիչը պահված է արկղում, իսկ յերեսն ու ձեռքերը սրբում են ընդհա-

նուր և հաճախ կեղտոտ սրբիչով: Սրբիչի միջոցով ևս վարակիչ հիվանդությունը կարող է հեշտությամբ հիվանդից առողջին անցնել:


Պետք է հետևել մարմնի մաքրությանը: Հարկավոր է լողանալ բաղնիքում և փոխել սպիտակեղենը, առնվազն յեցօրյակում մեկ անգամ: Ուտելուց առաջ ձեռքերը լվանալ ոճառով: Բնակարանը, մարմինը, հագուստը մաքուր պահելու և առողջապահական նպատակները խտորեն կիրառելու դեպքում մարդիկ ավելի առողջ և վարակիչ հիվանդություններն ել ավելի քիչ կլինեն:

Բայց միայն բնակարանային մաքրության մասին հոգալը բավական չէ, անհրաժեշտ է մտածել նաև բակի և ջրհորի մասին:

Մի քանի կոլտնտեսականների և մենատնտեսների բաղերում յերբեմն չկան արտաքնոցներ և մարդիկ դուրս են դնում և միզում՝ ուր պատահի: Նույն տեղերում թափում են կեղտոտ ջրերն ու աղբը:

Հաճախ դոմաղբը մնում է չհավաքված, ամառը նրանց շուրջը բազմաթիվ ճանճեր են թռչում և այդտեղից վարակը տեղափոխում սննդամթերքների վրա: Մենդի հետ վարակը անցնում է մարդու մարմնի մեջ:

Աղտեղությունները հողի միջոցով անցնում են ջրհորները և ապականում ջրհորի ջուրը: Յեթե տանը յեղած վորովայնատիֆով հիվանդի արտաթորանքները թափվում են բակը, այդ դեպքում վորովայնատիֆի միկրոբը ջրերի հետ ծծվում է հողի մեջ, այնտեղից բնկնում ջրհորը և վարակում ջուրը: Մարդիկ դործածելով այդ ջուրը հիվանդանում են վորովայնատիֆով:



Նկ. № 4. Ինչպես է կենդանավում ջուրն ամբարեկարգ ջրհորում:

1931 թ. ամռանը Մոսկվայի մարզի Շվարցեվի անխահանքային շրջանի կոլտնտեսություն մեջ նկատվել է վորովայնատիֆի բռնկում: Տուլա քաղաքից դուրծով ախտեղ է յեկել մի կոլտնտեսական: Մեկ շաբաթից հետո նա հիվանդացել է վորովայնատիֆով: Յերեք շաբաթից հետո վորովայնատիֆ է յերեվացել 10 տնտեսություն մեջ: Պարզվում է, վոր այդ տնտեսություններն ողտվել են հիվանդացածի բազում յեղած ջրհորի ջրից:

Նոր վորովող ջրհորի տեղը պետք է բարձր լինի, դամբրից և արտաքնոցներից առնվազն 20—25 մետր հեռավորության վրա: Ջրհորը պետք է փորել խորը, վորպեսզի ջուրը ստացվի հողի խորանիստ շերտերից, վորոնք ավելի քիչ են կեղտոտված: Ջրհորը պետք է խուսի ունենա, վորպեսզի վերևից կեղտ և փոշի չընկնի ջրհորի մեջ: Պետք է աշխատել ջրհորի վրա պոմպ սարքել (նասոս) ջուրը բարձրացնելու համար: Յեթե չի հաջողվում պոմպ սարքել, ապա պետք է ընդհանուր դուլլ ունենալ: Յերեք ընդհանուր դուլլ չկա, ադ դեպքում, յուրաքանչյուրն իր սեփական դուլլն իջեցնում է ջրի մեջ, վորը հաճախակի դրված է լինում դեռնին՝ վեղտոտ հատակի վրա: Դուլլի վրա բնկնում են միկրոբներ, վորոնք կեղտոտում են ջուրը: Դրա համար ել անհրաժեշտ է ընդհանուր դուլլ ունենալ, վորը վոչ վոք չի հանում:

Արտաքնոցը պետք է կառուցել բակի անկյունում, ջրհորից հեռու, այնպես, վորպեսզի նրա տակի հորը չինված լինի ձուլթ քոած փայտով: արտաքնոցի անցքը պետք է ունենա լավ ծածկող կափարիչ: Այդ դեպք

քում ճանճերը չեն կարող նստել կեղտոտությունների վրա և տարածել վարակը։ Արտաքնոցից վոչ հեռու պետք է վառուցել աղբահորը, վորը նույնպես պետք է ծածկված լինի կախարիչով։ Այդ հորի մեջ պետք է լցվեն կեղտոտ ջրերն ու աղբը։ Վորոչ ժամանակից հետո աղբահորը պետք է մաքրել աղբից։

Կոլտնտեսականները սոցիալիստական պայմանագիր են կնքում հարևան կոլտնտեսությունների կամ միմյանց հետ՝ ցանքսը լավագույն կերպով և ժամանակին կատարելու և հացահատիկը ժամանակից չուտ հանձնելու պետությանը։ Սոցիալիստական մրցակցությունը պետք է անցկացնել նաև առանձին կոլտնտեսությունների և տների միջև կենցաղի բարելավման վերաբերյալ։

Հարևան կոլտնտեսությունները կարող են սոցիալիստական պայմանագիր կնքել ջրհորներ, հատարական բաղանիք և արտաքնոցներ կառուցելու վերաբերյալ։ Իսկ իրենց կոլտնտեսության մեջ կոլտնտեսականները պետք է սոց. պայմանագրեր կնքեն իրենց տները, բակերը, ջրհորները մաքուր պահելու համար։

Սոցմրցակցության միջոցով կոլտնտեսություններում կրթելի յե վերացնել կեղտը, անմաքրասիրությունը և ստեղծել կանոնադր առողջ կյանքի պայմաններ։ Այդ դեպքում վարակիչ հիվանդություններն ել քիչ կլինեն կոլտնտեսության մեջ։

Կյանքի բարելավման համար բնդհանուր միջոցներից բացի, կան նաև վարակիչ հիվանդությունները կանխելու հատուկ միջոցներ՝ դրանք մասսայական պատվաստումներն են, տարբեր հիվանդությունների դեպքում, վորոնց մասին մենք արդեն խոսել ենք։

Բացի դրանից բոլոր կոլտնտեսականները և մենտնտեսները պետք է լավ իմանան, թե ինչ են վարակիչ հիվանդությունները, ինչպես են նրանք տարածվում և ինչ աշխատանք պիտի տանել այդպիսիք վերացնելու համար։

**ԻՆՉՊԵՍ ԿԱՆԻԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆ-
ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿՈԼ-
ՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ, ՅԵՐԲ ՆԿԱՏ-
ՎՈՒՄ ԵՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՌԱ-
ՋԻՆ ԴԵՊՔԵՐԸ**

Մենք խոսեցինք այն մասին, թե ինչ պետք է անել ընդհանրապես վարակիչ հիվանդություններից խուսափելու, նրանց յերևան դալը կանխելու համար։ Այժմ բացատրենք, թե ինչ պետք է անել, յերբ հայտնաբերվում է մեկը, վոր հիվանդ է վարակիչ հիվանդությամբ և ինչպես կանխել այդ հիվանդության տարածումը նրա ընտանիքում և կոլտնտեսության մեջ։ Մենք գիտենք, վոր վարակի տարածման գլխավոր աղբյուրը՝ ինքը հիվանդն է։ Նրա արտադրումները՝ լորձը, խորխը, թուլքը, կղանքը, մեզը, թարախը, վորոնք իրենց մեջ ախտածին միկրոբներ են պարունակում վարակիչ և վտանգավոր են չրջապատի համար։

Ահա թե ինչու անհրաժեշտ է յուրքանչյուր վարակիչ հիվանդի, առաջին հերթին, առանձնացնել առողջներից, վորպեսզի չվարակի նրանց։

Ամենից ճիշտը հիվանդին հիվանդանոցում տեղավորելն է։ Դա ավելի լավ է, թե իրեն՝ հիվանդի և

թե՛ չըջապատի համար: Հիվանդանոցում նա պառկած կլինի լուսավոր, մաքուր և լավ ողափոխված հիվանդանոցայինում: Նա կունենա լավ անկողին և մաքուր սպիտակեղեն: Հիվանդանոցում՝ հիվանդին ամեն ուր քնում է բժիշկը, վորը յեղնելով հիվանդի դրությունից, անհրաժեշտ բուժումն է նշանակում: Բժիշկը նշանակում է նրան՝ այնպիսի սնունդ, վորը պետք է տալ հիվանդին, վորպեսզի նա չառ չուտ կազդուրվի: Հիվանդանոցում հիվանդին խնամում է բժշկական պերսոնալը, վորը մասնագիտացել է այդ դործի մեջ և իհարկե, այդ խնամքն ավելի լավ է, քան տանը:

Երջապատի համար շատ անհրաժեշտ է, վոր վարակիչ հիվանդը տանը չմնա այլ տեղափոխվի հիվանդանոց, վորպեսզի հիվանդը առողջների մեջ չգտնվի և նրանց մեջ չտարածի վարակը:

Ծաղիկով բոլոր հիվանդներին անխտիր պետք է անպայման տեղավորել հիվանդանոցում: Անհրաժեշտ է հիվանդանոցում տեղավորել նաև բոլոր տեսակի տիֆով (բժավոր, հետադարձ, վորովայնային) դիֆտերիայով, քուբեշով և այլ հիվանդներին:

Յերբեմն գատահում է, վոր վարակիչ հիվանդներին այս կամ այն պատճառով հնարավոր չի լինում տեղավորել հիվանդանոցում: Այդ դեպքում վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու համար պետք է կատարել, ինչպես հիվանդի խնամքի, այնպես էլ հիվանդին առողջներից առանձնացնելու վերաբերյալ բժշկի բոլոր ցուցումները:

Յերկրորդ խնդիրը, վորը դրված է մեր առաջ՝ դա

վարակը սպառնել է, միկրոբներին վոչնչացնելը, վորոնք վարակիչ հիվանդի միջոցով արդեն տարածվել են սենյակում՝ հատակի, պատերի, անկողնու, ամանեղենի և այն բոլոր իրերի վրա, վորոնք ոգտագործվել են հիվանդի կողմից, վորոնց հետ շփվել է նա: Մեզ անհրաժեշտ է այդ իրերը վարակազերծել այսինքն՝ դեզինֆեկցիա կատարել:

Վոչ բոլոր միկրոբներն են կենսունակ, վոչ բոլորն են կարող յերկար ապրել մարդու մարմնից դուրս: Վորոչ միկրոբներ արագ կերպով վոչնչանում են արեփի ճառագայթներից, ուրի ուժեղ շարժումից, քամուց, չորանալուց: Այսպես՝ որինակ՝ կարմրուկի, կապուտ հաղի, ջրծաղիկի միկրոբները: Նրանց վոչնչացնելու համար պետք է հատուկ դեզինֆեկցիա կատարել: Բավական է սենյակի դուռն ու լուսամուտը բանալ, սենյակում ստեղծել միջանցիկ քամի, լավ մաքրել և լվանալ սենյակը՝ և այդ ախտածին միկրոբները կվոչնչանան:

Կան նաև շատ կենսունակ միկրոբներ՝ նրանց կարելի չէ վոչնչացնել կամ այրելով, կամ յեռացնելով մինչև մեկ ժամի չափ կամ հատուկ թունավոր նյութերով, վորոնցով չաղ են տալիս կամ ծխում սենյակը և իրերը:

Ծաղիկ, քուբեշ, տիֆ հիվանդություններից հետո պետք է դեզինֆեկցիա կատարել: Այդ դեզինֆեկցիան կատարվում է կամ դեզինֆեկտորը, վորն ուղարկվում է առբաժին կողմից, կամ կատարվում է սեփական միջոցներով, այնպես ինչպես դա բացատրված է դիֆտերիայի մասին գրված գլխում (տես էջ՝ 54):

Յերբուրդ, թե ինչ պետք է անել. չպետք է թույլ
տալ զպրոց, մանկամուր, մանկապարտեզ և ման-
կահրապարակ դնալ այն յերևաններին, վորոնք հի-
վանդի հետ են յեղել: Պետք է սոսակ վինչել նը-
բանց մոտ անցնի հիվանդության զազանի շրջանը:
Մենք արդեն ասացինք այն մասին, վոր յերբ մար-
դու որդանիցմի մեջ ընկնում է վարակիչ հիվանդու-
թյան միկրոբը, լինում է հիվանդության զազանի
շրջանը, յերբ վոչ ինքը և վոչ էլ ուրիշները չեն
կարող զխտենալ այն մասին, վոր նա վարակված է:
Վորպեսզի յերևան չհիվանդանա զպրոցում, մաու-
րում և մանկապարտեզում և վարակը չտարածի
այնտեղ, նրան չի կարելի թույլ տալ հաճախելու
մանկական հիմնարկներ, մինչև չպարզվի, վոր նա
չի հիվանդանալու:

Այդ միջոցներով մենք կանխում ենք վարակիլ տա-
րածումը մանկական հիմնարկներում:

Վերջապես, մի քանի հիվանդությունների զեղ-
քում, անհրաժեշտ է առողջներին մեջ պատվաստում-
ներ կատարել, նրանց մեջ վարակիչ հիվանդություն-
ների տարածումը կանխելու համար: Որինակ՝ յեթե
յերևում և զիջաներիս հիվանդությունը, անհրաժեշտ
է այն բոլոր յերևաններին, վորոնք չեն հիվանդա-
ցել այդ հիվանդությամբ՝ հակազիջաներիսին նա-
խադաստանական պատվաստումները կատարել:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՊԱՅՔԱՐԸ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Խորհրդային առողջապահությունը պայքարում է
վարակիչ հիվանդությունների դեմ՝ հիվանդներին
բուժելով և ազդարևակության մեջ վարակիչ հի-
վանդությունների տարածումը կանխելով:

Հիվանդներին բուժելու համար խորհրդային ա-
ռողջապահությունը ծավալել է բուժարանների և
հիվանդանոցների լայն ցանց: Ներկայումս բուժ-
հիմնարկների քանակը շատ անգամով զերազանցում
է մինչև հեղափոխության ժամանակվա բուժարան-
ների և հիվանդանոցների քանակին: Այսպես որի-
նակ՝ Ռուսաստանում 1913 թ. կար միայն 4 հա-
զար բուժարան, իսկ 1936 թ. վերջին մենք ունենք
միայն զյուզական բուժարաններ 11374:

Հիվանդանոցային մահաճկաղների թիվը համեմա-
տած մինչև հեղափոխության շրջանի հետ, 103-ից
հասել է մինչև 561 հազարի, այսինքն ավելացել է
5 անգամ:

1913 թ. կար ընդամենը 13 հազար բժիշկ, իսկ
այժմ մենք միայն ՌԽՖՍՀ-ում ունենք 60 հազար
բժիշկ:

Ահա ինչպիսի նվաճումներ և կատարել մեր ա-
ռողջապահությունը Խորհրդային իշխանության զո-
յության քսան տարվա ընթացքում:

Խորհրդային առողջապահությունը մեր յերկրի բո-
լոր ծայրամասերում կառուցել է հաղթարավոր հի-
վանդանոցներ և բարակներ՝ վարակիչ հիվանդների
համար և վարակիչ հիվանդներն այնտեղ ունեն թե

լավ չենք, թե սլաուշաճ խնամք և թե հարկավոր անունը:

Յուրաքանչյուր շրջանում սանիտարական բժիշկը անց է կացնում բոլոր միջոցները վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու համար: Կոլտրնտեսություն ակտիվը պետք է կապ պահպանել սանիտարական բժշկի հետ, վորը ղեկավարում է կոլտնտեսություն ատոլջապահական ակտիվի ամբողջ աշխատանքները: Խորհրդային ատոլջապահությունը լավ դիտել, վոր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար բավական չէ միայն բուժել հիվանդին: Խորհրդային ատոլջապահությունը կիրառում է մի շարք ուրիշ միջոցառումներ, վորոնք կանխում են հիվանդությունները և ամբողջում աղբաբնակության ատոլջությունը:

Կենսագործվում են ընկ. Ստալինի ցուցումները, վոր կոլտնտեսությունները պիտի լինեն բուլչեվիկյան, իսկ կոլտնտեսականները՝ ունեվոր: Բուլչեվիկները կարողանում են հասնել այն բուլորին, ինչ նախատեսել են. նրանք կհասնեն և դրան: Հիմարդեն հաղարավոր կոլտնտեսականներ դարձել են ունեվոր իրենց մոտ կիրառելով աշխատանքի ստախանովյան ձևերը:

Դրա հետ միասին բարելավվում են կոլտնտեսականների կյանքի բոլոր պայմանները: Յեվ այնտեղ, վորտեղ կան կյանքի լավ պայմաններ, այնտեղ վերանում են վարակիչ հիվանդությունները:

Խորհրդային իշխանությունը, խորհրդային ատոլջապահությունը հակադաս կուլտուրա լուսավորա-

կան աշխատանքներ է կատարում կոլտնտեսություններում: Հրատարակվում են միլիոնավոր դրբույկներ և թերթիկներ՝ կոլտնտեսություններում տարածելու համար: Բոլոր կոլտնտեսականները պետք է դիտենան, թե ինչ են վարակիչ հիվանդությունները և ինչպես պայքարել նրանց դեմ:

Խորհրդային իշխանությունը կոլտնտեսականներին քաջատրում է, վոր միայն բժշկական աշխատողների ուժերով չի կարելի հաջողություն արագարել վարակիչ հիվանդությունների դեմ: Առանց իրենց՝ կոլտնտեսականների մասնակցության վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելով, անհնարին է լիովին վերացնել, դրա համար ել մեր յերկրում ատոլջապահական դործում յեռանդուն մասնակցություն են ցույց տալիս հարյուր հաղարավոր աշխատավորներ՝ բանվորներ ու կոլտնտեսականներ: Ամեն մի կոլտնտեսության մեջ պետք է ընտրել հասարակական սանիտարական լիազորներ, վորոնք պետք է դրադեն ատոլջապահական հարցերով: Հասարակական սանիտարները պետք է ողնեն առբաժիններին, հիվանդանոցներին և բոլոր բուժաշխատողներին վարակիչ հիվանդության դեմ պայքարի, բնակարանների և բակերի սանիտարական դրության բարելավման, կոլտնտեսականների հետ տարվող սանիտարական կանոնները և կուլտուրական ատոլջառավորությունները յուրացնելու դործում:

Այսպիսով, առբաժնի, ատոլջապահական ակտիվի, բոլոր կոլտնտեսականների և կոլտնտեսությունների լնդհանուր ուժերով մենք համատրեն կպայքարենք

վարակիչ հիմնադրությունների գիտ և մենք կհաղթանք հաղթանք նրանց :

II. ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն վարակիչ հիվանդությունները, վարժանք տալով և նախապես յերեխաների մեջ, կոչվում են մանկական վարակիչ հիվանդություններ :

Բոլորը լավ գիտեն, վարժանքում, գիժուկներում, վարժարանում հազար և հարյուրավոր հիվանդանում են զլխավորապես յերեխաները : Պատահում և, վարժարանի հիվանդություններում յերեխան հիվանդանում են և մեծահասակները, բայց դա հազարավոր և լինում : Բացի վերը հիշված մանկական վարակիչ հիվանդություններից, նրանց կարգին են պատկանում՝ ծաղիկը, խոզուկը և կարմրատապը :

Մանկական վարակիչ հիվանդությունները, զլխավորապես մատուցական համաճարկային հիվանդություններ են, այսինքն այնպիսիները, վարժանք յերեխաների մեծ մասի մեջ միաժամանակ են տարածվում :

Մանկական վարակիչ հիվանդությունները տարածված են բոլոր յերկրներում :

ԲՈՒԹԵՇ

Քույրերը ծանր հիվանդություն և : Ամենից շատ նրանով հիվանդանում են փոքր յերեխաները 1-ից մինչև 8 տարեկան հասակում : Կրճի յերեխաները մինչև 3 ամսական հասակը հազվադեպ դեպքում են հիվանդանում քույրերում :

Պատահում և, վարժարանի հիվանդությունը մե-

ծահասակներն էլ են հիվանդանում, բայց դա նույնպես հազվադեպ և լինում : Քույրերը նրանով և վարժարանում, վարժարանի մահացություն և տալիս, առանձնապես փոքր յերեխաների մեջ և նրանով, վարժարանից հեռավոր ժամանակ տալանում են դա-նապան ծանր բարձրություններ, վարժարանից մարդիկ հաճախ հաշմանդամ են մնում ամբողջ կյանքի ընթացքում :

Յեվրոպայում քույրերը հայտնի չեն մի քանի դար : Քույրերն առանձնապես տարածվել և 19-րդ դարում և այդ ժամանակից սկսված նա ընդգրկել և համարյա ամբողջ Յեվրոպան և Ամերիկան :

Ինչպես և փոխանցվում քույրերը — Քույրերն առաջացնող միկրոբներ, դեռ մեղ հայտնի չեն : Բայց մենք արդեն գիտենք, թե ինչպես և փոխանցվում և ինչպես և տարածվում քույրերի վարակը :

Քույրերի միկրոբը շատ կարճ և կենսունակ և : Նա կարող և յերկար ժամանակ (մի քանի ամիս) պահպանել իր կենսունակությունը և քույրերի վարակում առաջացնել :

Քույրերի վարակման զլխավոր աղբյուրը հանդիսանում և հիվանդ մարդը : Հիվանդը կարող և վարակել առողջներին, քանի դեռ հիվանդ և նա, մոտավորապես մեկ և կես ամիս ընթացքում :

Քույրերի վարակը պանդում և հիվանդի արտազատումների, նրա խորխի, թքի, լորձի, ակնաճի թալիսի, մեղի մեջ : Վարակը ընկնում և նաև մաշկի վրա և յերբ մաշկը թևառվում և, նա նույնպես վարակիչ և :

Յերբ հիվանդը հաղում, փոշտում, խոտում և, նրա չորս կողմն են ցալտում թքի մանր կաթիլներ և վարակն ընկնում և հիվանդի մոտ յեղած մարդկանց վրա, նրա անկողնի վրա, նրա մոտ յեղած իրերի, խաղալիքների վրա, վորոնցով նա խաղում և, կենսամթերքների վրա: Այդ իրերի և անդամթերքների միջոցով առողջ մարդիկ կարող են վարակվել քութեչով: Այդ տեսակետից առանձնապես վտանգավոր և վարակված կաթը: Այսպես որինակ՝ Անդլիայի քաղաքներից մեկում 1923 թ. բռնկվեց քութեչի համաճարակ: Իննը չարաթվա ընթացքում քութեչով հիվանդացան 280 հոգի: Յերկար վորոնումներից հետո վերջապես բժիշկները գտան այդ համաճարակի պատճառը: Պարզվեց, վոր հիվանդներից չառերը կաթը գնել են այն խանութից, վորտեղի ծառայողներից մեկի տըզդան հիվանդացել եր քութեչով և հիվանդանոց ուղարկվել: Այնուհետև պարզվեց, վոր այդ խանութը կաթն ստանում եր հինգ տնտեսություններից: Այդ տնտեսություններից չորսում վոչ մի հիվանդություն չի յեղել, իսկ հինգերորդ տնտեսությունում՝ ինքը տերը և յերկու յերեխաները հիվանդ են յեղել քութեչով: Հիվանդները բոլորն ել պառկած են յեղել տանը. նրանց խնամել և տանախրուհին: Այնուհետև նա կովերը կլթել և անլվա ձեռներով և այդպիսով կաթը վարակել քութեչի միկրոբներով: Յերբ վերջ տվին վարակված կաթի վաճառքին և առաջարկեցին դործածել միայն յեռացրած կաթ, դադարեց նաև քութեչի համաճարակը:

Շուկայում գնված հին իրերը նույնպես չառ վտանգավոր են: Մոտեվայում 1926 թ. առիթ յնդավ հետեվելու մի աղջկա հիվանդության ընթացքին: Նրա մորաքրոջ յերեխան հիվանդացել եր քութեչով և տարվել հիվանդանոց, վորտեղ նա մահացել եր յերեք չաբաթից հետո: Մահացած յերեխայի մայրը պահել եր նրա մորթե գլխարկը, առանց ախտահանելու: Քառասուն որից հետո մահացած յերեխայի մայրը յերեխայի հիշատակի համար հացկերութ եր սարքել և այդ գլխարկը նվիրել քրոջ աղջկան: Գլխարկը գնելուց 5 որ հետո, աղջիկը հիվանդացել եր քութեչով: Պարզ և, վոր քութեչի վարակը հիվանդ յերեխայից անցել և նրա գլխարկին և այնտեղ մնացել ամբողջ ժամանակ: Աղջիկը հաղել եր գլխարկը և վարակվել:

Այս որինակները ցույց են տալիս, վոր հիվանդի մոտ գտնված բոլոր իրերը վարակված են լինում և վոր վարակը կարող և յերկար մնալ: Քութեչի վարակը մնում և իրերի վրա և նրանց հետ տեղափոխվում և փոխանցվում և մի տեղից մյուսը:

Ինչպես և յերևան գալիս Բուքեշտին — Քութեչի միկրոբները քթի և բերանի միջոցով անցնում են մարդու բկանցքը: Նրանք, ինչպես և գլխատերիայի միկրոբները, ամրանում են լորձաթաղանթում, այսինքն այն բարակ վարդապուշտ լորձաթաղանթում, վորը ծածկում և բերանի, բկանցքի և քթի ներքին մակերեսը: Քութեչի ժամանակ ամենից ստաջ ցալում և բուկը: Քութեչի գաղտնի շրջանը, այսինքն այն ժա-

մանկամիջոցը, փոքր անցնում է միկրոօրները մարդու
որդանիլի մեջ ընկնելուց մինչև հիվանդութեան նը-
շաններին յերեան դալը, տեղում է 2-ից մինչև 12 օր:
Կան մարդիկ, փոքրոք հիվանդանում են միկրոօրը օր-
դանիլի մեջ ընկնելուց 2 օր հետո, մյուսները 3-4
օր հետո, իսկ մի քանիսն եւ 12 օրից հետո:

Մենք արդեն տալցինք, փոքր դադանի չըջանի ժա-
մանակ, յերեխան իրեն բոլորովին առողջ է դալում:

Հիվանդութեան սովորաբար սկսվում է անսպասե-
լի: Քութեչի առաջին նշաններն են՝ ախորժակի բացա-
կալութեան, թուլութեան զգացումը, քնկոտութեան: Փոքր
յերեխանները դառնում են ավելի անհանդիսա և
կամակոր: Շուտով սկսվում է զոզը և ստտիկ տեն-
դը: Հիվանդը դանդաղանում է գլխացավից և կոկորդա-
ցավից՝ կուլ տալու միջոցին:

Հաճախ պատահում է սրտախտոնութեան, և
փոխում: Հիվանդի բնացքում սկսվում է վառ կարմ-
րութեան, իսկ յերբեմն եւ գեղնավուն փառ:

Առաջին օրվա վերջը, իսկ յերբեմն եւ յերկրորդ
օրը յերեխայի մաշկը ծածկվում է վառ կարմիր գույ-
նի ցանով:

Ամենից առաջ ցանը յերեան է գալիս կրծքի և վո-
րովայնի վրա, այնուհետև տարածվում է ամբողջ
մարմնի և յերեսի վրա: Յանից հիվանդը կարմրում
է ինչպես դումաշ: Հիվանդի յերեսը, աչտերը, ճա-
կատը, նույնպես կարմրում են: Միայն քիթը, չըր-
թունքները և կզակը սովորաբար սպիտակ են մնում
և աչքի յեն ընկնում կարմիր յերեսի վրա: Յանը
մնում է 5-ից մինչև 7 օր, իսկ հետո սկսվում է
դուռնալուկ:

Յերեխայի բարձր ջերմութեանը տեղում եմ—7 օր:
Այդ ժամանակ յերեխայի զրուխտները շատ ծանր է
լինում, հաճախ նա դառանցում է: Ծանր դեպքերում
յերեխան մահանում է հիվանդանալուց 3-4 օր հետո:

Յլթե յերեխայի մարմինը հիվանդութեան ընթաց-
քում բավականաչափ հակաքութեչային թույն է աբ-
տալում, այդ դեպքում յերեխան 7-8 օրից հետո
առտիճանաբար սկսում է կազդուրվել: Նրա ջերմու-
թեան առտիճանաբար սկսում է իջնել: Նա ուտել և
ուզում, որեցոր իրեն ավելի ու ավելի լավ է դալում:

Նույն ժամանակաշրջանում (այսինքն 8-9 օր հե-
տո), իսկ յերբեմն եւ մի քիչ ուշ, հիվանդութեան
10-11-12-րդ օրը հիվանդի մաշկն սկսում է թեփուտել,
իսկ յերբեմն եւ ձեռների և վրաների մաշկը թափվում
է ամբողջ կոտրներով: Թեփուտումը շարունակվում է
բավականաչափ յերկար. հաճախ վերջանում է հի-
վանդութեան 40-րդ օրը, իսկ յերբեմն եւ ավելի ուշ:

Բարդութեանները էուքեչի ժամանակ — Քութեչը
փոշ միայն ծանր, այլև թեթև դեպքերում անգամ
կարող է դանդաղ բարդութեաններ՝ յերեխաների-
պարանոցային գեղձերի, ականջների, ձեռների ու
վրաների հողերի բորբոքումներ առաջացնել:

Սովորաբար այդ բարդութեաններն առաջանում
են այն ժամանակ, յերբ յերեխան կարծես թե սկսում
է առողջանալ քութեչից: Յերեխաների բորբոքումը
ամենից հաճախակի պատահող բարդութեաններից է:
Սովորաբար նա սկսվում է հիվանդութեան յերրորդ
շաբաթվանից: Յերեխաների բորբոքումը ծանր բար-
դութեան է, փոքր կարող է յերեխայի մահվան պատ-
ճառ դառնալ:

Յերիկամենքի հիվանդութիւնը կանխելու համար, անհրաժեշտ է հիվանդութեան ատաղին իսկ սրերիչ կատարել բժշկի բոլոր ցուցումները, տալ հիվանդին այն սնունդը, վորը նշում է բժիշկը, կարգավորել հիվանդի խնամքը, վորը պահանջվում է քութեշի ժամանակ:

Մյուս հաճախակի պատահող բարդութիւնը՝ դա ականջի թարախային բորբոքումն է: Ականջի բորբոքման դեպքերում մեծ մասամբ ականջից թարախ է հոսում, վորը շարունակվում է յերեխայի առողջանալուց հետո և յերբեմն տեւում մի քանի ամիս: Պատահում է, յերբ ականջի բորբոքման հետեւանքով հիվանդն ընդմիշտ խլանում է: Այդ բարդութիւնը վտանգավոր է և այն տեսակետից, վոր ականջի թարախը կարող է անցնել դանդուղեղի թաղանթի մեջ և այնտեղ առաջացնել թարախային բորբոքում, վորից յերեխայն մահանում է: Անհրաժեշտ է հիշել, վոր յերբ հիվանդն սկսում է դանդաղաւել ականջի ցաւից, կամ յերբ ականջից սկսում է թարախահոսութիւնը պետք է անմիջապէս ցույց տալ բժշկի:

Շատ հաճախ լինում է պարանոցի դեղձերի ուսուցք: Շատ դեպքերում դեղձերի ուսուցքն անցնում է, բայց յերբեմն տեղի յն ունենում դեղձերի թարախակայում: Թարախակայման դեպքում անհրաժեշտ է բժշկի շտապ ոգնութիւնը: Քութեշի շատ ծանր դեպքերում պարանոցի դեղձերի ուսուցքը յերեկում է նույն իսկ ատաղին որը:

Այսպիսով՝ քութեշը ծանր հիվանդութիւն է, վորն սպառնում է յերեխայի առողջութեանն ու կյանքին:

Մենք չենք խոսի այն մասին, թե ինչպէս պետք է բժշկել հիվանդ յերեխային՝ դա բժշկի գործն է: Վորոշակի դեղ, վորով կարելի լինէր բուժել քութեշը, չկա: Այդ հիվանդութեան դեպքում, բուժումը կախված է այն բարդութիւններից, վորոնք լինում են քութեշի ժամանակ: Այսպէս որինակ՝ յերիկամենքի բորբոքման ժամանակ, պետք է մի տեսակի բուժում, իսկ որտի հիվանդութեան ժամանակ՝ մի այլ բուժում և այլն:

Քութեշը կարող է բժշկել միայն բժիշկը, վորը կամ հիվանդին կտեղաւորի հիվանդանոցում և այնտեղ կնշանակի նրան անհրաժեշտ բուժումն ու խնամքը, կամ դուրս կգրի պահանջված դեղորանքը՝ տանը գործածելու համար և մանրամասն կբացատրի, թե ինչպէս պետք է խնամել հիվանդին:

Այնուամենայնիւ ամեն մեկը պետք է դիտենա քութեշով հիվանդին խնամելու կանոնները, յեթե հիվանդը տանն է, բոլորին հայտնի պիտի լինի, թե ինչպէս պետք է վարվել, վորպէսզի մյուս յերեխաները չվարակվեն քութեշով և ինչ պետք է անել՝ կոլտրնահոսութեան մեջ քութեշի տարածումը կանխելու համար:

Ինչպէս խնամել բուքեշով հիվանդին.— Մենք բացատրեցինք, թե ինչպէս է սկսվում և ընթանում քութեշը: Բայց այդ չի նշանակում, թե ամեն մարդ կարող է վորոշել, վոր յերեխան հիվանդ է քութեշով: Բժիշկ դառնալու, հիվանդութիւնների վորոշելն իմանալու և նրանց բժշկելու համար, պետք է 5 տարի սովորել բժշկական ինստիտուտում:

Բոլոր յերևաններէ մաս քութեշը միատեսակ չի ընթանում: Կան ե ուրիշ հիվանդութիւններ, վորոնց ժամանակ ցալում ե կոկորդը ե մարմնի վրա ցան ե յերկում: Այդ պատճառով, յերբ յերևան սկսում ե տաքացնել ե պանդառնում ե կոկորդի ցալից, անմիջապէս պետք ե դիմել բժշկի: Դա քութեշ ե, թե դիֆթերիա, կամ մի ալ հիվանդութիւն՝ կպարզի բժիշկը ե կնշանակի տվյալ դեպքի համար անհրաժեշտ բուժումը:

Ամենից լավ ե քութեշով հիվանդ յերևանային տեղավորել հիվանդանոցում: Քութեշը յերկարատեղ հիվանդութիւն ե, նա տեղում ե 6 շաբաթ: Հիվանդութիւնը ե նրա բարդութիւնները վառնալովոր են հիվանդի համար: Իսկ հիվանդանոցում նա կստանա համապատասխան սնունդ ե պատշաճ խնամք: Նրանք իր ժամանակին կտան անհրաժեշտ դեղերը ե յեթե կարիք լինի, ժամանակին ոպերացիա կանեն:

Միայն այն դեպքում, յերբ ինչ-ինչ պատճառներով անհնար ե քութեշով հիվանդ յերևանային տեղավորել հիվանդանոցում, պետք ե յերևանային տանը պահել ե կանոնավոր խնամել:

Քութեշով հիվանդին հարկավոր ե լրիվ հանգիստ: Լույս, թարմ ոդ ե մաքրութիւն, ահա այն անհրաժեշտ պայմանները, վորի մեջ պետք ե դնել հիվանդը:

Այն սենյակը, վորտեղ գտնվում ե հիվանդը, պետք ե ձմռանը ոգալիտիւ որական յերկու անգամից վոչ պակաս: Յեթե ողանցք կա, պետք ե բաց անել, յեթե ալգպիտին չկա՝ պետք ե դուռը բաց անել, հիվանդին նախապէս լավ ծածկելով վերմակով: Հիվանդին պետք ե պաշտպանել մրտէլուց:

Ամառ ժամանակ հիվանդի սենյակի լուսամուտները պետք ե միշտ բաց լինեն:

Հիվանդի անկողինը պետք ե լավ կարգի բերել, անհրաժեշտ ե ինչքան հնարավոր ե հաճախ (վոչ պակաս, քան վեցորշակը մեկ անգամ) փոխել հագլի սպիտակեղենը: Քրտինքից խոնավ սպիտակեղենը նըպատում ե հիվանդի մրտէլուն ե անախորժ գրացում ուտաւացնում նրա մեջ:

Հաճախ ուշադրութիւն պետք ե դարձնել հիվանդի մարմինը մաքուր պահելու վրա. պետք ե ամեն որ շինկ դոլ ջրով: Ատամները պետք ե մաքրել խողանակով ու ատամի փոշիով ե ողողել բերանը:

Ծծկեր ե վորք յերևաններին, վորոնք չեն կաբողանում բերանը ողողել, պետք ե շուտ-շուտ խմելու տալ յետոցրած մաքուր սաւը ջուր, մանավանդ ուտելուց հետո: Շատ կարեւոր ե հիվանդի կանոնավոր սնունդը. նրան պետք ե տալ թեթեւ սնունդ՝ կաթ, բանջարեղենից սոււյ, պանապան շիլաներ (կաշա), տրորած կարտոֆիլ, թարմ ժածիկ, կիտել, միրգ ե այլն:

Բարձր ջերմաստիճանի ժամանակ դիւին դնել սաւը կոմպրեսներ, ալսինքն՝ սաւը ջրով թրջված մաքուր քաթան:

Ինչպէս կանխել բուքեշը.— Հարկավոր ե նաե՛ ձեռք ատնել բոլոր միջոցները, վորպեսզի տանը գտնվող հիվանդը չվարակի վոչ իրեն յեղրայրներին, վոչ քույրերին, վոչ ել հարեկանների ե աղղականներին յերևաններին:

Պետք ե լավ հիշել, վոր վարակի դիւավոր աղ-

բոլորը հանդիսանում է ինքը՝ քութեչով հիվանդը։
Դրուդում աշխատող մի բժիշկ պատմում է հետեւյալ-
ւը՝ «Մի անգամ յերեխաների հիվանդութեան պատ-
հառով ինձ հրաւիրեցին Մոսկվայի մարդի Լեոնով
գլուղը։ Մանուկ եմ խրճիթ։ Անկողնում նստած եմ մի
փոքրիկ տղա, իսկ մոտը համարյա 10 յերեխա. այն-
տեղ էլին նրա քույրիկները, յեղբայրները և հարե-
վանների յերեխաները։ Նրանք բոլորն էլ ուրախանում
էին նրանով, վոր պոկում են յերեխայի թեփոտված
մաշկի շերտերը. նա հիվանդ էր քութեչով։ Ծնողնե-
րը նրան ցույց չէին տվել բժշկի և վոր մի նա-
խագգուչացման միջոցներ ձեռք չէին առել։ Յես ար-
դելեցի յերեխաներին լինել այդ խրճիթում և սովոր-
եցրի ծնողներին, թե ինչպես պահպանել մյուս յե-
րեխաներին վարակից, բայց արդեն ուշ էր։ Յերբ
յես մի շարաթից հետո նորից յեկա այդ գլուղը, հինգ
ընտանիքում հիվանդ յերեխաներ կային, նրանցից,
վորոնք այցելել էին հիվանդ յերեխային և խաղացել
նրա հետ»։ Յեթե հիվանդը տանն է մնացել, անհրա-
ժեշտ է այնպես առանձնացնել նրան առողջներից,
վորպեսզի չկարողանա վարակել նրանց։

Այն տանը, վորտեղ ապրում է քութեչով հիվանդ
յերեխան, յեթե կա յերկրորդ սենյակ, ալելի լավ է
նրան տեղավորել առանձին սենյակում, վորպեսզի
սենյակում մնա միայն մեկը՝ նա, ով խնամելու յե նը-
րան։

Իսկ յեթե տանը կա միայն մեկ սենյակ, ապա
հիվանդի անկողինը պետք է պատրաստել սենյակի մի
կողմում, բայց վոր վառարանի մոտ և վոր էլ մութը
անկյունում։

Հիվանդին պետք է խնամի և նրա անկողինն մո-
տենա միևնույն մարդը. լավ կլինի, յեթե հիվանդին
խնամի վոր թե տանտիրուհին, այլ մեծ քույրը կամ
տատը։ Ձե՞ վոր տանտիրուհին ճաշ է պատրաստում
բոլորի համար, նա կարում, հագցնում է բոլորին։
Նրա համար դժվար կլինի ամբողջ ժամանակը դառնվել
միայն հիվանդի մոտ և հող չտանել ուրիշների մա-
սին։ Յեթե նա խնամի հիվանդին, ապա կարող է
քութեչի վարակը առողջների փոխանցել։

Այն տանը, վորից ուտում և խմում է հիվանդը,
չի կարելի դնել ու լվանալ ընդհանուր ամանների
հետ։ Նա պետք է դրված լինի սեղանի, նստարանի
կամ տաքուրետի վրա՝ հիվանդի մոտ և այնտեղ էլ
լվացվի։

Սենյակի հատակը ամեն որ պետք է սրբել թաց
փալասով և վորչին մաքրել թաց ջնջոցով։ Փոշու և
կեղտոտութեան մեջ քութեչի միկրոբները կարող են
չատ յերկար ապրել։

Յեթե ընտանիքում, վորտեղ քութեչով հիվանդ
կա, գտնվում են փոքր յերեխաներ, նրանց պետք է
տեղավորել վորեւի աղջականի կամ հարեւանի մոտ,
վորոնք յերեխաներ չունեն։ Իսկ յեթե դա բոլորովին
հնարավոր չէ կատարել և յերեխաները պետք է մնան
միևնույն սենյակում՝ հիվանդի հետ, այդ դեպքում
նրանց պետք է պահել սենյակի մյուս մասում և վոր
մի դեպքում չթողնել հիվանդին մոտենալ։ Առողջ յե-
րեխաները չպետք է մոտենան հիվանդի փահճակային,
չպետք է ուտեն նրա ամանից, ձեռք չտան նրա հա-
ղուտին և խաղալիքներին։

Հիվանդի համար պետք է ունենալ առանձին միջատադործի և ուրիշ վոչ վոք: Ամեն անգամ միջանոթ ողտադործելուց հետո, անհրաժեշտ է ուշադրութեամբ լվանալ տաք ջրով:

Հիվանդին խնամողը պետք է ունենա չթից մաքուր դեղատ, վորը հնարավոր է հեշտութեամբ լվանալ: Գլուխը պետք է անպատճառ կապել դիսի շորով, բայց վոչ բրդե, այլ չթե, վորպեսզի կարելի լինի լվանալ և յեռացնել: Խնամողը վոչ մի դեպքում չպիտի մոտենա առողջ յերեխաներին կամ դնա հարեւաններին մոտ, նրան չի կարելի կով կթել կամ ճաշ պատրաստել: Ամեն անգամ հիվանդի կամ նրա իրերի հետ չիմելիս, խնամողը պետք է ուշադիր կերպով լվանա ձեռները:

Հիվանդի յեռասրբիչը պետք է լինի առանձին և վոչ վոք ընտանիքում չպետք է ոգտվի նրանից:

Նախազուգական բոլոր միջոցները պահպանելու դեպքում հեշտ է մյուս յերեխաներին պաշտպանել վարակումից:

Ինչ պետք է անել, վորպեսզի ֆուքեշի վարակը չտարածվի կոլտնտեսականների յերեխաների մեջ. — Մենք արդեն ասացինք, թե ինչպետք է անել, վորպեսզի հնարավոր լինի քութեշով հիվանդի ընտանիքում նվազեցնել առողջների վարակման վտանգը: Յեթե վորեւի մեկի տանը քութեշով հիվանդ կա, այդ դեպքում մեծ վտանգ է սպառնում, վոր ուրիշ կոլտնտեսականների յերեխաներն ել կարող են վարակվել: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կանխել հիվանդութեան տարածումը ամբողջ գյուղում:

Վոչ մի կոլտնտեսական չպիտի մտնի այն տունը, վորտեղ քութեշով հիվանդ կա: Առանձնապես անթույլատրելի է, վոր այնտեղ մտնեն յերեխաները՝ նրանք հեշտութեամբ կարող են վարակվել: Այն տնից, վորտեղ գտնվում է քութեշով հիվանդը, նույնպես վոչ վոք չպիտի դնա ուրիշ տուն, վորտեղ յերեխաներ կան: Այն տնից, վորտեղ գտնվում է քութեշով հիվանդը, յերեխաներին չպետք է թողնել վոչ մասուր, վոչ մանկապարտեզ, վոչ ել դպրոց, վորովհետեւ նրանք կարող են վարակը փոխանցել ուրիշ յերեխաների: Հիվանդի առողջանալուց կամ նրան հիվանդանոց տեղափոխելուց հետո, այն տունը, վորտեղ դրան վեջ եր նա, պետք է արտահանել այնպես, ինչպես դա բացատրված է դիֆտերիային վերաբերվող դրութում (տես եջ՝ 54): Հենց վոր հիվանդի մաշկն սկսվեց թեփոտել, նրան պետք է հաճախ լողացնել գոլ ջրով: Անհրաժեշտ է նրան լողացնել մեկ անգամ ևս նրա սենյակը արտահանելուց հետո: Այն տաշտը, վորի մեջ լողացնում էին յերեխային, պետք է մի քանի անգամ լվալ յեռացրած մոխրաջրով: Յեւ միայն նրանից հետո, յերբ սենյակը արտահանվել է, հիվանդը լողացել, լողացել են նաև բոլոր նրանք, վորոնք խնամել կամ ապրել են նրա հետ մի սենյակում, սպիտակեղենը լվացվել ու յեռացվել է, այդ բոլորից հետո միայն կարելի է յերեխաներին թողնել դպրոց դնալ կամ թողնել, վոր ուրիշ յերեխաներ դնա այն տունը, վորտեղ գտնվել է հիվանդը:

Յեթե այդ կանոնները չկատարվեն, քութեշը կարող է արագ կերպով տարածվել ամբողջ կոլտնտեսութեան յերեխաների մեջ:

Յուրաքանչյուր կոլտնտեսուհի պետք է հիշի, վոր քութեչը վարակիչ հիւանդութիւնն է: Յեթե հիւանդանում է նրա կամ հարեւանի յերեխան պետք է առաջին հերթին մտածել այն մասին, վոր հարկավոր է հիւանդ յերեխային բաժանել առողջ յերեխաներից, վորպեսզի նա չկարողանա վարակը տարածել նրանց մեջ: Ծնողները, առանձնապէս մայրերը, պետք է սովորեն հետեւել յերեխաների առողջութեանը: Յեթե յերեխան զանգատւում է կոկորդի ցավից, յեթե տաքութիւնը բարձրանում է և սկսում է փոխել, պետք է անմիջապէս դիմել բժշկի:

Անհրաժեշտ է, վորպեսզի կոլտնտեսութեան սանիւրիւղները լավ աշխատեն: Յերեխայի հիւանդանալու մասին պետք է անմիջապէս հայտնեն սանիւրիւղին: Սանիւրիւղը պետք է ոգնի յերեխային հիւանդանոց տեղափոխելու գործում:

Յեթե յերեխան տեղավորված է հիւանդանոցում, ապա պետք է հետեւել, վորպեսզի կանոնավոր և ուշադիր կերպով ախտահանվեն իրերը և այն սենյակը, վորտեղ գտնվել է հիւանդը:

Պետք է հետեւել, վորպեսզի հիւանդի սենյակում գտնված բոլոր իրերը անպատճառ վարակաղերծվեն, և վորպեսզի մեծերն եւ ախտահանելու տան իրենց այն հագուստները, վորոնցով յեղել են հիւանդի մոտ: Պետք է հետեւել, վորպեսզի ախտահանումից հետո սենյակը ուշադիր կերպով լվացված և մաքրված լինի: Յեթե հիւանդանոցը չի կարող դեզինֆեկտոր ուղարկել, պետք է հետեւել, վորպեսզի հիւանդի ընտանիքը ինքը կաղմակերպի այն իրերի լվանալն ու յեռացնելը,

վորոնք հիւանդի մոտ են յեղել և վորոնց վրա կարող է ընկած լինել քութեչի վարակը:

Յեթե հիւանդը տանն է մնում, հարկավոր է վորպեսզի ակտիվից վորեւ մեկը, լավ է յերեխա չունեցող կոլտնտեսուհի, հետեւի նախադուշական բոլոր միջոցների կիրառմանը: Պետք է նախադուշացնել բոլորին, վոր չի կարելի դնալ այն տունը, վորտեղ քութեչով հիւանդ կա: Դռան վրա պետք է հայտարարութիւն փակցնել այն մասին, վոր այս տան մեջ քութեչով հիւանդ կա:

Պետք է համոզել ծնողներին, վոր նրանք յերեխայի հիւանդութեան ընթացքում կաթ չտանեն քաղաք և կոլտնտեսականներից վոչ վոքի կաթ բաց չթողնեն: Ինչպէս մենք ասացինք, կաթի միջոցով հեշտութեամբ կարելի չէ փոխանցել քութեչի վարակը:

Քութեչի դեմ չկան նախապահպանական այնպիսի ձիւղ միջոցներ, ինչպիսիք կա՞ն, ծաղկի և դիֆտերիայի համար, թեպէտ քութեչի դեմ պատվաստումներ են կատարվում: Ռուս պրոֆեսոր Գաբրիէլովին գտել է մի միջոց, վորով յերեխաներին պատվաստում են քութեչի դեմ: Նրանով 3-5 անգամ սրսկում են մաշկի տակ: Նրա ազդեցութեան տակ մարդու որդանիզմը քութեչի հակաթույն է արտադրում: Քութեչի դեմ պատվաստված յերեխաները 2-3 անգամ քիչ են հիւանդանում, քան չպատվաստվածները: Իսկ յեթե պատվաստված յերեխաները վարակվում են քութեչով, այդ դեպքում նրանք ավելի թեթեւ են հիւանդանում և դրեթե յերբեք քութեչից չեն մահանում:

Քութեչի դեմ պատվաստումները կատարվում են

մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում և այլ յերկրներում. նրանք բավարար հետեւմանքներ են տալիս:

Այդ պատվաստումները նախապահպանում են հիւանդանալուց ընդամենը մեկ-մեկ ու կես տարով:

Իսկ ծաղկի ու դիֆտերիայի դեմ պատվաստումները նախապահպանում են յերեխաներին մի քանի տարով: Դրա համար հակաքութեւնային պատվաստումները կատարվում են այն դեպքում, յերբ քութեւն տա-բածման վտանգ կա դյուղում: Յեթե քութեւն հիւանդությունը սկսվել է հարեան դյուղում, առաժինը պարտավոր է անմիջապէս կազմակերպել բոլոր յերեխաների պատվաստումը: Սանկազորները պարտավոր են ողնել բուժ աշխատողներին այդ սրտկումները կատարելու դործում, կազմելով յերեխաների ցուցակները և հետեւել, վորպեսզի յերեխաները սրտկած չինեն չորս անգամ:

Դ Ի Ֆ Տ Ե Ր Ի Ա

Դիֆտերիան մանկական ամենածանր վարակիչ հիւանդություններից մեկն է: Դիֆտերիան, ինչպէս և քութեւնը, տարածված է բոլոր յերկրներում նա հայտնի յե յեղել դեռ շատ հին Ժամանակներից: Դիֆտերիայով հիւանդանում են առավելապէս յերեխաները:

Դիֆտերիայով ամենից շատ հիւանդանում են 1-ից մինչ 8 տարեկան յերեխաները: Ամենամեծ մահացությունը դիֆտերիայից նկատվում է նույնպէս փոքրահասակ յերեխաների մեջ: Հասակավորները հազվադէպ դեպքերում են հիւանդանում դիֆտերիայով և շատ հազվադէպ դեպքերում մահանում

նրանից: Այսպէս՝ դիֆտերիայից 100 մահացածներից մեծահասակներին ընկնում է 2 հոգի, իսկ յերեխաներին՝ 89 հոգի: Դիֆտերիայով կարելի յե հիւանդանալ տարւա բոլոր յեղանակներին, բայց ամենից հաճախ նրանով հիւանդանում են աչնանը և ձմռան սկզբին:

Մարդը դիֆտերիայով հիւանդանում է այն պատճառով, վոր նրա որդանիղմի մեջ ընկնում են դիֆտերիայի միկրոբները: Դիֆտերիայի միկրոբները ցուպիկի նման են: Այդ միկրոբն առաջին անգամ հայտնաբերել է դիտնական Լեֆֆլերը 1884 թվին, մանրադիտակով զննելով դիֆտերիայով հիւանդի բկանցքից վերցրած լորձը, ահա թե ինչու այդ ցուպիկը կոչվում է միկրոբը հայտնաբերող դիտնականի անունով՝ դիֆտերիայի կամ Լեֆֆլերյան ցուպիկ:

Դիֆտերիայի ցուպիկներն ամենից հաճախ ընկնում է բկանցքի մեջ և արմատավորվում բերանի և բկանցքի բարակ վարդապուշն լորձաթաղանթի մեջ: Այստեղ նրանք իրենց համար բարենպաստ միջավայր են դառնում և սկսում են բազմանալ:

Լորձաթաղանթի փոքրագուշն մասնիկները մահանում են և դիֆտերիայի միկրոբի հետ միասին բրկանցքում կազմում դորշավուն կամ դեղնադորշավուն փառ: Յեթե խոչորացուցցով ջննենք այդ փառի մի փոքրիկ կտորը այնտեղ մենք դիֆտերիայի ցուպիկներ կտեսնենք:

Դիֆտերիայի ցուպիկների աճման և բազմացման Ժամանակ նրանք դիֆտերիային շատ ուժեղ թույն են արտադրում: Այդ թույնն արյան միջոցով տարածվում

և մարդու ամբողջ որդանիղմի մեջ և առաջացնում է որդանիղմի ընդհանուր թունալորում:

Դիֆտերիայի ցուպիկը չափ կենսունակ է: Յեթե դիֆտերիայով հիվանդի բկանցքից վերցրած թաղանթը չորացնենք, դիֆտերիայի ցուպիկն այդ չորացրած թաղանթի մեջ կարող է ապրել շատ չաբաթներ և նույնիսկ ամիսներ:

Ինչպես և պայքարում մարդու որգանիղմը դիֆտերիայի վարակի դեմ.— Մեր որդանիղմը պայքարում է իր մեջ ընկած դիֆտերիայի միկրոբների և թույների դեմ: Նա հակաթույն է արտադրում դիֆտերիայի թույնի դեմ: Այդ հակաթույնը արյան միջոցով տարածվում է ամբողջ մարմնի մեջ և վոչնչացնում դիֆտերիայի վնասակար թույնի ազդեցությունը: Վոչ բոլորը, վորոնց որդանիղմի մեջ ընկել են դիֆտերիայի միկրոբները, հիվանդանում են դիֆտերիայով: Յեթե որդանիղմը բավականաչափ հակաթույն է արտադրում, ապա վերջինս վոչնչացնում է թույնի ազդեցությունը և մարդ չի հիվանդանում: Որդանիղմում թույնը հանդիպում է հակաթույնին, թույնը լնատաղերծ է արվում և դրա համար ել մարդը չի հիվանդանում:

Մենք գիտենք, վոր մեծերը հաղվազյուտ գեպըումն են հիվանդանում դիֆտերիայով, թեպետ նրանց քթի և բկանցքի մեջ հաճախ են ընկնում դիֆտերիայի միկրոբները: Դա առաջանում է նրանից, վոր մեծ մասամբ հասակավորների արյան մեջ բավականաչափ հակաթույն է գտնվում: Մեծահասակներից շատերը իրենց մանկություն հասակում հիվանդացել

են դիֆտերիայի այնքան, թեթեվ ձեվով, վոր դժվար է յեղել վորոչև այդ հիվանդությունը: Բայց և այնպես, դիֆտերիայի միկրոբների դեմ հակաթույնը արտադրվել է նրա արյան մեջ և յերբ հետադաշում դիֆտերիայի միկրոբները ընկնում են նրանց որդանիղմի մեջ, նրանք յերկրող աղամ չեն հիվանդանում. ահա այս և պատճառը, վոր մեծահասակները հաղվազյուտ գեպըումն են հիվանդանում դիֆտերիայով:

Ինչպես է ընթանում դիֆտերիան.— Ամենից շատ դիֆտերիայով վնասվում են բկանցքի և կոկորդի յորձաթաղանթները և ավելի պակաս՝ քթի, բերանի ու ականախ որդանների յորձաթաղանթները: Դիֆտերիան լինում է թեթև և ծանր:

Պատահում է, յերբ յերեխան վարակվելով դիֆտերիայով, հիվանդանում է այնքան թեթև, վոր չի պառկում, հիվանդությունը վուքի վրա յե տանում, նույնիսկ վոչ վոք չի կասկածում, վոր յերեխան հիվանդ է: Բայց յեթե վերցնենք այդ յերեխայի քթի կամ բկանցքի յորձը և դիտենք միկրոսկոպով, այդ յորձի մեջ դիֆտերիայի միկրոբներ կտեսնենք:

Յերբեմն դիֆտերիան շատ ծանր է ընթանում: Յերբ դիֆտերիայի միկրոբն ընկնում է յերեխայի բկանցքը, նա միանգամից չի հիվանդանում, այլ 2—7 օրից հետո: Նա վբոսնում, խաղում, սովորում և իրեն լավ է զգում: Բայց յերբ դիֆտերիայի միկրոբները բազմանալով թույն են արտադրում, յերեխան հիվանդանում է, զանդատվում ընդհանուր թուլությունից:

Այն տեղում, վորտեղ ամրացել են ցուպիկները, այսինքն բկանցքում, յերեխան ցալ է գլում և դըժ-վարությամբ է կուլ տալիս: Նրա բկանցքում կարմրություն և ուռուցք է առաջանում, նկատվում է սպիտակ-գորշավուն կամ դեղնավուն փառակալում: Ծնոտի տակ գտնված գեղձերը ուռչում են:

Դրա հետ միասին զիֆտերիայի թուլնն սկսում է իր վնասարար ներգործությունը յերեխայի վրա՝ որդանիզմով: Թուլնն արյան հոսանքով տարածվում է ամբողջ մարմնի մեջ և թունավորում է սիրտը, ներվային համակարգությունը, յերկվամները և այլ որդանները: Յերեխան տաքացնում է, առաջանում է գլխացավ, նա քնկոտ և ալարկոտ է դառնում, չի ուզում ուտել:

Յեթե զիֆտերիան թեթև է ընթանում և յեթե ժամանակին սկսվում է բուժումը, այդ դեպքում հիվանդի ջերմությունը մի քանի օրից հետո ընկնում է, փառ խորխի և թքի հետ հեռանում, գեղձերի ուռուցքն իջնում է և հիվանդն սկսում է առողջանալ:

Յեթե զիֆտերիան ընթանում է ծանր կերպով և բուժումը սկսվել է ուշացումով, այդ դեպքում փառ բկանցքում սովեւանում է, գեղձերն ել ավելի յեն ուռչում: Հիվանդության բացի թող արված ժամանակ զիֆտերիայով հիվանդի բերանից նեխված հոտ է դալիս, դրա համար ել վրձանք այդ հիվանդությունն անվանում են նեխված անդինա:

Ծանր դեպքում հիվանդը, սովորաբար չի ուզում և չի կարողանում ուտել: Նա շատ թուլանում է: Բայց պետք է հիշել, վոր նույնիսկ այդպիսի հիվանդներն

եկ անհրաժեշտ ձևով բուժելու դեպքում հնարավոր և փրկել:

Յերբեմն, առանձնապես ծծկեր յերեխաները հիվանդանում են հարբուխով, վորից հիվանդ յերեխան վոչ մի կերպ չի կարողանում աղատվել: Քթից արնախառն լորձ է հոսում: Այդ լորձը վնասում է քթի և չրթունքի մաշկը, առաջացնելով այնտեղ խոցեր: Այսպիսով հարբուխի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել: Նա շատ կասկածելի յե, վորովհետև այդպիսի հարբուխ լինում է քթի զիֆտերիայի ժամանակ: Հիվանդությունը պարզելու և անհրաժեշտ բուժումը նշանակելու համար, այդպիսի հարբուխով հիվանդ յերեխային պետք է անպայման ցույց տալ բժշկի:

Յերբեմն զիֆտերիայի միկրոբները բկանցքից և քթից անցնում են ավելի խորը՝ շնչափողի մեջ: Միկրոբները լորձաթաղանթի մահացած մասնիկների հետ միասին փառ են առաջացնում, վորը խանգարում է յերեխային շնչել: Թաղանթը խանգարում է ողի աղատ մուտքը և յերեխան այդպիսի դեպքերում՝ դժվարությամբ է շնչում: Նրա ձայնը դառնում է խոպոտ. առաջանում է բարձր հաջոցի նման հաղ: Յերեսը, չրթունքները և ամբողջ մաշկը կապտում է: Ներշնչելու և արտաշնչելու ժամանակ չվոցներ են լսվում: Յերեխան շնչապառ է լինում: Յերբեմն շնչափողը կարող է լրիվ փակվել և խեղդել յերեխային: Այդպիսի յերեխային առանց ուշացնելու բժշկի մոտ տանելու դեպքում հնարավոր է դեռ փրկել. կարելի յե նրան վիրահատել և վերացնել խեղդվելու վտանգը: Դիֆտերիան

առանձնապես վտանգավոր և իր բարդութիւններով: Դիֆտերիայի թուէնը կարող է դանադան կաթվածներ առաջացնել (պարավիշ, այսինքն, յերբ մարդ չի կարողանում ձեռքերը, վոտքերը շարժել):

Յերբեմն պատահում է, վոր դիֆտերիայից ստողջանալուց հետո առաջանում են՝ վոտքերի, ձեռքերի, ձայնալարերի, քիթ—լմպանային մկանների կաթվածներ: Քիթ—լմպանային մկանների կաթվածի ժամանակ, յերեսան դառնում և ոնդախոս (քիթ մեջ խոտող), իսկ ուտելիս և խոսելիս կերակուրն ընկնում է քիթ կամ շնչափողի մեջ: Այդպիսի կաթվածներ պատահում են յերեսաներին վոչ միայն դիֆտերիայի ծանր, այլ և թեթեւ դեպքերի ժամանակ: Առանձնապես վտանգավոր և սրտի կաթվածը: Յերբեմն պատահում են դեպքեր, յերբ յերեսան բոլորովին կադդուրվում է, դիֆտերիայից հետո ըստ արտաքին տեսքի բոլորովին առողջ է՝ վեր և կենում անկողնից, խաղում է, (վաղիվում և հանկարծ անսպասելի կերպով մահանում և սրտի կաթվածից:

Յերբեմն յերեսաների մոտ, վորոնք հիվանդացել են դիֆտերիայով, առաջանում է սրտի թուլութիւն, վորն ընդմիշտ մնում է: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր դիֆտերիան շատ ծանր, կյանքի համար վտանգավոր հիվանդութիւն է, մինչև անգամ այն դեպքերում, յերբ կարծես թեթեւ է ընթանում:

Ինչպես բուժել դիֆտերիան.— Յերեսաների մեծ թվով հիվանդացումները և մահացութիւնները դիֆտերիայից դեռ վաղուց հարկադրեցին դիտնականներին միջոցներ փնտրել դիֆտերիայի դեմ: Բայց բոլոր դի-

տահան հետադոտութիւնները յերկար ժամանակ մնացին ապարդիւն: Միայն այն ժամանակ, յերբ լավ ուսումնասիրվեց դիֆտերիա առաջացնող միկրոբը, հնարավոր դարձավ ուսումնասիրել նաև նրա արտադրած թուէնը: Իսկ յերբ հայտնի դարձավ թուէնը, հեշտացավ նաև հակաթուէն դտնելը:

1894 թվին Բերլին և Ռու դիտնականները դտան դիֆտերիան բժշկելու հաստատ միջոցը: Այդպիսի միջոց է հանդիսանում կենդանու արյունը, վորն իր մեջ հակաթուէն և պարունակում դիֆտերիայի դեմ: Այդ նպատակի համար ամենից պիտանին դուրս յեկավ ձիու արյունը: Վորպեսզի ձիուց ստացվի պատրաստի հակաթուէն ունեցող արյուն, նրա կաշի տակ սրբսկում են փոքր քանակութեամբ դիֆտերիայի թուէնը: Ձին դրանից դիֆտերիայով չի հիվանդանում, բայց նրա որդանիզմը սկսում է ուժեղ կերպով հակաթուէն արտադրել՝ սրեկված թուէնի դեմ պայքարելու համար: Վորոչ ժամանակից հետո նրան դարձյալ սրբսկում են այս անգամ ավելի մեծ քանակութեամբ դիֆտերիայի թուէն, վորի հետևանքով հակաթուէնի արտադրութիւնը նրա որդանիզմում ավելի յե ուժեղանում: Աստիճանաբար ձիուն սրեկում են ավելի և ավելի մեծ չափով դիֆտերիայի թուէն և ձիու որդանիզմն ել ավելի ու ավելի յե արտադրում հակաթուէնը: Յերբ ձիու արյան մեջ բալականաչափ հակաթուէն է կուտակվում, վերցնում են արյունը և նրանից պատրաստում դիֆտերիայի դեմ բուժելու միջոցը: Այդ դեղը կոչվում է հակադիֆտերիային շիճուկ:

Հակադիֆտերիային շիճուկով բուժումը՝ բուռր
յեթերներում հիանալի արդյունքներ տալից:

Այն ժամանակվանից, յերբ սկսեցին դիֆտերիա-
յի բուժման համար այդ շիճուկը դործածել, ամբողջ
աշխարհում դիֆտերիայից մահացությունը պակասեց
6 անգամ:

Հիվանդի փրկությունը կայանում և ժամանակին
բուժելու մեջ.—

Հակադիֆտերիային շիճուկով բուժումը միայն
այն դեպքումն է ոգուտ տալիս, յերբ սրսկումը կա-
տարվում է իր ժամանակին՝ աշխնքն հիվանդության
առաջին իսկ օրից: Վորքան շուտ կատարվի հիվանդ
յերեխայի սրսկումը, այնքան հեշտ է փրկել նրան
մահից: Դրա համար յուրաքանչյուր մայր պետք է
լավ խմանա ու հիշի, վոր յերբ յերեխան դանդաղում
է բկացավից, անմիջապես պետք է դիմել բժշկի:
Հարկավոր է, վոր բժիշկը վորոշի, թե յերեխան հի-
վանդ չէ՞ արդյոք դիֆտերիայով և հարկ յեղած դեպ-
քում, առանց ժամանակ կորցնելու սրսկի հակադիֆ-
տերիային շիճուկը: Հակադիֆտերիային շիճուկը վար-
քան շուտ պատվաստեն յերեխային, այնքան մեծ
կլիմի նրան մահից և բարդություններից փրկելու
հույսը:

Այդ բանը մենք տեսնում ենք ստորևի բերված
թվերից: Դիֆտերիայով հիվանդացած և հիվանդու-
թյան սկզբից տարբեր ժամանակներում շիճուկով
բուժված ամեն մի 100 հոգուն ընկնում է մահացու-
թյուն՝

Շիճուկի սրսկման ժամանակը Մահացածների թիվը

Հիվանդության 1—ին օրը 7 մարդ

Հիվանդության 2—րդ օրը 8 մարդ

Հիվանդության 3—րդ օրը 13 մարդ

Հիվանդության 4—րդ օրը 17 մարդ

Հիվանդության 5—րդ օրը 23 մարդ

Հիվանդության 6—րդ օրը և ավելի ուշ 27 մարդ

Բոլորը պետք է դիտենան, վոր դիֆտերիայով հի-
վանդացած յերեխային կարելի չէ փրկել մահից, յեթե
բուժումը ժամանակին կատարվի:

Հաստատ պետք է խմանալ, վոր շիճուկային բուժ-
ման մեկ օրվա ուշացումը կարող է յերեխայի մահվան
պատճառ դառնալ: Հակադիֆտերիային շիճուկը պետք
է սրսկել հիվանդության հենց առաջին օրը:

Ինչպես է փոխանցվում դիֆտերիայի վարակը.—
Դիֆտերիայի վարակը, աշխնքն միկրոբները, արտա-
դատվում են հիվանդի լորձի և լորձաթաղանթի թա-
րախի միջոցով: Կոկորդի, բկանցքի և քթի դիֆ-
տերիայի ժամանակ, միկրոբը տարածվում է ոգում՝
հիվանդի խորխի և թքի լորձի մանր կաթիլների հետ
միասին, վորոնք դուրս են թռչում հիվանդի բերանից
և քթից, հիվանդի հազալու, փռչալու կամ խոտելու
ժամանակ: Միկրոբներն ընկնում են նաև հիվանդի
մոտ գտնված պատին, նրա դործածած ամանեղենին,
հիվանդի կողմից ոգտագործված և նրա մոտ գտնված
իրերի և անկողնի վրա: Ուղի միջոցով դիֆտերիայի
միկրոբները նստում են սենյակում գտնվող խաղա-
լիքների, հագուստեղենի, սննդամթերքների և այլոց

վրա: Յերբ դիֆտերիայի միկրոբն ընկնում է կաթի մեջ, այնտեղ նա վոչ միայն պահպանում է իր գոյությունը, այլ և բազմանում է: Սովորաբար դիֆտերիայով հիվանդանում են հիվանդի հետ շփում ունենալուց, նույնպես և իրերից, վորոնք դառնում են հիվանդի սենյակում, կամ այն անձնավորություններից, վորոնք դառնել են հիվանդի յեղած սենյակում:

Մեծահասակները դիֆտերիայով հազվադեպ են հիվանդանում: Բայց յերեխաները, վորոնք ապրում են նույն սենյակում կամ ընտկարանում, վորտեղ դառնում է հիվանդը՝ հեշտությամբ են վարակվում և հիվանդանում: Հաճախ է պատահում, վոր ընտանիքում, վորտեղ հիվանդացել է մեկ յերեխան, հիվանդանում է նաև մյուս յերեխաները:

Դիֆտերիայի միկրոբը բավական յերկար ժամանակ ապրում է իրերի, խաղալիքների, փռու մեջ և կեղտոտ անկյուններում, վորտեղ արելի ճառագայթները հազիվ են ընկնում: Մենք մի անգամ ստուգեցինք այդ: Գնալով մի տուն, վորտեղ թախտի վրա պառկած էր դիֆտերիայով հիվանդը, վերմակի փոխարեն ծածկված կիսամուշտակով, մենք վերցրինք բամբակի փոքր կտորներ, հարմարեցրինք յերկաթալարի վրա, նրանցով սրբեցինք պատը, կիսամուշտակը, հատակը, վորտեղ թքել էր հիվանդը: Այդ բամբակի կտորները տեղավորեցինք ապակյա խողովակի մեջ և տարանք հիվանդանոց: Լաբորատորիայում քննության յենթարկվեց այդ բամբակը և նրանում հայտնաբերվեցին դիֆտերիայի բազմաթիվ միկրոբներ:

Յերբ հատակը ավելում են չոր ավելով կամ խո-

ղանակով, կամ ուտում, խմում են նույն ամանից, վորից կերել կամ խմել և հիվանդը, կամ հաղնում են այն հագուստը, վորին հիվանդը ձեռք է տվել՝ դիֆտերիայի միկրոբը կարող է ընկնել բերան, ու ճիթը, առաջացնել դիֆտերիա, նույնիսկ տանը հիվանդ լինելուց յերկար ժամանակ անց:

Դիֆտերիայի վարակը փոխանցվում է սննդի միջոցով, վորի մեջ ընկել է միկրոբը, առանձնապես կաթի միջոցով, վորտեղ կարող են վոչ միայն ապրել նրանք այլ և բազմանալ: Յեթե դիֆտերիայով հիվանդացել է յերեխան և մայրը խնամում է նրան, իսկ հետո առանց տաք ջրով և ոճառով ձեռքերը լվանալու, գնում է կովը կթելու, նա իր չլվացած ձեռքերով վարակում է կաթը դիֆտերիայի միկրոբներով: Առողջ յերեխաները խմելով այդ վարակված կաթը, կարող են հիվանդանալ դիֆտերիայով:

Մենք տեսնում ենք, վոր դիֆտերիայով հիվանդի չուրջն առեն տեղ ջրված են դիֆտերիայի միկրոբները և ինքը հիվանդը վարակի տարածման գլխավոր աղբյուրն է:

Յերբ դիֆտերիայով հիվանդն առողջանում է, դիֆտերիայի միկրոբները միանգամից չեն անհետանում նրա բկանցքից ու քից: Յերեխան արդեն առողջ է, վազվիւում, խաղում է մյուս յերեխաների հետ, բայց նրա բկանցքում և քիթում դեռ միկրոբներ կան և նա վտանգավոր է մյուս յերեխաների համար:

Ահա թե ինչու բժիշկները դիֆտերիայից առողջացած յերեխաներին չեն թողնում անմիջապես տուն տանելու, այլ վորոշ ժամանակ պահում են հիվանդանոցում:

Յեթե հիվանդանոցում լաբորատորիա կա, հիվանդի քթի և բկանցքի լորձը հաճախակի քննության են յենթարկում: Յեթե նրա արտադրած լորձի մեջ դիֆտերիայի միկրոբներ են գտնում, դուրս չեն գլրում հիվանդանոցից տուն տանելու, քանի վոր նա տանը կարող է վարակել առողջներին: Յեթե հիվանդանոցում լաբորատորիա չկա, հիվանդին սովորաբար դուրս են դրում առողջանալուց 2 շաբաթ հետո, վորովհետև այդ ժամանակից հետո առողջացածների մոտ հազվադեպ դեպքում կարող են գտնել դիֆտերիայի միկրոբներ: Այդ ժամանակից հետո առողջացած հիվանդը սովորաբար վտանգավոր չէ չընդադալի համար:

Ինչպես խնամել դիֆտերիայով հիվանդին և ինչպես պաշտպանել վարակումից մյուս յերեխաներին. — Ենթացիկ, վոր դիֆտերիայով հիվանդին անհրաժեշտ է տեղափոխել հիվանդանոց և պահել նրան այնտեղ մինչև լրիվ առողջանալը: Յեթե հիվանդանոցում վարակիչ բաժանմունք չկա, կամ վորեմէ պատճառով անհնարին է հիվանդին հիվանդանոցում տեղավորել, այդ դեպքում հիվանդին հակադիֆտերիային չիճուկ սրսկելուց հետո պետք է անչեղորեն կիրառել հիվանդի խնամքի վերաբերյալ բժշկի տված բոլոր ցուցումները:

Առաջին հերթին հիվանդին պետք է առանձնացնել առողջներից: Ամենից լավ է մեկուսացնել առանձին սենյակում: Յեթե տունը բաղկացած է յերկու մասից, այդ դեպքում հիվանդին պետք է տեղավորել այն մասում, վորտեղ վոչ վոք չի ապրում: Այն սենյակը,

վորտեղ պառկած է դիֆտերիայով հիվանդը, պետք է ընդարձակ և մաքուր լինի: Բոլոր ավելորդ իրերը պետք է հեռացնել սենյակից. բոլոր հագուստները, սննդամթերքները և այլ իրերը չպետք է լինեն այն սենյակում, վորտեղ գտնվում է դիֆտերիայով հիվանդը: Վորքան շատ իրեր գտնվի սենյակում, այնքան վատ է հիվանդի համար, այնքան դժվար է նրան չնչել: Հիվանդին անհրաժեշտ է թարմ, մաքուր ող: Նրա համար պետք է պատրաստել մաքուր անկողին: Ներքնակը և բարձը ավելի լավ է լցնել ծղոտով կամ խոտով:

Հիվանդը դիֆտերիայից առողջանալուց կամ մահանալուց հետո, ներքնակի ծղոտը կամ խոտը պետք է այրել, իսկ ներքնակի և բարձի յերեսները յեռացնել և լվանալ: Պետք է խստությամբ հետևել, վոր հիվանդն ուր պատահի չթքի ու քիթը չմաքրի: Հիվանդ վոքը յերեխաներին խնամողները պարտավոր են մաքուր շորի կտորով սրբել հիվանդի քիթն ու բերանը և հետո այդ շորի կտորները այրել վառարանում: Ավելի մեծահասակ յերեխաների մոտ պետք է դնել վորեմէ աման, վորտեղ հիվանդը կարողանա թքել: Այդ ամանի մեջ անհրաժեշտ է լցնել սկիպիդար կամ կուսըր և այնուհետև թափել այնպիսի տեղ, վոր միկրոբները չընկնեն վորևէ առարկայի կամ հատակի ու պատերի վրա: Դրա համար պետք է ունենալ կավե աման: Հիվանդի առողջանալուց հետո այդպիսի ամանը հնարավոր է կտրել և կտորները դցել այնպիսի տեղ, վոր յերեխաների ձեռքը չընկնի: Այդ ամանը կաբելի յե նաև այրել վառարանում: Այն սենյակում,

վորտեղ պատկած ե ղիֆտերիայով հիվանդը, ամուսնը պետք ե բաց թողնել լուսամուտները, իսկ ձմռանը Յ անդամ վառարանը վառել և բանալ լուսամուտներն ու դուռը նախապես լավ ծածկելով հիվանդին:

Հիվանդին պետք ե խամի միջոց մեկ հուզի: Այդ սենյակում բացի խնամողից, վոչ վոք չպետք ե մտնի: Կերակուրը պետք ե բերել այդ սենյակը և ախտեղից վոչ մի աման կամ իր չպետք ե դուրս տանել:

Յեթե բնակարանը մեկ սենյակից ե, այդ դեպքում մյուս յերեխաներին պետք ե տեղավորել այն աղբահանների կամ ծանոթների մոտ, վորոնք յերեխաներ չունեն: Յեթե հնարավոր չե այդպես անել, անհրաժեշտ ե հիվանդի անկողինը անջատել առողջներից ախպես, ինչպես ասված ե քուլթելին վերաբերվող դիրքում:

Դիֆտերիայով հիվանդ յերեխային Յ չաբաթ պետք ե առանձին սրահել մյուս յերեխաներից: Յերբամն դժվար ե կատարել այդ: Յերեխան առողջ ե արդեն յցանկանում ե վազվել, խաղալ ուրիշ յերեխաների հետ, մենակ ձանձրանում ե, բայց ավելի լավ ե ձանձրանա: Զպետք ե մոռանալ, վոր առողջանալուց հետո ևս նա կարող ե վարակել ուրիշ յերեխաների, վորովհետե նրա բխանցքում և քթում կարող են գտնվել ղիֆտերիայի միկրոբներ:

Այն տնից, վորտեղ ղիֆտերիայով հիվանդ կա, չի կարելի յերեխաներին մսուր, մանկասրտեղ, դպրոց ուղարկել: Յերեխաներն իրենց բխանցքում և հադուստի հետ կարող են միկրոբը տեղափոխել ախտեղ և վարակել առողջ յերեխաներին:

Վարակը աղբահանների, հարելանների և ամբողջ կոլտնտեսության մեջ չտարածելու նպատակով, անհրաժեշտ ե, վոր կողմնակի վոչ մի մարդ, յերեխա կամ մեծահասակ չմտնի այն տունը, վորտեղ պատկած ե ղիֆտերիայով հիվանդը:

Մենք պետք ե հիշենք, վոր յերբ միկրոբներն ընկնում են մեծահասակների վրա, նրանք կարող են չհիվանդանալ, բայց կարող են վարակել յերեխաներին:

Դիֆտերիայով հիվանդի դռանը պետք ե փակցնել հայտարարություն «Այստեղ ղիֆտերիայով հիվանդ կա»: Այդ հայտարարությունը կղղուչացնի ամենքին, վոր չպետք ե մտնել այդ տունը:

Հիվանդի տնից, վոչ հիվանդի հայրը, վոչ մայրը և վոչ ել յերեխաները չպետք ե դնան հարելանների մոտ, քանի դեռ պատկած ե ղիֆտերիայով հիվանդ յերեխան և քանի դեռ ախտահանման (դեղինֆեկցիայի) չեն յենթարկել սենյակն ու նրա մեջ յեղած բոլոր իրերը: Մինչև ախտահանելը՝ սենյակից վոչ մի իր չպետք ե դուրս բերվի, վորոնց վրա կարող ե ընկած լինել ղիֆտերիայի վարակը:

Լինում են դեպքեր, յերբ ղիֆտերիայով հիվանդի մահանալուց հետո, նրա իրերը նվիրում են ուրիշ յերեխաների: Այդ բանը վոչ մի դեպքում չպետք ե անել, վորովհետե այդ իրերի վրա գտնվում են ղիֆտերիայի միկրոբներ, վորոնք կարող են վարակել ուրիշ յերեխաների:

Յեթե յերեխան մահացել ե ղիֆտերիայից, նրա ղաղաղը պետք ե մեխել. վոչ մի դեպքում չպետք ե թույլ տալ, վոր յերեխաները ձեռք տան և համբուրեն նրան:

Ինչպես վոչնչացնել դիֆտերիայի վարակը հիվանդի առաջանալուց հետո.—Յերբ հիվանդին տեղափոխում են հիվանդանոց, կամ հիվանդն առողջանում է տանը, կամ մահանում, պետք է վոչնչացնել այնտեղի վարակը, ինչպես նաև ախտահանել բոլոր այն իրերը, վորոնք ողտադորձվել և դոնւիել են հիվանդի մոտ,

Ախտահանումը (դեզինֆեկցիան) ավելի վորակով և հեշտ կարող է կատարել դեզինֆեկտորը, սանիտարը՝ բժշկի ղեկավարությամբ և ցուցումներով։ Այն դեպքերում, յերբ ախտահանությունը հնարավոր չէ կատարել բժշկական աշխատողների միջոցով, պետք է շենքի և իրերի ախտահանումը կատարել սեփական ուժերով։ Բոլոր եօանադին, անպետք իրերը, խաղալիքները, փալանները, ներքնակի, բարձի ծղոտը, պետք է անպայման այրել։ Հիվանդի սպիտակեղենը ինչպես նաև և նրա խնամողի և նրա մոտ յեղած այլ անձանց սպիտակեղենը, յեռացնել մոխրաջրով։ Յեռացնելու ժամանակ դիֆտերիայի միկրոբները վոչնչանում են։ Ավելի դժվար է վարակը վոչնչացնել մուշտակների, փետրաբարձերի, բարձերի և բրդե հագուստեղենի վրայից։ Այդ իրերը պետք է հեռացնել այն սենյակից վորտեղ դոնւում է դիֆտերիայով հիվանդը։ Բայց յեթե իրերը մացել են սենյակում, յեթե հիվանդին ծածկել են մուշտակով այն ժամանակ, յերբ դեռ հայտնի չի յեղել, վոր նա հիվանդ է դիֆտերիայով, անհրաժեշտ է այդ առթիւ հայտնել բժշկին, վորը ցուցումներ կտա՝ թե ինչպես ախտահանել այդ իրերը։ Յեթե հիվանդանոցում

կա ախտահանիչ կախան, իրերը կարելի յէ ուղարկել այնտեղ ախտահանելու։ Իրերն առանց ախտահանելու չի կարելի տանել բնակելի շենք։

Այն ամանները, վորոնցով հիվանդը կերել է ու խմել, պետք է լաւ մաքրել՝ յեռացնել մոխրաջրով։ Հատակը, պատերը, սեղանները պետք է յեռացրած ջրով լվանալ, քերել դոնաւով, վորից հետո ուշադիր կերպով լվանալ ու մաքրել ջնջոցով։ Պետք է խնամքով մաքրել ամբողջ սենյակը, նստարանները, սեղանները, շարժել իրերը տեղերից, վորպեսզի վոչ մի տեղ վոչու և սարդի վոսոյաններ չմնան, վորովհետեւ մութ և կեղտոտ անկյուններում և տեղերում դիֆտերիայի միկրոբը կարող է շատ յերկար ապրել։ Սենյակը մաքրելուց և լվանալուց հետո անհրաժեշտ է լաւ ողափոխել։

Ավելի հեշտ է կանխել դիֆտերիան, քան բուժել այն.—Ինչպես մենք տեսանք, դիֆտերիան մեծ վտանգ է սպառնույց վոչ միայն յերեխայի առողջությանը, այլ և նրա կյանքին։ Մեկ յերեխայի հիվանդությունը կարող է յերկրորդի, յերրորդի, յերբեմն ել շատ տաքնյակ յերեխաների հիվանդանալու պատճառ դառնալ։ Այդ դեպքերում առաջանում ու զարդանում է դիֆտերիայի համաճարակը, վորը յերբեմն ընդգրկում է բոլոր յերեխաներին, իսկ յերբեմն ել ընդգրկելով ամբողջ շրջաններ։

Բոլորի համար պարզ է, վոր ավելի լաւ ու հեշտ է կանխել հիվանդությունը, քան բուժել հիվանդներին և պաշարել համաճարակի դեմ, վորն արդեն ընդգրկ-

կել և հարցուրավոր և հաղարավոր յերեսաների: Դիֆտերիան բուժելը մենք վաղուց ենք սովորել: Դիֆտերիային չիճուկով բուժելը պակասեցրեց մահահացութունը դիֆտերիայից, բայց չվռնչացրեց այդ հիվանդութունը: Յերեսաներն ամբողջ աշխարհում չարուհակում են հիվանդանալ տասնյակ և հարյուր հազարներով, և հազարներով մահանում դիֆտերիայից: Պետք է դտնել այնպիսի միջոց, վորը կանխեր հենց դիֆտերիայով հիվանդանալը: Այդ միջոցը գտնված է միայն վերջին տարիներս. դա դիֆտերիայի դեմ պատվաստելն է:

Ինչումն են կայանում դիֆտերիայի դեմ պատվաստումները. — Մենք դիտենք, վոր վոչ բոլոր մարդիկ են հիվանդանում դիֆտերիայով վորոնց որդանից մի մեջ է ընկել դիֆտերիայի վարակը: Դիֆտերիայով չեն հիվանդանում նրանք, վորոնց արյան մեջ հակաթույն կա դեֆտերիայի թույնի դեմ: Բայց վոչ բոլոր մարդկանց մոտ կարող է դեֆտերիայի հակաթույն արտադրվել: Պետք է ոգնել մարդու որդանիդմին, վոր պետդի նա արտադրի այդ հակաթույնը:

Գիտնական Բերլինգը, վորը դտավ դիֆտերիային չիճուկը, գտավ և այն միջոցը, վորն ոժանդակում է մարդու որդանիդմին դիֆտերիայի դեմ հակաթույն արտադրելուն: Նա յերկար ժամանակ ստուգեց այդ միջոցը կենդանիների վրա և համոզվեց, վոր նա վոչ մի վնաս չի կարող հասցնել մարդու որդանիդմին, վոր նա միայն ողուտ է տալիս: Այդ ժամանակ նա վորոշեց այդ պատվաստումները փորձել մարդկանց վրա: Նա կանխիչ պատվաստումներ կատարեց մի քանի հա-

զար յերեսաների վրա: Պատվաստումներից հետո յերեսաները չհիվանդացան դիֆտերիայով, թեև նրանք գտնվելիս են յեղել այն սենյակում, վորտեղ դիֆտերիայով հիվանդ է յեղել և նրանց մարմնի մեջ ընկել եր դիֆտերիայի միկրոբը:

Այն դեպքերում, յերը պատվաստված յերեսաներից հիվանդանում եյին դիֆտերիայով, նրանց հիվանդութունը շատ թեթև և առանց բարդութունների եր ընթանում:

Մի ուրիշ դիտնական, ավելի կատարելագործեց այդ միջոցը և այժմ հակադիֆտերիային պատվաստումները շատ լավ արդյունքներ են տալիս:

Ներկայումս ամբողջ աշխարհում դիֆտերիայի դեմ պատվաստված են 5 միլիոնից ավելի յերեսաներ: Դիֆտերիայի համաճարակների ժամանակ նկատված է, վոր այն չըջաններում, վորտեղ կատարված են հակադիֆտերիային պատվաստումները, դիֆտերիայի հիվանդութունը բոլորովին, կամ համարյա բոլորովին դադարել է: Իսկ այն չըջաններում, վորտեղ պատվաստումներ չեն կատարվել, այնտեղ դիֆտերիան դաժանորեն իր հունձն է արել:

Վերջին տարիների ընթացքում՝ Մոսկվայի մարդում, Լենինգրադում, և Միուսյան ուրիշ քաղաքներում և չըջաններում դիֆտերիայի դեմ պատվաստված են հարյուր հազարավոր յերեսաներ. հաստատված է, վու այդ քաղաքներում և չըջաններում ավելի քիչ է դիֆտերիայի հիվանդութունը, քան այն վայրերում, վորտեղ պատվաստումներ չեն կատարված: Նույնը Սմերիկայում, Ֆրանսիայում և մյուս յերկրներում, վորտեղ կատարվել են պատվաստումներ:

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում պատմաստուծներ կա-
տարվում են չափ լայն շտեմերով: Մեզ անհրաժեշտ է
հասնել այն բանին, վոր հակադիֆտերիային պատ-
վաստուծների յենթարկվեն մինչև 8 տարեկան բոլոր
յերեխաները, այն ժամանակ մենք չենք ունենա դիֆ-
տերիայի համաճարակներ, վորոնք տանում է մեզ հա-
մար պիտանի, թանկագին հաղարավոր մատող կյան-
քեր:

Ինչ պետք է անի կոլտնտեսականը դիֆտերիայի
կանխելու համար.—Բոլոր կոլտնտեսականները, ա-
ռանձնապես կոլտնտեսուհի մայրերը պետք է ամենա-
ակտիվ մասնակցութունն ունենան դիֆտերիայի դեմ
պայքարի գործում: Ամենից առաջ, պետք է սովորեն հե-
տեկել իրենց յերեխաների առողջությանը: Յեթե բուկը
ցավում է, պետք է անպայման դիմել բժշկի: Յեթե բը-
ժիշկ չկա, վոչ վոր չի կարող վորոշել, թե ինչով է
հիվանդ յերեխան: Չե՞ վոր յերեխայի բուկը ցավում
է տարբեր հիվանդությունների ժամանակ և բուժումը
տարբեր հիվանդություններից, տարբեր է լինում:
Վորոշել թե ինչով է հիվանդ յերեխան և ինչպի-
սի բուժում է նրան անհրաժեշտ, կարող է միայն
բժիշկը: Դիֆտերիայի դեմ պայքարի գործում մեծ
աշխատանք պետք է տանեն կոլտնտեսային սանիտա-
րները: Նրանք պետք է ողնեն կոլտնտեսականի հիվան-
դացած յերեխային շտապ մոխադրելու հիվանդանոց՝
բժշկի մոտ, կամ բժշկին տուն բերել՝ հիվանդին մոտ:
Հիվանդին չրջապատողները և հիվանդ յերեխայի հա-
րապատները, վորոնք ապրում են նրա հետ, չրջապա-

տի համար վտանգավոր են այն պատճառով, վոր
նրանց հաղուտի, ձեռքերի և մազերի վրա գտնվում
են միկրոբներ, վորոնք նրանց վրա ընկել են դիֆ-
տերիայով հիվանդից: Նրանք կարող են վարակել ու-
րիշ յերեխաների:

Դրա համար այն անձնավորությունները, վորոնք
ապրում են նույն սենյակում, վորտեղ գտնվում է
հիվանդը և նրա խնամակալները չպետք է դնան հա-
սարակության կուտակման վայրեր, ինչպիսիք են ճա-
շարան, խորճիթ-ընթերցարան, ժողովներ և այլն:

Պետք է բացատրել սակավ դիտակից կոլտնտեսա-
կաններին, թե ինչու յե անհրաժեշտ դիֆտերիայի
դեմ պայքարի այս կամ այն միջոցի կիրառումը և
թե ինչ պետք է անեն նրանք դիֆտերիայի տարածու-
մը կանխելու համար:

Յեթե բժիշկը կհաստատի, վոր յերեխան հիվանդ
է դիֆտերիայով, հարկավոր է կոլտնտեսային ակ-
տիվից առանձնացնել վորեւէ մեկին, անդամակ ընտա-
նիքից, և հանձնարարել հետեկու այն բանին, վորպես
դի կատարվեն այն բոլոր կանոնները, վորոնց մասին
գրված է այս գրքի մեջ, այսինքն, վորպեսզի հիվանդին
առանձնացնեն առողջից, վորպեսզի հիվանդ ունե-
ցած տնից առողջ յերեխաները մսուր, դպրոց և ուրիշ
մանկական հիմնարկներ չգնան, չհանդիպեն և չխաղան
ուրիշ յերեխաների հետ: Պետք է այնպես անել, վոր-
պեսզի այդ տնից վոչ վոր չգնա հասարակական տե-
ղեր, ժողովներ, ճաշարան և այլն: Հարկավոր է,
վորպեսզի հիվանդ ունեցող ամբողջ ընտանիքի համար
ճաշարանից բերված ճաշը լցվի նրանց ամանների մեջ
առանց տուն մտնելու:

Յերբ հիվանդն առողջացալ, անհրաժեշտ է հետե-
լել, թե ինչպես է կատարվում ակտահանումը, սեն-
յակի և իրերի մաքրումն ու հավաքումը: Անհրաժեշտ
է, վոր ամեն ինչ ուշադրութեամբ լվացվի և մաքրվի:
Հարկավոր է, վորպեսզի, թե ինքը հիվանդը՝ առող-
ջանալուց հետո, և թե բոլոր նրա հետ ապրողները
յուրանան: Առողջ յերեխային դիֆտերիայից առողջա-
ցած յերեխայի մոտ կարելի է թողնել վնչ չուտ, քան
3 շաբաթ անց հիվանդանալու սկզբից:

Անհրաժեշտ է, վորպեսզի բոլոր կոյտնտեսական-
ներն ակտիվ մասնակցութիւն ունենան դիֆտերիայի
դեմ տարվող պատվաստումների գործին: Չպետք է
սպասել դիֆտերիա հիվանդութեան յերեխայուն կող-
տընտեսութեան մեջ, վորպեսզի նոր սկսեն յերեխանե-
րի պատվաստումը: Պետք է հասնել այն բանին, վոր-
պեսզի 6 ամսականից և ավելի տարիք ունեցող բոլոր
յերեխաները պատվաստված լինեն դիֆտերիայի դեմ:
Դիֆտերիայի դեպքեր յերեխայունց հետո, պատվա-
ստումներ անցկացնելն արդեն ուշ կլինի: Յերեխաներին
պետք է պատվաստել 2—3 անգամ (ինչպես ցույց կտա
բժիշկը): Դրա համար հարկավոր է 3-ից մինչև 5 շա-
բաթ: Բացի դրանից, պետք է անցնի մոտ մեկ ամսի
չափ մինչև վոր պատվաստումները ցույց կտան իրենց
ազդեցութիւնը և յերեխայի արդան մեջ յերեխան կգա
բաղականաչափ դիֆտերիայի հակաթույն:

Յերբ հիվանդանոցը հայտնում է գլուխորհրդի
նախադահին, թե դիֆտերիայի դեմ պատվաստումներ
կատարելու համար բուժ. աշխատող է դալու, կոլ-
տընտեսային սանիտարները պետք է առանձնացնեն

հատուկ բրիգադա, այդ աշխատողին ոգնելու համար:
Բրիգադան պետք է պատրաստի համապատասխան
չենք, վորտեղ կատարվելու յեն պատվաստումները,
կազմի 1 տարեկանից բարձր տարիք ունեցող բոլոր
յերեխաների ցուցակը, վորոնց պետք է պատվաստել:

ԿԱՐՄՐՈՒԿ

Կարմրուկը ամենատարածված մանկական վարա-
կիչ հիվանդութիւնն է: Կարմրուկով վարակվում և
հիվանդանում են համարյա բոլոր մարդիկ, վորոնց
որդանիքի մեջ ընկնում են այդ հիվանդութեան
միկրոբները:

Մարդը, վորը մի անգամ հիվանդացել է կար-
մրուկով, յերկրորդ անգամ նրանով չի հիվանդանում:
Դա բացատրվում է նրանով, վոր նրա արյան մեջ ընդ-
միշտ պահպանվում է այն հակաթույնը, վորը ար-
տադրել է նրա որդանիքը՝ կարմրուկով հիվանդա-
ցած ժամանակ:

Կարմրուկով կարող են հիվանդանալ բոլոր հա-
սակի մարդիկ, թե մեծերը և թե յերեխաները, բայց
քանի վոր կարմրուկը շատ տարածված հիվանդու-
թիւնն է և շատերը հիվանդանում են մանկակաճ հա-
սակում, այդ պատճառով էլ մեծերը հազվադէպ
դեպքում են հիվանդանում կարմրուկով, և կարմրու-
կը մանկակաճ վարակիչ հիվանդութիւնն է համար-
վում:

Վորովհետև կարմրուկով սովորաբար հիվանդա-
նում են համարյա բոլորը, դրա համար շատերը կար-
ծում են, թե կարմրուկը թեթև հիվանդութիւնն է և
վոր ամեն մի յերեխա պետք է անպատճառ հիվանդա-

նա նրանով:

Թե մեկը և թե մյուսը սխալ են: Կարմրուկը բուրովին թեթև հիվանդություն է, առանձնապես յերեխաների համար. հաճախ յերեխաները մահանում են նրանից:

Պետք է լավ հիշել, վոր ավելի մեծահասակ յերեխաները համեմատաբար հեշտ են տանում կարմրուկը, քան ավելի փոքրահասակները: Յերեխան վորքան ուշ հիվանդանա կարմրուկով, այնքան լավ է նրա համար: Մի քանի դյուլերում դեռ մնացել է հետեվյալ սովորությունը՝ յեթե ընտանիքում կարմրուկով հիվանդացել է 6—7 տարեկան մի յերեխա, ապա նրա կողքին, նրա անկողնու վրա դնում են ուրիշ փոքր յերեխաներ, վորպեսզի նրանք ել վարակվեն և հիվանդանան կարմրուկով: Այդպիսի դեպքերում պատահում է, վոր մեծահասակ յերեխան, վորպես ավելի դիմացկուն, կարմրուկը հեշտությամբ և անցկացում և առողջանում, իսկ մեկ տարեկան յերեխան, շատ ծանր է հիվանդանում կարմրուկով և շատ դեպքերում՝ մահանում: Վորքան փոքր է յերեխան, այնքան նրա համար մեծ է մահանալու վտանգը, յեթե նա հիվանդացել է կարմրուկով:

Ճիշտ է և այն կարծիքը, թե կարմրուկով պետք է հիվանդանան ընդհանրապես բոլոր յերեխաները: Մեծերի մեջ կան շատերը, վորոնք կարմրուկով չեն հիվանդացել:

Կարմրուկը չի կարելի թեթև հիվանդություն համարել. նրանից ամեն տարի շատ յերեխաներ են մա-

հանում: Այսպես որինակ՝ ամբողջ Յեվրոպայում (բացի հին Ռուսաստանից և Բալկանյան պետություններից) 1900 թվից մինչև 1910 թվը կարմրուկով մահացել է 700-167 մարդ:

Մոսկվայում 6 տարվա նըթացքում՝ 1910 թվից մինչև 1916 թ. կարմրուկից մահացել է 6676 հոգի:

Կարմրուկից առանձնապես շատ են մահանում 1-ից մինչև 2—3 տարեկան յերեխաները:

Մի դիտնական հաշվել է, վոր կարմրուկով հիվանդ ամեն 100 հոգուց մահացել են կյանքի առաջին տարում—31 հոգի, յերկրորդ տարում—14 հոգի, յերրորդ տարում—4 հոգի, չորրորդ տարում 2 հոգի, իսկ հինգերորդ տարում մահացություն դեպքեր հազվադեպ են յեղել: Պարզ է, վոր փոքրահասակ յերեխաներին պետք է պաշտպանել կարմրուկի վարակից:

Հիվանդություն ընթացքի համար շատ մեծ նշանակություն ունեն այն պայմանները, վորոնց մեջ ապրում են յերեխաները:

Այնտեղ, վորտեղ մարդիկ ապրում են համախմբված, նեղվածության և կեղտոտության մեջ և դուրսում են կյանքի ծանր պայմաններում, այնտեղ մահացությունը կարմրուկից շատ ավելի մեծ է լինում:

Այսպես որինակ՝ Վիեննայում (Ավստրիա), վորտեղ չքավորները բնակվում են հատուկ թաղամասերում, այնտեղ ամեն 100 կարմրուկով հիվանդից մահացել է 11 հոգի: Նույն այդ թաղամասի ունեվոր թաղամասերում ամեն 200 հիվանդից մահացել է միայն 1 հոգի, այսինքն մահացությունը չքավոր թաղամասերում 22 անգամ ավելի յե յեղել, քան հարուստ թա-

դամասերում: Համբուրգում (Գերմանիա) չքավոր
թաղամասերում մահացությունը կարմրուկից 12 ան-
գամ ավելի յե յեղել, քան հարուստ թաղամասերում:

Մեր յերկրում, սոցիալիզմի յերկրում, վորտեղ
այլևս չկան չքավորների և հարուստների թաղամա-
սեր, վորտեղ տարեց-տարի լավանում են աշխատաւո-
րության նյութական և կենցաղային պայմանները,
մահացությունը կարմրուկից պակասում է և մոտա-
պազայում մենք նրան վերջնականապես կվերացնենք:

Ինչպես է ընթանում կարմրուկը. — Յերբ կարմը-
րուկի միկրոբներն ընկնում են յերեխայի որդանիղ-
մի մեջ, յերեխայն 10 իսկ յերեմն ել 28 որ արտա-
քին տեսքով առողջ է յերեւում: Մենք դեռենք, վոր
դա հիվանդության դադանի շրջանն է: Սովորաբար
10 որից հետո սկսվում են յերեման դալ հիվան-
դության նշանները՝ յերեխայի ջերմաստիճանը բար-
ձրանում է, սկսվում է հարբուխ: Նա սկսում է
փուշտալ, ձայնը դառնում է խոպոտ, սկսվում է
հաշոցի նմանվող չոր կոշտ հաղ: Յերեխայի դեմ-
քը և կոպերը թեթեւ փքվում են: Աչքերը դառնում
են կարմիր, արտաւաղ, շատ դեպքում թարախա-
կալում են: Թարախային արտադատումը չորանում է
կոպերի վրա կեղեւի նման, վորի հետեանքով յերե-
խան արթնանում է կպած արտեանունքներով:

Հաճախ հիվանդության առաջին իսկ որից յերե-
խան դժվարանում է նայել պայծառ լույսին՝ ա-
ռաջացնում է լուսավախություն. յերեխայի կոկոր-
դը կարմրում է, լինդերը նույնպես. կարմրում և
ուռչում են, յերեմն նրանց վրա փառ է գոյանում:

Հիվանդության սկզբից 4—5 որ անց յերեխայի
մարմնի վրա ցան է յերեւում: Սովորաբար ցանն
ամենից առաջ յերեւում է ճակատի վրա, ախանջ-
ների հետևը և քթի ու բերանի մոտ, այնուհետև 2
որվա ընթացքում տարածվում է վրի, իրանի, ձեռ-
քերի և վրաների վրա: Յանց, ունենում է վառ կար-
միր գույն և բծերի նման. բայց կարող է լինել և
միաձուլված, այդ դեպքում մարմնի վրա գոյանում
են կարմիր մեծ բծեր:

Այդ ժամանակ յերեխան իրեն վատ է զգում:
Նա հրաժարվում է ուտելուց, դառնում է քնկոտ,
դանդաղկոտ, դանդառվում է գլխի, ձեռների
ու վրաների ցավից: Լինում են յերեխաներ, վորոնք
այդ ժամանակ դառանցում են: Յերեւալուց 3 որ
հետո, ցանը դառնաւում է, իսկ 4—5 որից բոլորո-
ւովին անհետանում: 2—3 որից հետո ջերմությունը
իջնում է: Յերեխան որ-որի վրա սկսում է իրեն
ավելի լավ զգալ. նա նստում է, խոսում, պահան-
ջում է ուտել:

Կարմրուկից հետո մաշկը թեփոտվում է, բայց
վոչ այնպես, ինչպես դա լինում է քութեկից հե-
տո: Կարմրուկի ժամանակ մաշկը թեփոտվում է
թեփուկներով, ինչպես ալրի թեփը:

Այդպես է ընթանում թեթեւ կարմրուկը:

Կարմրուկը ինչով է վտանգավոր յերեխայի հա-
ւար. — Կարմրուկը վտանգավոր է նրանով, վոր նա
շատ թուլացնում է յերեխային, նույնիսկ այն դեպ-
քերում, յերբ յերեխան նրանով թեթեւ է հիվանդա-
նում: Բացի դրանից, կարմրուկին հաճախ միանում

են բարդութիւններ, վորոնք խառնաճապակա վտանգավոր են վորք յերեխաների համար: Մահացութեան դեպքերը լինում են գլխավորապէս բարդութիւններից:

Յեթե կարմրուկի ցանը յերեւալուց հետո յերեխայի ջերմութիւնը չի իջնում, դա սովորաբար ցույց է տալիս, վոր կարմրուկին մի վորելի բարդութիւն է միացել: Բարդութիւններից, վորոնք ամենից շատ են լինում մինչև 3 տարեկան հասակը, առաջին տեղը գրավում է թոքերի բորբոքումը: Թոքերի բորբոքումը ամենից վտանգավոր բարդութիւնն է:

Թոքերի բորբոքման ժամանակ յերեխայի բարձր ջերմաստիճանը շարունակվում է, առաջանում է շնչարգելութիւն. նա իրեն վատ է զգում, հազալու ժամանակ դանդաղում է ցավերից:

Յերբեմն կարմրուկին միանում է հաստ աղիքների բորբոքումը—կոլիտ. յերբեմն դոյանում է ախանջների բորբոքում, ախանջներից սկսում է թարախ հոսել:

Բայց ամէլի վտանգավոր է, յերբ կարմրուկով հիվանդանում է այն յերեխան, վորը մինչև այդ հիվանդ է յեղել տուբերկուլյոզով (թոքախտ): Թոքախտավոր յերեխաների կարմրուկը շատ ծանր է ընթանում, առանճապակա հաճախ միանում է թոքերի բորբոքումը, վորից յերեխան շատ անգամ մահանում է: Յեթե նույնիսկ հաջողվում է աղտոտի կարմրուկով հիվանդ թոքախտավոր յերեխայի կյանքը, այնուամենայնիվ շատ դժվար է վերականգնել նրա առողջութիւնը: Մինչևիւ անգամ առողջ յերե-

խաները կարմրուկով հիվանդանալուց հետո, ամէլի յեն տրամադրվում ընդունելու թոքախտ և հեշտութեամբ են նրանով հիվանդանում, քան այն յերեխաները, վորոնք չեն հիվանդացել կարմրուկով:

Կարմրուկը վատ է ազդում նաև մյուս խրոնիկական յերկարատեւ հիվանդութիւնների վրա, վորոնցով տառապում է յերեխան, որին ամէլ յեթե յերեխան հիվանդ է մալարիայով կամ սիֆիլիսով, ապա կարմրուկի ժամանակ այդ հիվանդութիւնները սուր բնույթ են ստանում:

Բոլոր առանճներից պարզ է, վոր կարմրուկը լուրջ հիվանդութիւն է. կարմրուկը կարող է յերեխայի մահվան, պատճառ դառնալ կամ առաջացնել ծանր բարդութիւններ, վորոնք կարող են յերեխային յերկար ժամանակով, իսկ յերբեմն եւ մինչևիւ կյանքի վերջը հաշմանդամ դարձնել:

Կարմրուկի ժամանակ, չափազանց կարեւոր նշանակութիւն ունեն հիվանդի խնամքը, կանոնավոր սնունդը և առողջապահական լավ պայմանները:

Կարմրուկով հիվանդի խնամքը. — Յերբ յերեխան տաքութիւն է տալիս և ցան է յերեւում, անհրաժեշտ է ցույց տալ բժշկի: Յեթե կարմրուկով հիվանդ յերեխան մնում է տանը՝ բարդութիւնները կանխելու համար պետք է նրան ապահովել լավ խնամքով, կանոնավոր սնունդով և լավ առողջապահական պայմաններով: Կարմրուկով հիվանդանալու ժամանակ, ինչպէս նաև քութեչի և դիֆտերիայի դեպքերում, այն սենյակից վորտեղ սրտիկած է հիվանդը պետք է հեռացնել բոլոր ամէլորդ իրերը: Կարմրուկով հիվանդի համար հարկավոր է թարմ,

մաքուր ող: Յերեխան պետք է պառկած լինի մաքուր անկողնում: Յեթե ներքնակ չկա, անկողինը կարելի չէ պատրաստել: Անշը ծղոտ կամ մաքուր խոտ լցրած պարկից: Ավելի լավ է հիվանդին պառկեցնել այն դիրքով, վորպետզի - լույսը չընկնի նրա աչքերին: Յերեխայի առողջությանը վնաս է, յերբ հաստ կամ կարմիր կտորից վարադույր են կախում լուսամուտներին, վորտեղ պառկած է կարմրուկով հիվանդը: Կարմիր կտորը միայն դրդում է աչքերը, իսկ հետո վարադույրը խանգարում է ողի և լույսի թափանցելուն: Ամռանը լուսամուտները պետք է բաց լինեն: Ձմռանը որակաւ մի քանի անգամ բանալ ողանցքը, հիվանդին լավ ծածկելով տաք վերնակով: Յեթե ողանցք չկա, այդ դեպքում անհրաժեշտ է վառել վտռարանը ու բաց անել դեպի դուրս տանող դուռը, վորպետզի թարմանա սենյակի ողը: Ամեն որ պետք է խոնավ շորով մաքրել հատակը և սենյակում դռնված իրերի փոշին մաքրել խոնավ ջնջողով: Հիվանդին պետք է խնամի վորեմե մեկը (մայրը, քույրը, կամ տատը), հիվանդին խնամողը պետք է հազնի մաքուր չթից հագուստ, դուլիս կապի նույնպես մաքուր չթի թաշկինակով: յերեխային վորեւէ այլ հիվանդությամբ չվարակելու համար մինչեւ հիվանդին մոտենալը պետք է լավ ըլնալ ձեռքերը. պետք է հիշել, վոր կարմրուկով հիվանդ յերեխան թուլացած է և հեշտությամբ կարող է հիվանդանալ ամեն տեսակի ուրիշ վարակիչ հիվանդություններով, վորոնց միկրոբները կարող են գտնվել հիվանդին խնամողի հագուստի և ձեռքերի

վրա: Վոչ մի դեպքում, չպետք է թույլ տալ յերեխաներին մոտենալու հիվանդի անկողնին:

Հիվանդին պետք է կերակրել թեթե սնունդով՝ կաթ, հում սեր, ժածիկ, թերթաշ ձու, սուպ, ճրալի շիլա, ցորենի ալյուրից պաքսիմատ (սուխուրի): հիվանդ յերեխային չչի, սեվ հաց, միս և այլն տալու դեպքում կարող են բարդություններ առաջանալ՝ լուծ, փխսում, վորը և կծանրացնի հիվանդի դուրթյունը:

Յերբ վերջանում է ցանը դուրս տալը և իջնում ջերմությունը, հիվանդին կարելի չէ տալ կարտոֆիլ, դադարի կամ չաղգամի ալյուրե (յեկած ու տրորած բանջարեղեն, ամելացնելով կաթ, յուղ):

Առանձնապէս ուշտակար է հիվանդ յերեխայի կերակրին ամելացնել մրգերի և պտուղների հյութ, որինակ՝ լոռամրգի: Լոռամրգին պետք է արորել, քամել և հյութը տալ հիվանդին:

Հիվանդին դուրեկան է թթվաշ խմիչքը, իսկ մըրգերի և պտուղների հյութերի մեջ, բացի դրանից, կաջ նաև առողջության համար ուշտակար նյութեր՝ վիտամիններ: Այդ հյութը հիվանդին պետք է տալ որակաւ մի քանի անգամ:

Գարնանը, լավ յեղանակին և ամռանը անհրաժեշտ է առողջացած յերեխաներին մաքուր ողի դուրս բերել:

Կարմրուկից հետո կաղդուրված յերեխային ձըմեռ ժամանակ ևս տաք հաղցնելով պետք է դուրս բերել փողոց: Թարմ, մաքուր ողը և կանոնավոր անունդը նպաստում են կարմրուկից թուլացած որ-

դանիդմի ամրապնդմանը և կանխում թուքախտ հիվանդութունը:

Յերեխային կարելի չե թույլ տալ հաճախելու մանկական հիմնարկ (մսուր, մանկապարտեզ, դպրոց) ցանցն անհետանալուց 7 ուր հետո, յեթե նա բարդութիւններ չի ունեցել: Յեթե յերեխան բարդութիւններ ե տվել, անհրաժեշտ ե դիմել բժշկի, փորպեսպի համապատասխան բուժում նշանակի: Այդ դեպքում յերեխային մանկական հիմնարկ կարելի չե թույլ տալ միայն բժշկի թույլտվությամբ:

Յեթե տանը կարմրուկով հիվանդ են 2 կամ 3 յերեխա, նրանց վոչ մի դեպքում չի կարելի մի անկողնում պառկեցնել: Յեթե հիվանդներից մեկի մոտ, բացի կարմրուկից, սկսվում ե թուքերի բորբոքումը, այդ դեպքում այդ հիվանդության միկրոբը փոխանցում ե մյուսին, յերրորդին և բոլոր յերեխաները կարող են հիվանդանալ թուքերի բորբոքումով: Բացի դրանից, յերբ յերեխան առանձին ե պառկած, նա հանդիստ ե չնչում, ոգը մաքուր ե, անկողինն ավելի հեշտ ե մաքուր պահել, յերբ մեկ յերեխա յի պառկում, քան թե յերկու- յերեք յերեխա:

Ինչպես ե փոխանցվում կարմրուկի վարակը. — կարմրուկի միկրոբը փոխանցվում ե այնպես, ինչպես քութեչի և դիֆտերիայի միկրոբները, այսինքն թքի և լորձի կաթիլների միջոցով, վորը հիվանդը չաղ ե տալիս խոսելու, հաղի և փռտոցի ժամանակ: Վորովհետեւ կարմրուկով հիվանդը ուժեղ հարբուխ ե հաղ ե ունենում, դրա համար ել նա իր շուրջը մեծ քանակությամբ կարմրուկի միկրոբներ ե տարածում: Կարմրուկի միկրոբը տարածված ե հի-

վանդի սենյակի ողի մեջ: Յեթե կարմրուկով չհիվանդացած յերեխան, թեկուզ մի քանի րոպեով մտնի այն սենյակը, վորտեղ պառկած ե կարմրուկով հիվանդը, նա արդեն կարող ե վարակվել և հիվանդանալ կարմրուկով: Դրա համար, յեթե ընտանիքում կարմրուկով հիվանդացել ե թեկուզ մեկ յերեխա, ապա համարյա միշտ ել 10-28 ուրից հետո հիվանդանում են առաջուց կարմրուկով չհիվանդացած մյուս յերեխաները: Կարմրուկի միկրոբներն արաղ տարածվում են և նույն արաղությամբ ել վոչնչանում: Կարմրուկի վարակը շատ անկայուն ե: Քութեչի, դիֆտերիայի և ծաղկի միկրոբները վոչնչանում են յեռացումով, դոլորչիով, կամ հատուկ ակտահանիչ նյութերով, իսկ կարմրուկի միկրոբները վոչնչանում են արեւի ճառագայթներից, սենյակը ողափոխելուց և մաքրելուց: Այդ պատճառով իրերի և խաղալիքների վրա կարմրուկի միկրոբները յերկար չեն ապրում և նրանց մնալով կարմրուկի վարակը չի փոխանցվում: Իհարկե, յեթե կարմրուկով հիվանդ յերեխային կերակրելուց հետո, նրա գործածած ամանն առանց մաքրելու, լվանալու տալ առողջին, այդ դեպքում առողջը կվարակվի, վորովհետեւ այդ ամանի մեջ յեղած մեծ քանակությամբ միկրոբները դեռ չեն վոչնչացել: Կամ յեթե վերջինք յերեսսրբելը, վորով սրբվում ե կարմրուկով հիվանդը և տեղն ու տեղը սրբենք առողջին, այդ դեպքում առողջը կվարակվի կարմրուկով, վորովհետեւ այդ սրբելի վրա գտնված ահադին քանակությամբ միկրոբները դեռ չեն վոչնչացել: Ամենից անհաճելին այն ե, վոր կարմրուկով հիվանդ յերե-

խան վարակիչ և դեռ այն ժամանակ, յերբ վոչ վոչ չի կասկածում, վոր նա հիվանդ և կարմրուկով, յերբ նրա մոտ կարմրուկի տեսանելի նշաններ չկան: Անբերեխալի մոտ դեռ չկա վոչ մի ցան. նա միայն յնշտում և ու հաղում, նա միայն իրեն քիչ տկար և ցրում: Նրա հաղի և վոչտոցի ժամանակ ոգի մեջ բնկնում են կարմրուկի միկրոօրները և վարակում առողջներին:

Դրա շնորհիվ հեշտ չի կանխել կարմրուկի տարածումը:

Ինչպես կանխել կարմրուկի տարածումը կոլարնտետքյան մեջ. — Վորովհետև կարմրուկից ամենից առաջ շատ մահանում են մինչև 3 տարեկան յերեխաներ, դրա համար պետք է հոգ տանել, վոր պետքի չվարակվեն ամենափոքրերը: Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի յերեխաների կարմրուկով հիվանդանալու ժամանակը հետաձգվի մինչև 4—5 տարեկան հասակը, յերբ կարմրուկն ավելի թեթև և տարվում է:

Պետք է հիշել, վոր ինչքան յերեխան ուշ հիվանդանա կարմրուկով, այնքան լավ է նրա համար:

Ամենից առաջ պետք է վերացնել առողջ յերեխաներին կարմրուկով հիվանդի կողքին պառկեցնելու հին վնասակար սովորութիւնը: Դա վտանգավոր է: Յեթե կարմրուկով հիվանդի հետ պառկեցնեն մի քանի առողջ յերեխաների, նրանք վոչ միայն բոլորը կհիվանդանան կարմրուկով, այլ և բարդութիւնները նրանց մոտ ավելի շուտ կսկսվեն և ավելի ծանր կընթանան:

Յեթե տանը յերեխաներից վորեմէ մեկը հիվանդացել է կարմրուկով, անհրաժեշտ է հնարավորութեան սահմաններում, ամենափոքր, մինչև 3 տարեկան յերեխաներին տեղափոխել յերեխա չունեցող աղականների կամ հարեւանների մոտ:

Կարմրուկով հիվանդի ընտանիքում դռնված մյուս յերեխաներին, վորոնք չեն հիվանդացել կարմրուկով, չի կարելի թույլ տալ հաճախելու վոչ մանկասուրբ, վոչ մանկապարտեզ և վոչ ել դպրոց: Նրանց պետք է արգելել խաղալու հարեւան յերեխաների հետ:

Պետք է սպասել մինչև 4 կառողջանա առաջին հիվանդացող յերեխան, այնուհետև սպասել կարմրուկի դադարի շրջանի անցնելուն և այն ժամանակ միայն մյուս յերեխաներին կարելի յե թույլ տալ հաճախելու մանկական հիմնարկներ: Այլապես կարմրուկի վարակը դպրոցի և մանկապարտեզի յերեխաների մեջ տարածելու աղբյուր կդառնան նրանք:

Յուրաքանչյուր կոլտնտեսուհի պետք է հասարակութեան դիտակից անդամը լինի և մտածի վոչ միայն իր յերեխայի, այլ և մյուս կոլտնտեսականների յերեխաների առողջութեան մասին: Նա մանկամարտը կամ դպրոց չպետք է ուղարկի կարմրուկով հիվանդացած յերեխաներին, յեթե իր տանը կարմրուկով հիվանդ յերեխա կա: Այդ կանոնի կատարմանը պետք է հսկի կոլտնտեսային ակտիվը, սանիտարը: Գլխավորն է, հոգ տանել այն մասին, վորպեսզի կարմրուկը մուտք չգործի մանկասուրբ, վորտեղ հավաքված են ամենափոքր յերեխաները,

վորոնք կարող են մեծ մահացություն տալ կարմրուկից:

Կարմրուկից հետո ղեզինֆեկցիա չեն կատարում, վորովհետև կարմրուկի միկրոբը շատ անկայուն է, սակայն կարմրուկից առողջանալուց հետո հիվանդի սպիտակեղենը պետք է լվանալ, սենյակի բոլոր իրերը մաքրել, լվանալ, սենյակը ոգափեխել 2-3 ժամով:

Պատվաստումներ կարմրուկի դեմ. — Գիտնական Դեզկվիտցը դտավ կարմրուկի ընթացքը թեթեւացնելու և կարմրուկի մահացությունը պակասեցնելու միջոցը: Այդ միջոցը հակակարմրուկային պատվաստումն է: Մենք արդեն տասցինք, վոր կարմրուկով մեծ մասամբ մեկ անգամ են հիվանդանում կյանքում: Կարմրուկն անցկացնելուց հետո մարդու սրգանիզմում, համարյա թե ամբողջ կյանքի ընթացքում պահպանվում է հակաթույնը կարմրուկի թույնի դեմ և այդ հիվանդությունը չընդունելու ունակությունը: Յեթե յերեխային սրսկեն այն մարդու արյունը, վորը յերբվե հիվանդացել է կարմրուկով, այդ դեպքում յերեխայի կարմրուկը թեթեւ կընթանա: Պատվաստված յերեխաների մոտ հազվադեպ են նաև բարդությունները: Պատվաստված յերեխաները հազվադէպ ողջանում են մահանում կարմրուկից:

Գիտնական Դեզկվիտցը վերջրեց կարմրուկով հիվանդացած մարդու արյունը և սրսկեց այն յերեխային, վորը չիում եր ունեցել կարմրուկով հիվանդի հետ: Յերեխան թեև հիվանդացավ կարմրուկով, բայց հիվանդության ընթացքը շատ թե-

թեւ անցավ, նա հիվանդությունն անցկացրեց վրտաքի վրա: Այդ ժամանակ Դեզկվիտցը այդ միջոցը փորձեց հարյուրավոր վորը յերեխաների վրա և համոզվեց, վոր յեթե յերեխային սրսկում են մեկ հիվանդից, վոր հիվանդացող մարդու արյունը, նա կամ բոլովորին չի հիվանդանում կարմրուկով, կամ հիվանդանում է շատ թեթեւ: Բացի դրանից, կամ հիվանդանում է շատ թեթեւ: Բացի դրանից, նրանք համարյա բարդություններ չեն ունենում և չեն մահանում կարմրուկից:

Կարմրուկի դեմ պատվաստում պետք է կատարել այն ժամանակ, յերբ արդեն կա կարմրուկի հիվանդությունը, բայց վոչ ուշ քան 3 օր կարմրուկով հիվանդին հայտնաբերելուց հետո: Ավելի ուշ արված պատվաստումները չեն ոգնում: Յերբմն պատված պատվաստումները չեն ոգնում են մեծ մարդու տահում է, վոր յերեխային սրսկում են մեծ մարդու արյուն և նա չի հիվանդանում: Յեթե 2-3 ամսից, արյուն և նա չի հիվանդանում: Յեթե 2-3 ամսից, կես կամ մեկ տարուց հետո, նա դարձյալ չի վի կարմրուկով հիվանդի հետ, նա այս անգամ կարող է հիվանդանալ: Դրա համար յերեխային պետք է նորից պատվաստել հասակավոր մարդուց վերցրած արյունով, վորպեսզի յերեխան թեթեւ անցկացնի կարմրուկը:

Յերեխաներին պետք է պատվաստել մինչև 3 տարեկան հասակը, վորպեսզի նրանց կարմրուկն ավելի թեթեւ ընթանա և յերեխաները կարմրուկից չմահանան: Պետք է պատվաստել նաև ավելի մեծահասակ յերեխաներին, յեթե նրանք շատ թույլ են և հյուծված. նաև այն յերեխաներին, վորոնք հիվանդ են թոքախտով: Սովորաբար արյունը վերցնում են յերեխայի ծնողներից:

Ծնողները պետք է տան կես բաժակ արյուն, վորն անհրաժեշտ է յերեխայի առողջությունը և կյանքը փրկելու համար: Դա ծնողներին չի հյուսում, քանի վոր արյունը արագ վերականգնվում է: Կանայք դաշտանի կամ ծնելու ժամանակ ամբիշ շատ արյուն են կորցնում և դա չի անդրադառնում նրանց առողջության վրա:

Մոսկվայում և ուրիշ մեծ քաղաքներում, ներկայումս նաև մի քանի կոլոնատեսություններում յերեխային մսուր ընդունելու ժամանակ խորհուրդ են տալիս մօրը կամ հօրը արյուն տալ, վորը հետո մշակում են և սրսկում յերեխային, յեթե նա չփում է ունեցել կարմրուկով հիվանդի հետ:

Կարմրուկի դեմ պատվաստումները շատ անդամով են պակասեցնում կարմրուկ հիվանդությունը և մինչև 3 տարեկան յերեխաների մահացությունը կարմրուկից:

Հակակարմրուկային պատվաստումներն առաջին հերթին պետք է կատարել մսուրներում դառնող յերեխաներին, իսկ հետո նաև կոլոնատեսության մինչև 3 տարեկան, մյուս յերեխաներին, այն ժամանակ մենք կոլոնատեսության մեջ կարմրուկ հիվանդությունը կդարձնենք անվտանգ հիվանդություն:

ԲՆԱԿԱՆ ԾԱՂԻԿ

Ծաղիկը սուր վարակիչ հիվանդություն է, նա ամենածանր և վտանգավոր հիվանդություններից մեկն է:

Անցյալներում, 60—70 տարի սրանից առաջ, ծաղիկը համարվում էր մարդկության չարիքը, վորովհետև վ ծաղիկից բազմաթիվ մարդիկ էյին մեռ-

նում: Ծաղիկը ամայացնում էր քաղաքներ, դյուղեր, վնասելով ամբողջ աղղարնակությանը՝ և մեծերին և յերեխաներին: Յերբ ծաղիկը յերեվում էր վորեմե յերկրում, նրանով հիվանդանում էյին բոլորը, ովքեր անցյալում չէյին հիվանդացել նրանով: Ծաղկով հիվանդ խաղանական մի զինվոր 1520 թվա-
կանին այդ հիվանդությունը տարավ Մեքսիկա և ծաղիկ համաճարկը բռնկվեց այդ յերկրում, ընդ-
դրկելով վորջ աղղարնակությանը: Շատ կարճ ժամանակամիջոցում ծաղիկից մահացան 3½ միլիոն մարդ:

Հազարավոր յերեխաներ և դեռահասներ մահացան նրանից: Ծաղիկից առողջացածները, շատ դեպքում ամբողջ կյանքի ընթացքում հաշմանդամ էյին մնում, կուրանում կամ խլանում էյին: Միջին դարերում՝ անբուժելիների համար կազմակերպված ասպատարանն ընդունված կույրերի յերեք քառորդը կուրացել էր ծաղկով հիվանդանալուց հետո:

Ներկայումս կույրերի դարոցի ասների 30 տոկոսի կուրությունն առաջացել է ծաղիկ հիվանդության հետևանքով: Դեռ 1870 թվականին Փարիզում (Ֆրանսիա) ծաղկով հիվանդացել է 280 հազար մարդ, 1872 թ. Գերմանիայում՝ 130 հազար մարդ: Վոչ պակաս քան մյուս յերկրներում, ծամարդ: Վոչ պակաս քան մյուս յերկրներում, ծաղիկն իր դաժանությունը տարածել էր նաև հին Ռուս-
ստանում: 300 տարի սրանից առաջ ծաղիկից մահացանում էր տարեկան միջին հաշվով 440 հազար մարդ: Նույնիսկ մոտ անցյալում, մինչև հեղափոխական տարիներին Ռուսաստանում ամեն տարի ծաղկով հիվանդանում էր 100—150 հազար մարդ, իսկ 1915

Թվականին՝ 273 հազար մարդ. ծաղկից մահացածները թիվը տարեկան կազմում էր 40—50 մազար մարդ:

Մի ղերտականի ասելով, ծաղիկն ամենուրեքական է, սակայն նա ամենի շատ բուն է դնում աշնանդ, յորտեղ թագավորում են տելտուլթյունը և կյանքի ծանրը, հակառուղջապահակա՞ն պայմանները:

Ինչպես է յերեվան գալիս և ընթանում ծաղիկ հիվանդությունը. — Յերբ մարդ վարակվում է ծաղկով, նա անմիջապես չի հիվանդանում: Ծաղկի դադարների շրջանը տևում է 9—14 օր: Հիվանդությունը սովորաբար սկսվում է անսպասելի ուժեղ դողով, ջերմությամբ, գլխացավով, և դոտկատեղի ցավերով: Հիվանդության 2-րդ օրը՝ դեմքի և մարմնի վրա ցան է յերևում, 2-3 օրից հետո ցանն անհետանում է, ջերմությունը պակասում: Յերբորդ օրվա վերջին, առաջանում են մանր կարմիր բծեր—հանգույցներ, սկզբում՝ դեմքի վրա, հետո գլխի մազոտ մասի և պարոնոցի, իսկ հետո իրանի վրա: 2-3 օրից հետո նրանք մեծանում են և վերածվում—բշտիկի՝ ծաղկաբշտիկի, 3-րդ օրն այդ բշտիկները թարախակալում են և դառնում թարախաբշտիկներ: Հիվանդության այդ շրջանը շատ ծանր է հիվանդի համար: Դեմքը, ձեռքերը, վոտքերը, իրանը ծածկված են լինում այդպիսի թարախաբշտերով, մաշկը ձգված, հիվանդը չարձր ջերմություն է ունենում: Մեծ մասամբ հիվանդը պառկած է լինում գիտակցությունը կորցրած՝ գառանցուս: Այդ միջոցին հիվանդներից շատերը մահանում են:

Յերբ հիվանդը չի մեռնում, ապա հիվանդության

11—12-րդ օրը, նրա դրուժյունը լավանում է, թարախաբշտիկները չորանում են, կազմում կեղեվ, վերոնք հիվանդության 30—40-րդ օրը աստիճանաբար թափվում են:

Կեղեվի թափվելուց հետո, ամբողջ կյանքի ընթացքում մաշկի վրա սպիներ են մնում՝ չհոտություն:

Ծաղկի ժամանակ հաճախ բարդություններ են լինում — բրոնխիտ, թոքերի բորբոքում, սրտի հիվանդում — դուժյուն, ներվային համակարգության և ստամոքսի, օղիքների հիվանդություններ: Ամենից հաճախ պատասող բարդությունները՝ աչքի և ականջի հիվանդություններն են: Հաճախ ծաղկից հետո՝ աչքերի վրա հոտեր են մնում, հենց դրա համար ել՝ ծաղիկը կահոտեր են մնում, հենց դրա համար ել՝ ծաղիկը կաբորդ է կուրության հասցնել. կուրերի 30 տոկոսը իրենց անսուղությունը կորցրել են ծաղկի հետևանքով: Ծաղկի թեթև ձևերը սովորաբար վերջանում են ուղղանալով, բայց դեմքի վրա, ամբողջ կյանքի ընթացքում մնում են ծաղկի սպիներ — չհոտություն:

Ինչպես է փոխանցվում ծաղկի վարակը. — Ծաղկի միկրոբը հեշտությամբ է փոխանցվում ողի միջոցով: Ծաղկի վարակը գտնվում է հիվանդի մարմնի վրա յեղած բշտիկներում, թարախաբշտիկներում և կեղեվի վրա: Հիվանդին մանրակրիկտ զննելու ժամանակ հաջողվում է սյուրել, վոր ծաղկաբշտիկները տարածված են լինում վոր միայն հիվանդի դեմքի և մարմնի վրա, այլ և բերանի քթի և բկանցքի լորձաթամբի վրա: Այդ ծաղկաբշտիկները բերանում, քրդանի մարմնի վրա: Խոսելու, փուչտալու և հապալու ժամանակ՝ քթի և լորձի մանր կաթիլների հետ

ողի մեջն են ընկնում նաև ծաղիկ առաջացնող միկրոբները:

Ծաղկի միկրոբն ընկնելով առողջ մարդու բերանը և քիթը, վարակում է նրան և նա հիվանդանում է: Ծաղկի միկրոբները, վորոնք շատ են ծաղկաբլուխներում և թարախաբլուխներում, մեծ քանակությամբ դանդում են նաև կեղևներում: Թափուղ կեղևի վրա նույնպես կարող է վարակի աղբյուր հանդիսանալ: Ծաղկով հիվանդի պառկած սենյակում մեծ քանակությամբ ծաղկի միկրոբներ կան, թե բոլոր իրերի վրա և թե ողում: Առողջ մարդը, վորի ծաղիկը չի պատվաստված, բախված է մտնի հիվանդի սենյակը, վորպեսզի վարակվի ծաղկով: Վարակը կարող է վտանգել վրա միայն անմիջականորեն, ծաղկով հիվանդից, այլև իրերի միջոցով, վորոնց վրա ընկել են թջի կամ հիվանդի մյուս արտաթորանքների կաթիլներ կամ թափվող կեղևներ:

Ծաղկի միկրոբները դանդում են նաև հիվանդի արտաթորանքների՝ նրա կղանքի, մեզի, խորխի մեջ: Միջանները նույնպես կարող են վարակ ստանալ: Արագ օրինակ՝ ծաղկով հիվանդի սենյակում թռչող ճանճերը կարող են ծաղկի վարակը տեղափոխել մի այլ տեղ:

Ծաղկի միկրոբները շատ վեներալ են և կայուն: Նրանց վոչնչացնելն այնքան էլ հեշտ չէ: Նրանք կարող են յերկար ժամանակ ապրել նաև չոր վիճակում: Յեղել են դեպքեր, յերբ ծաղկից առողջացած, կամ մահացած հիվանդի իրերը, յերկար ժամանակից հետո հանճնել են առողջ մարդականց՝ այդ իրերի վրա պահ-

պանել են ծաղկի միկրոբները և վարակել այն մարդկանց, վորոնք ստացել են այդ իրերը:

Ծաղկի մեծ համաճարակներ եյին լինում թղթի զարծարանի բանվորների մեջ, վորոնք վերամշակում էին այնպիսի տեղերից ստացված փալաններ, վորտեղ ծաղիկն իր առատ հունճն էր կատարել: Վարակիչ է նաև ծաղկից մահացածի դիակը, դրա համար մահացածին լողացնելը և դիակի տեղափոխելը պետք է թույլատրել այն մարդականց, վորոնք կրկնակի պատվաստված են ծաղկի դեմ, կամ հիվանդացել են ծաղկով:

Չի թույլատրվում հիվանդանոցից բաց թողնել ծաղկից մահացած մարդու դիակը:

Խնչպես կանխել ծաղիկ հիվանդությունը.— Հաղարավոր տարիների ընթացքում մարդկությանը հայտնի յե յեղել ծաղիկը և այն ավերածութունը, վորն առաջացրել և այդ հիվանդութունը, և հաղարավոր տարիների նըթացքում, մարդիկ վորճել են բուժել ծաղիկ հիվանդութունը և փնտրել են ծաղիկը կանխելու միջոցներ: Բայց միայն 1796 թվականին անգլիական դյուղական բժիշկ՝ Ջենները տվեց մարդկությանը ժողովրդական այդ աղետի դեմ պայքարելու մի հզոր միջոց, նա դտավ պատվաստումը ծաղկի դեմ:

Շատ վաղուց հայտնի յեր, վոր մեկ անդամ ծաղկով հիվանդացած մարդիկ, յերկրորդ անգամ նրանով չեն հիվանդանում, իսկ յեթե հիվանդանում են թեթև: Մենք արդեն ատացիք, թե ինչու յե այդպես լինում: Յերբ մարդ հիվանդանում է ծաղկով, նրա մարմինը հակաթույն է արտադրում ծաղկի դեմ:

Այդ հակաթուշնր սմբողջ կյանքի բնթացքում պահպանվում է նրա արյան մեջ: Յեթև մարդու արդար-նելովի մեջ, վորը մեկ անգամ հիվանդացել է ծաղիկով, բնկնեն ծաղիկի միկրոբներ, այդ պեպքում նա չի հիվանդանա դրանով, վորովհետև նրա արյան մեջ գտնված հակաթուշնր չեղողացնում, անվնաս է դարձնում ծաղիկի միկրոբներին թուշնր:

Այդ խմանալով, մարդիկ միջոց էլին փնտրում ախտիս անելու, վորպեսզի ծաղիկով վարակված մարդը նրանով թեթև հիվանդանար է առանց վորեւ րարդությունների:

Բժիշկները նշել են նաև այն, վոր մարդիկ ծաղիկով թեթև են հիվանդանում այն պեպքերում, յերբ նրանով վարակվում են մաշկի վերքերի միջոցով: Այդ բժիշկներն սկսեցին ծաղիկ պատվաստել հիվանդից առողջին: Նրանք վերցնում էին ծաղիկով հիվանդի ծաղիկաբջյուրիկի պարունակությունը տեղափոխում առողջ մարդու մաշկի վրա, սակայն այդ ձևի պատվաստումները լավ արդյունքներ չէին տալիս: Ծաղիկի համաճարակները շարունակվում էին:

Բժիշկ Ջենները ապրելով դյուրում է գիտելով վոր միայն մարդու, այլև կենդանիների այդ հիվանդությունը, ուշադրություն դարձրեց, վոր կովի կրծքի վրա ինչ վոր հիվանդություն է լինում է կրծքի վրա թարախաբջյուրիկներ են առաջանում:

Նա նկատեց, վոր այդպիսի կովերը կթելու ժամանակ կթողները հաճախ վարակվում են այդ հիվանդությամբ: Նրանց ձեռքերի վրա գոյտ

նում են թարախաբջյուրիկներ, վորոնք հետո չորանում, վեր են ածվում կեղեվի: Յերբ կեղեվները թափվում են, նրանց տեղ մաշկի վրա՝ սպիներ են մնում:

Դա այն ժամանակ էր, յերբ Ջենները ապրած տեղում սաստիկ տարածված էր ծաղիկի հիվանդությունը: Ջենները նկատել էր, վոր այն կանայք, վորոնք իրենց ձեռքերի վրա այդպիսի սպիներ ունեն, ծաղիկով չեն հիվանդանում: Այն ժամանակ նրա գլխում հղացավ այն միտքը, վոր կովի կրծքի վրա առաջացած թարախաբջյուրիկները, դա ծաղիկի արտահանությունն է, վոր ծաղիկը կովի մոտ խիստ թեթև է ընթանում, վոր նա թարախաբջյուրիկներ է առաջացնում միայն կրծքի վրա, վոր կովից ծաղիկով վարակված մարդը հեշտությամբ է տանում այդ հիվանդությունը: Կովի այդ թեթև ծաղիկով հիվանդանալը, վորով կարող են հիվանդանալ է մարդիկ, միայն սպիյե թողնում վարակման տեղում, իսկ այնուամենայնիվ նա պաշտպանում է մարդուն ծանր մարդկային կամ ինչպես անվանում են նրան՝ բնական ծաղիկով հիվանդանալուց:

Ջենները մի տղայի պատվաստեց այն կնոջ ձեռքերի թարախաբջյուրիկներից վերցրած թարախով, վորը վարակվել էր կովից (կովի ծաղիկից), իսկ հետո նա այդպիսի պատվաստումներ կատարեց վերցնելով թարախն անմիջապես հիվանդ կովի թարախաբջյուրիկներից: Այն բոլոր մարդկանց, վորոնց նա պատվաստել էր, ծաղիկով չէին հիվանդանում: Իսկ նույն ժամանակում հպատակաբանները հիվանդանում էին: Այդպես կատարվեց այդ մեծ գյուտը, վորի շնորհիվ կարելի

յի աղատվել մի աշնայիսի Հիվանդութիւննից, վորն առին տարի հսկայական թիվով մարդկային զոհեր եր տանում:

Հետագայ 10—12 տարվա ընթացքում կոփի ծաղկով պատվաստումները բայն ծափալում ստացան վոչ միայն Անդլիայում, այլ և Յեվրոպական բոլոր պետութիւններում: Ծաղկի համաճարակը կանգ առավ, բայց 1823 թ. Յեվրոպայում նորից բռնկվեց ծաղիկը, վորը չարունակվեց 17 տարի:

Դրա հետ միասին պարզվեց, վոր այն քաղաքներում ու դուղերում, վորտեղ ծաղկի դեմ պատվաստված էին բոլոր փոքր յերեխաները, յերեխաները չէին Հիվանդանում, այլ Հիվանդանում էին միայն մեծերը, վորոնց պատվաստումը կատարվել էր մանկական հասակում:

Այն ժամանակ հասկացան, վոր կոփի ծաղիկը մարդուն բնական ծաղկից պաշտպանում է վոչ թե ամբողջ կյանքի ընթացքում, այլ մի քանի տարի, այդ պատճառով ծաղկի դեմ պատվաստումներ սկսեցին կատարել մի քանի անգամ— 5—7 տարի ընդմիջումով:

Ներկայումս ծաղկի դետրիտ (այն նյութը, վորով պատվաստում են) պատրաստելու համար դոյութիւն ունեն հատուկ ինստիտուտներ:

Ծաղկի դետրիտը, այսինքն այն նյութը վորով կատարվում է ծաղկի պատվաստումը, պատրաստում են հատուկ հորթանոցներում: Դրա համար վերցնում են անասնաբուծի կողմից քննված առողջ հորթեր, ստերում են նրանց վորի վրա դանկա՛ծ մաշկ, ուշա՛

ղրութեամբ լվանում են այդ տեղի մաշկը և հատուկ դործիքով սկսում են փորքիկ կտրվածքներ առաջացնել նրա վրա: Կտրվածքների վրա ներշնչում են կոփի ծաղկաբշտերից ստացած թարախը և այդպիսով հորթին վարակում ծաղկով: Այդ կտրվածքների տեղում առաջանում են թարախային ծաղկաբշտիկներ: Այդ թարախաբշտերում պարունակվում է կոփի ծաղկի վարակը, վորը քերում են հատուկ դղարով: Թարախաբշտիկներից ստացված թարախը խառնում են դլիցերինի հետ, տրորում, լցնելով աղակյա փոքր խոզովակների մեջ, ուղարկում են բուժական հիմնարկներ՝ ծաղկի դեմ պատվաստումներ կատարելու համար:

Մեկ հորթից կարելի յե ստանալ 25—50 հազար հոգու պատվաստման նյութ: Դրանից հետո հորթը չուտով առողջանում է, նրա միսն առանց վորե կասկածի կարելի յե ոգտադործել:

Մեզ մոտ կան տասնյակներով հորթանոցներ, վորտեղ ծաղկի դետրիտ է պատրաստվում: Բացի դրանից, հսկայական քանակութեամբ պատվաստման նյութ է բաց թողնվում Առօրեկոմատի Ծաղկահատման ինստիտուտի կողմից:

Անհրաժեշտ է նորածին յերեխաների ծաղիկը պատվաստել ծնվելուց 2 ամիս հետո, այլապես նա կարող է վարակվել և մահանալ ծաղիկից:

Պատվաստումները ծաղկի դեմ ուժի մեջ են մոտավորապես մինչև 5—7 տարի: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է յերեխայի և մեծիլի ծաղիկը պատվաստել կրկնակի անգամ:

Ծաղի մեծ համաճարակներից հետո, վորոնք ծափալեցին 1870 և 1872 թիվականներին, շատ յերկրներ

Հրատարակեցին նորածինների ծաղիկ պարտադիր պատվաստումներ և մեծերին կրկնակի պատվաստումներ կատարելու որոշումը:

Այդ որոշման ավելի խստորեն կիրառվում էր Գերմանիայում: Գերմանիայում այդ որոշման ճիշտ կատարման հետևանքով մշտական բնակչության մեջ ծաղիկի դեպքեր համարյա թե տեղի չեն ունեցել: Բայց 1919 և 1920 թ., յերբ պատերազմի հետևանքով թուլացել էր ուշադրությունը ծաղիկի պատվաստումների հանդեպ և որոշում խտուրթում էր կատարվում, այնուհետ ծաղիկի հիվանդությունը մեծ ծափարով տարածվեց:

Այլ կերպ է դործը անգլիական դադուրում—չընդհատա՞նում: Անգլիացիները հարկավոր չեն համարում պաշարելու հնգիկների տեխնոլոգիան և նրանց կրոնական նախապաշարումների դեմ, վրոնք արգելում են ծաղիկի պատվաստումները: Դրա հետևանքով այնտեղ նկատվում է հակադաս մահացություններ ծաղիկից. որինհակ 1919 թվին անգլիական Հնդկաստանում ծաղիկից մահացել են 136 հազար մարդ, իսկ 1925 թվին՝ 42 հազար:

Յարական Ռուսաստանում ևս ծաղիկի պարտադիր պատվաստման որոշում չի լինել: Ծաղիկի պատվաստումը թեև տարվում էր, բայց նա ամբողջ ազդեցություն չէր ընդգրկում: Մեծերի կրկնակի ծաղիկի պատվաստումները տարվում էին չափազանց թերի, այդ պատճառով էլ մինչ հեղափոխական շրջանում մենք ծաղիկի մեծ համաճարկներ ունեցինք: Խորհրդայնացումից հետո Ղազախստանի ազդեցություն չէր հետադադարում ծաղիկի պարզեց, վոր բնակիչների 25 տոկոսն անցկացրած ծաղիկի հետքեր

ունի, այդինքն յուրաքանչյուր 100 մարդուց 25-ը հիվանդացել էր ծաղիկով:

Միմիայն Խորհրդային իշխանությունը ճշտորեն պահանջեց ծաղիկի պատվաստումների կարեւորությունը. 1919 թվին, յերբ դեռ չէր դադարել քաղաքացիական պատերազմը և ռազմաճակատներում կատարել կոիմներ էյին տարվում սպիտակ բանդաններ դեմ, Խորհրդային իշխանությունը հրատարակեց ընկ. Լենինի կողմից ստորագրված դեկրետը, վորի համաձայն բոլոր քաղաքացիները պարտավորվում էին ծաղիկի դեմ պատվաստել իրենց նորածին յերեկներին, իսկ մեծերը՝ պարտավոր էին յենիքարկվել կրկնակի պատվաստման:

Յարական Ռուսաստանում ամեն տարի ծաղիկի հիվանդանում էր հարյուր հազար մարդ: Ծաղիկի պարտադիր պատվաստումներ անցկացնելուց հետո, սկսած 1921 թ. Խորհրդային Միության մեջ ծաղիկի հիվանդացությունների թիվը խիստ պակասեց ցարական Ռուսաստանի համեմատությամբ: Այնուամենայնիվ ծաղիկի հիվանդություններ մեղ մոտ վերջնականապես չի անհետացել: Զի անհետացել միայն այն պատճառով, վոր դեռ մեղ մոտ վրոջ ամեն տեղ են հասկառում ծաղիկի պատվաստման վերաբերյալ դեկրետի հետադարձ կարեւորությունը, դեռ վրոջ ամենուրեք են անցկացվում ծաղիկի համատարած պատվաստումները:

Ժողովրդական Կոմիտեների Խորհուրդն ընդունել է Խորհրդային Միության մեջ ծաղիկի հիվանդություններ վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելու վրոշումը:

Այդ վրոշման կատարումը, վորը Խորհրդային

Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան
բոլոր Ժողովուրդներին ապառում եւ ծաղկից, ամբող-
ջապէս կախված եւ մեզանից:

Իրենք կոլտնտեսականները եւ կոլտնտեսութեան
առողջապահական ակտիւն այդ դործում պետք եւ
վճարական դեր խաղան:

Ինչպէս պետք եւ պայքարել ծաղկի դեմ, յետեւ
նա յերեւակել եւ, եւ ինչպէս կանխել նրա յերեւակ
դալը: Յերբ մարդ հիվանդանում եւ ծաղկով նրան
պետք եւ անմիջապէս հիվանդանոց փոխադրել: Դա
անհրաժեշտ եւ, առաջին հերթին, իրեն՝ հիվանդին
փրկելու համար:

Միմիայն հիվանդանոցում նա կստանա անհրա-
ժեշտ բուժում եւ համապատասխան խնամք բուժակեր-
սոնալի կողմից. այնտեղ ժամանակին կողենն նրան եւ
կտան պահանջված դեղորայքը: Նրան շտապ կար-
գով հիվանդանոց տեղափոխելու դործում, բացի
հիվանդից, շահադրդոված պետք եւ լինեն վոչ միայն
նրա հարազատները եւ բոլոր նրանք, վորոնք ապ-
րում են նրա հետ մեկ տան մեջ, այլ եւ բոլոր հա-
մադրուղացիները:

Մենք արդեն ասել ենք, թե վորքան վարակիչ
եւ ծաղկով հիվանդը: Հիվանդանալու սկզբից մինչեւ
բոլոր փեղեղների թափելը, իսկ յերեւմն եւ ամէլ
ուշ, նա վարակի տարածման աղբյուր եւ հանդիսա-
նում եւ շափաղանց փտանդալոր եւ շրջապատի հա-
մար: Ուրեմն ամբողջ կոլտնտեսութեանը եւ վոզ
դրուր պետք եւ շահադրդոված լինեն, վորպեսզի
ծաղկով հիվանդին տեղափոխեն հիվանդանոց:

Ինչպէս եւ անեն կոլտնտեսականները ազգա-
բնակչութեանը ծաղկից ևախապահպանելու հա-

մար. — Քանի դեռ ծաղկով հիվանդը տանն եւ, ծաղ-
կի միկրոբները կարող եյն ընկնել անմիջապէս մարդ-
կանց վրա եւ վարակել նրանց. հագուստեղենին,
սենյակի պատերին, հատակին, նաեւ հիվանդի սեն-
յակում գտնվող այլ իրերի վրա: Բոլոր այդ իրերը
կարող են վարակել աղբյուր դառնալ եւ յետեւ ժամա-
նակին անհրաժեշտ միջոցներ ձեռք հառնվեն, ծաղկի
համաճարակը կարող եւ տարածվել ամբողջ դրու-
րում:

Հենց վոր հայտարարվեց ծաղկով հիվանդը, կու-
տնտեսութեան սանիտարները պետք եւ անմիջապէս
կազմակերպեն բրիգադ ծաղկի դեմ պայքարելու հա-
մար: Ա-
րոր անհրաժեշտ միջոցներն անցկացնելու համար: Ա-
մենից առաջ պետք եւ հողալ, վորպեսզի մինչեւ
հիվանդին այնտեղից հեռացնելը, մինչեւ ալդտեղ գե-
լինֆեկցիա կատարելը, վոչ վոք չմանի այն տունը,
վորտեղ գտնվում եւ ծաղկով հիվանդը եւ վորպեսզի
ալդ տանն ապրողներից վոչ վոք չայցելի հարեան-
ներին: Պետք եւ կազմակերպել ծաղկով հիվանդին
շտապ կերպով հիվանդանոց տեղափոխելու դործը:
Հենց վոր հիվանդին տեղափոխեցին հիվանդանոց,
պետք եւ հողալ, վորպեսզի դեղինֆեկցիայի յենթարկ-
վի նրա բնակարանը:

Յերբ դան դեղինֆեկցիա կատարողները, սանիտա-
րները պետք եւ հսկեն, վորպեսզի բոլոր իրերն
ախտահանվեն: Յերեմն պատահում եւ, վոր հիվան-
դի ծնողները վախենալով, թե ախտահանումից կա-
րող եւ փչանալ այն մուշտակը կամ վերմակը, վորով
ծածկված եւ յեղել հիվանդը, թագցնում են ախտա-
հանողից: Այդ դեպքում հարկավոր եւ, վոր սանիտա-
րը բացատրի նրանց, թե վորքան կարեւոր եւ, ա-

սանց բացառութեան, ախտահանել բոլոր իրերը, վորոնց հետ չվիել է հիվանդը և վորոնք դտնվել են նրա պտակած սենյակում: Սանլիազորը պետք է հետեի, վորպեսզի բոլոր իրերը ախտահանվեն և վորպեսզի ախտահանումը կատարված լինի, ինչքան հնարավոր է ուշադրութեամբ և ինամբոյ:

Անուհետե կոլտնտեսութեան սանլիազորները, գլուղը պետք է բաժանեն թաղամասերի և յուրաքանչյուր թաղամասին կցեն մեկական սանլիազոր: Յերկու չարաթիւս ընթացքում, ամեն ուր սանլիազորը պետք է անցնի իր թաղամասի տները, ստուգելու թե ծաղկով հիվանդ չկա արդյոք վորեւ տեղ: Յեթե չըջացի ժամանակ հաշտաբերվեց մի հիվանդ, վորի ջերմատոճանը բարձր է և մարմինը ծածկված է ցանով, ալքարիսի հիվանդին անթիջապես, ստանց սպասելու բժշկի գալուն, պետք է տեղափոխել հիվանդանոց:

Ծաղիկ հիվանդութեան առաջին իսկ դեպքից հետո, բժշկական տեղամասը պետք է ծաղկահատ ուղակի գլուղի կամ սոխանի ամբողջ աղգարնակութեան ծաղիկը պատվաստելու համար:

Ծաղկահատի դալուց առաջ, սանլիազորները պետք է կազմեն, առանց բացառութեան, գլուղում բոլոր ապրողների անվանացուցակը և յերբ ծաղկահատը դա, նրանք պետք է հետեան, վոր կոլտնտեսութեան մեջ և ամբողջ գլուղում առանց պատվաստման վոչ մի մարդ չմնա:

Յեթե սանլիազորներն իմանան, վոր հիվանդի մոտ հյուրեր են յեղել ուրիշ գլուղից, պետք է ալքամասին հայտենն բժշկական տեղամասին, վորը պար-

տալոր և ալք գլուղում ևս պատվաստումներ կատարել:

Բաց ինչպես մենք մի քանի անգամ ասել ենք, ավելի լավ է կոլտնտեսութեան սանլիազորների ալքատանքներն այնպես կազմակերպել, վորպեսզի չլինի ծաղկով հիվանդանալու վոչ մի դեպք, վորպեսզի հնարավոր լինի կանխել ծաղկի յերեան գալը:

Խորհրդային առողջապահութեան ինչպես է կանխում ծաղիկը. — Մեր յերկրում ծաղիկ հիվանդութեան վերջնականապես վերացված է և առողջապահական մարմինները մեծ աշխատանք են տանում ծաղկի պատվաստման գծով: Պետք է անտանում ծաղկի պատվաստել ամեն մի նորածին յերեխայի ծաղիկը:

Նորածին յերեխաներին առաջին պատվաստումով ընդդրիկելու նպատակով, չըջանային առբաժինները հաշվառման են յենթարկում բոլոր նորածին յերեխաներին: Դա արվում է նորածինների համար յեղած քարտերի միջոցով, վորպեսզի կան դադսերում:

Առբաժինը քարտերն ուղարկում է մանկական բուժարաններին և կոնսուլտացիաներին: Այդպիսով ամեն մի բուժարան և ամեն մի կոնսուլտացիա գիտե, թե ինչքան և վոր գլուղումն է յերեխա ծնվել: Յեթե ծնողները իրենք չեն բերում յերեխային պատվաստելու, ապա բժիշկները նրանց հիշեցում են ուղարկում յերեխաների պատվաստման անհրաժեշտութեան մասին:

Բացի դրանից, տարին շ անգամ գլուղերն են չըջում առբաժնի կողմից ուղարկված հատուկ ծաղկահատներ, վորոնք ծաղկի պատվաստումներն են

կատարում ղարոյցում ինչպես նաև տնկերում, կամ մի տան մեջ, մորտեղ հավաքվում են բոլոր նրանք, մորոնց ծաղիկը պետք է պատվաստվի :

6—7 որից հետո ծաղկահատը նորից ե գալիս ստուգելու, թե ում ծաղիկն է բռնել, ումը վնջ: Անհրաժեշտ ե բոլոր յերեխաներին բերել ստուգման, և ներկայանան բոլոր նրանք, ում պատվաստել են: Բուժարանը պետք ե գիտենա, թե ում ծաղիկը չի բռնել: Յեթե մեծի ծաղիկը չի բռնել, դա սովորաբար ցույց ե տալիս, վոր ներկայումս նրա որդանկոմը զգայունակ չե ծաղկի վարակ ընդունելուն և նա պարտավոր ե մեկ տարի հետո նորից պատվաստել տալ իր ծաղիկը: Բայց յեթե բացասական հետևանք ե տալիս դեռ պատվաստման չյենթարկված յերեխայի ծաղկի պատվաստումը, ապա անհրաժեշտ ե ամեն յերկու-յերեք ամիսը մեկ պատվաստել ծաղիկը, մինչև վոր դրական հետևանք ստացվի: Քանի վոր ծաղկի պատվաստումը ուժի մեջ ե մնում մոտավորապես 5 տարի, ապա պետք ե այդպիսին վերկնել հետևյալ հերթականությամբ՝ բոլոր նորածինների ծաղիկը պետք ե պատվաստել նրանց կյանքի առաջին տարում, յերկրորդ պատվաստումը կատարել 4-5 տարեկան հասակում, յերրորդը՝ 10-11 տարեկան և չորրորդը 19-20 :

Ծաղկի դեմ պատվաստումները կատարվում են
շարտադիր կարգով մանկապարտեզ, դպրոց, կար-
միր բանակ ընդունվելու ժամանակ: Պատվաստումնե-
րից կարող ե ազատել միայն բժիշկը, յեթե նա դրու-
նի, վր տվյալ դեպքում, ինչ-ինչ պատճառներով
պատվաստում չպետք է կատարեց:

Սորհրդային իշխանությունն այդպիսի մասնաշաղկապան միջոցառումները միշտ տանում է լայն հասարակության ուղևորությամբ և իսկապես անհնարին է միայն բուժաշխատողների ուժերով այդպիսի մեծ աշխատանք տանել։ Անհրաժեշտ է, վերապահել ամբողջ կողմը տեսնող թյունը մասնակցի այդ աշխատանքներին, իսկ կողմնատեսության աղտիվը, կողմնատեսության աղտիվադրները կերպով կերպով ուղենն ծաղկի պատվաստման դործի կազմակերպմանը։ Յեվ այդ ուղևորությունը կարող է շատ մեծ լինել։

Եւ իրենց կարողութեան շնորհիւ լինելով
Շատ կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ
միջինէն որս ել դեռ մնացել է այն նախապաշարմունքը,
թե նորածինների ծագկէ պատվաստումը պետք է վրա-
տարօրի ներանց 6 ամսական դառնալուց հետո և միայն
գլարնանը։ Դա վրաստակար նախապաշարմունք է, վորին
պետք է վերջ տալ, վորովհետեւ ծագկով հիվանդա-
նում են նաեւ միջին 6 ամսական յերեխաները, վորոնք
ծագկով հիվանդանալու դեպքում, սովորաբար մա-
հանում են նրանից։

Հանում են նրանից :
Ծաղկի պատվաստումը միանման լավ արդյունք-
ներ է տալիս տարվա բոլոր յեղանակներին՝ թե ձմե-
ռանը, թե աշնանը, թե գարնանը և թե ամռանը :
Միայն ամենաչուր ամիսներին, յերբ կրծքի յերեսա-
ները հաճախ հիվանդանում են մահկական լուծեքով,
պետք է խուսափել պատվաստումների կատարելուց :
Իսկ երբ հիվանդանում են ուրիշ տեսակի լինի-

Կոլտնտեսութեան աւելիւր պետք ե ուրինակ լինի
բոլորի համար և տարվա բոլոր յեղանակներին, բա-
ցառութեամբ ածառվա չող ամիսների, պատվաստում-
ների համար կրնուլտացիա կամ բուժարան բերի ի-
րենց յերկամսական յերեխաներին։ Պետք է բացառ-
ել սակավ գիրտակից կոլտնտեսականներին և մենա-

10

սրնտեսներին այդ պատվաստումների անհրաժեշտութ-
յունը 2 ամսական յերեխաների համար:

Կան աշնայիսի ծնողներ, վորոնք չեն շտապում
հայտնել ՁԱԳՍ-ին նորածնի մասին: Գիտակից կոլ-
տընտեսականներն այդ դեպքում ևս պետք է համո-
զեն ծնողներին, վոր այդ անհրաժեշտ է անել անմի-
ջապես, յերեխայի ծնվելուց հետո, աշխատես րուժա-
րանք և կոնսուլտացիան չեն իմանա, թե վորտեղ նո-
րածիներ կան և յերեխաներից շատերը կմնան ա-
ռանց պատվաստման, կարող են ծաղկով հիվանդանալ
և վարակել ուրիշներին:

Յերբ ծաղկահատը գյուղ է գալիս, աշտեղ ևս
անհրաժեշտ է կոլտնտեսական ակտիվի օգնությունը:

Ամեն մեկն իր կոլտնտեսության մեջ լավ գիտե,
թե վորտեղ են գտնվում նորածին յերեխաները, վոր-
տեղ 4-7 տարեկանները, վորտեղ 10-11 տարեկանները
և վորտեղ չափահասները, վորոնք վաղուց չեն յեն-
թարկվել ծաղկի պատվաստման: Ձորակոչի հասակ
ունեցող յերեխաաւարդությունը պատվաստվում է Կար-
միր Բանակի գնալու ժամանակ, իսկ 19-20 տարիք
ունեցող կանայք և աղջիկները՝ կրկնակի պատվաս-
տումների յին յենթարկվում տեղում:

Ծաղկահատի գալու ժամանակ կոլտնտեսության
սանիտարները, բացի ծաղկի պատվաստումներին
յենթակա մարդկանց ցուցակից, վաղորոք պետք է
պատրաստեն նաե չենք (ընդարձակ սենյակ, կարմիր
սնկյուն, կամ իրճիթ-ընթերցարան), վորտեղ կա-
տարվելու յեն ծաղկի պատվաստումները: Անհրաժեշտ
է այդ չենքը խնամքով լվանալ, վորպեսզի ծաղկի
պատվաստումը մաքուր պայմաններում կատարվի:

Ծաղկահատի գյուղում աշխատելու ժամանակ,
կոլտնտեսության սանիտարները պարտավոր են ող-
նել նրան: Պետք է հետևեն թե ցուցակում մոցված-
ները բոլորն են ներկայացել պատվաստման, բացա-
կայովին կանչեն մեկի միջոցով, վորպեսզի բոլորին
պատվաստեն: Հարկավոր է ծաղկահատին ողնել նաե
պատվաստումների արդյունքներն ստուգելու ժամա-
նակ:

Ընդհանրապես սրանք են կոլտնտեսության սան-
իտարների և բոլոր գիտակից կոլտնտեսականների
խնդիրները ծաղկի կանխելու գործում:

Ներկայումս, յերբ մենք ունենք ծաղկի դեմ պայ-
քարի աշնայիսի հզոր միջոց, ինչպիսին է պատվաս-
տումը, մեր Միության աշխատավորության մեջ ծաղ-
կով հիվանդացումներն անթույլատրելի յեն:

Խորհրդային յերկրում ծաղկով հիվանդանալու
դեպքերը կասեն այն մասին, վոր տեղերում,
գյուղերում, կոլտնտեսություններում՝ ախշատավո-
րությունն ինչպես հարկն է չի ձեռնարկել առողջա-
պահական աշխատանքներին:

Մեր առողջապահական մարմինների, մեր ակտի-
վի, մեր վողջ գիտակից հասարակության միատեղ և
միահամուռ ջանքերով, մենք իսպառ վերացրել ենք
ծաղկի:

Սոցիալիզմի յերկրում ծաղկի չպետք է լինի:

ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁ

Կապույտ հաղբ սուր վարակիչ հիվանդություն է,
ջղաճկական հաղի նոպաներով: Կապույտ հաղբ շատ
տարածված է բոլոր յերկրներում: Կապույտ հաղով

ամենից շատ հիվանդանում են յերեխաները, առանձնապէս 6 ամսականից մինչև 5 տարեկան հասակում: Հիվանդանում են կապույտ հազով և մեծերը, բայց այդ հազվադույտ դեպքում և պատահում:

Շատերը սխալ կերպով, կապույտ հազը, ինչպես և կարմրուկը թեթև հիվանդութիւն են հաշվում և դրա համար հարկավոր չեն համարում պաշտպանել յերեխաներին այդ հիվանդութիւններից: Այն ինչ կապույտ հազը ծանր հիվանդութիւն և և յերեխաները կապույտ հազից քիչ չեն հիվանդանում ու մահանում, քան մյուս վարակիչ հիվանդութիւններից: Կապույտ հազից առանձնապէս շատ են մահանում մինչև 2 տարեկան փոքր յերեխաները:

Հաճախ մայրերը կարծում են, թե կապույտ հազով հիվանդացած յերեխային չպետք է ցույց տալ բժշկի, խորհրդակցել նրա հետ: Թե ինչ կերպ խնամել կապույտ հազով հիվանդացած յերեխային: Յերբմէն մայրերը դիտավորյալ կերպով չեն պաշտպանում յերեխաներին վարակից, նրանք կարծում են, թե միևնույն և, իրենց յերեխան վաղ թե ուշ հիվանդանալու յե կապույտ հազով և դրա համար ավելի լավ է, թող յերեխան առաջուց տանի այդ հիվանդութիւնը: Պետք է պայքարել այդպիսի սխալ, միանապաստեալ տեսակետների դեմ: Պետք է բացատրել անդիտակից ծնողներին, վոր ինչքան փոքր է յերեխան, այնքան ծանր է ընթանում նրա կապույտ հազը, այնքան շատ և մահացութիւնը հիվանդադոցների մեջ և վոր յերեխաներին կարելի յե պաշտպանել կապույտ հազից:

Ինչպես են վարակվում կապույտ հազով.— Ինչպես մյուս մանկական վարակիչ հիվանդութիւնները,

այնպես ել կապույտ հազը շատ վարակիչ է: Կապույտ հազի միկրոբը հայտնի յե, նա ունի բարակ ցուպիկի ձևով:

Վարակի աղբյուրը հանդիսանում է հիվանդ յերեխան:

Կապույտ հազի միկրոբները կուտակվում են հիվանդի շնչական խողովակներում (բրոնխներում) և հազի ժամանակ դուրս են գալիս խորխի հետ միասին: Կապույտ հազով հիվանդի խորխի, թքի և լորձի մեջ կապույտ հազի միկրոբներ կան: Հիվանդութիւնը տարածվում է խորխի, թքի և լորձի փոքր կաթիլների միջոցով, վորոնց շաղ են տալիս հիվանդները հազալու, խոսելու և փռտալու ժամանակ: Միկրոբներն ընկնելով առաջ յերեխայի քթի և կոկորդի մեջ՝ վարակում են նրան:

Կապույտ հազի միկրոբը, մարդու մարմնից դուրս, յերկար ստրել չի կարող: Նա հեշտութեամբ վոչնչանում է արեւից, ուժեղ քամուց, միջանցիկ քամուց, դրա համար կապույտ հազի վարակը սովորաբար իրերի միջոցով չի փոխանցվում: Միկրոբներն ընկնում են այն իրերի վրա, վորոնց հետ շփում է ունեցել հիվանդը, բայց այդ իրերի վրա նրանք յերկար չեն կարողանում ապրել և հեշտութեամբ վոչնչանում են: Յեթե կապույտ հազով հիվանդ յերեխայի իրերն անմիջապէս առողջ յերեխային տալ, վերջինս կարող է վարակվել կապույտ հազով: Որինակ՝ յեթե կապույտ հազով հիվանդ յերեխայի հազի ժամանակ նրա խորխը և նրա հետ միասին կապույտ հազի միկրոբներն ընկնեն խաղալիքների վրա և այդ խաղալիքներն անմիջապէս տան առողջ յերեխային, վերջինս կարող է վարակվել, վորովհետև կարծ ժամանակամիջոցում միկրոբները դեռ չեն վոչնչացել:

Բայց յեթե հիվանդ յերեխայի խաղալիքները լվանալ յեռացրած ջրով և չորացնել արևի տակ, այդ դեպքում կապույտ հազի միկրոբները կվռչնանան:

Այստեղից պարզ է, վոր կապույտ հազի պատճառը միշտ հիվանդ յերեխան է: Միայն անդրտակցության և անդուլտության դեպքում, կապույտ հազի միկրոբները կարող են փոխանցվել իրերի միջոցով:

Ինչպես է ընթանում կապույտ հազը. — Վարակման սկզբից մինչև հիվանդության առաջին նշանների յերևալն անցնում է 5-ից մինչև 15 օր: Դա՛ կապույտ հազի գաղտնի շրջանն է: Այնուհետև յերեխան սկսում է հազալ և փուշտալ, սկսվում է հարբուխ և ջերմատիճանը մի քիչ բարձրանում է: Մի քանի օրից հետո, յերեխան սկսում է հազալ հաճախակի տանջալից չոր հազով, վորը որեցոր ուժեղանում է: Առանձնապես ուժեղ է լինում յերեխայի հազը գիշերները: Նա պատ է քնում:

Այսպես շարունակվում է 10-12, իսկ յերբեմն 14 օր: Այդ շրջանում գլխար է վորոչակի ասել, թե յերեխան հիվանդ է կապույտ հազով, յերբեմն կարծում են, թե յերեխան հիվանդ է գրիպով, վորը սովորաբար սկսվում է հազով և հարբուխով:

Հիվանդության յերկրորդ շաբաթվա վերջին, յերբեմն յերրորդ շաբաթվա սկզբին հազն սկսվում է ուժեղ ջղաձգական նոպաներով:

Նոպան սկսվում է հանկարծակի: Յերեխան ցրում է խուտուտ կրկորդում և ընդհանուր տկալութուն: Հաճախ նրան տիրում է վախի զգացում, վաղում է մեծերի մոտ և սեղմվում նրանց: Այնուհետև նա սկսում է հազալ: Հազը լինում է այնքան ուժեղ և հազի նոպաներն այնքան հաճախ են հետե-

վում մեկը մյուսին, վոր յերեխան չի կարողանում շունչ քաշել: Դրան հաջորդում է կարճատեղ հանգիստ և խորը ներչնչում: Ներչնչումից հետո, նոպաները դարձյալ կրկնվում են: Յերեխայի յերեսը ուռչում է և դառնում է կարմրա-կապտավուն, նոպաների ժամանակ լեզուն դուրս է գալիս բերանից, աչքերը լցվում են արյունով:

Քանի դարդանում է հիվանդությունը, այնքան հաճախակի յեն դառնում նոպաները: Հաճախ նոպաները վերջանում են փախումով և թափանցիկ, պարզ լորձ թքելով: Թեթեւ դեպքերում այդպիսի նոպաները լինում են օրական 15-20 անգամ, իսկ ծանր դեպքերում 30-ից մինչև 60 և ավելի: Հազի նոպաները պատահում են վոչ միայն ցերեկը, այլ և գիշերը: Նոպաների ժամանակ փոխումների հետեւանքով կերածը յետ է գալիս, յերեխաները վատ են սնվում և սկսում են թուլանալ: Հաճախ նրանք հիվանդանում են սակավարյունութամբ: Յերեխաներին ուժեղ կերպով հյուծում են նաև անքուն գիշերները, վորովհետեւ հազի նոպաները նրան չեն թողնում քնելու: Ինչպես մենք ասացինք, կապույտ հազն առանձնապես ծանր են տանում ծծկեր յերեխաները:

Հազի նոպաները շարունակվում են 8 շաբաթ, իսկ յերբեմն ծանր դեպքերում, տեւում է 3-ից մինչև 5 ամիս:

Յեթե յերեխան առողջանում է, այդ դեպքում արդեն 5-րդ շաբաթվա վերջին նոպաները դառնում են ավելի սակավ, կարճ ու թեթեւ: Յերեկը սովորաբար նոպաները անհետանում են բոլորովին, թեպետ գիշերը նրանք դեռ շարունակում են կրկնվել: Յերեխան սկսում է լավանալ, կազդուրվել:

Կապույտ հագով հիվանդներն առանձնապես շատ են մահանում բարդություններից, վորոնք հեշտությամբ միանում են կապույտ հագին, յերբ յերեսան թույլ ե և հյուծված:

Կապույտ հագի՝ բոլորից հաճախակի և ծանր բարդությունները՝ թոքերի բորբոքումն ե և բրոնխիտը: Կապույտ հագի այդ բարդություններից յերեսաները կարող են մահանալ: Ուրիշ բարդություններից լինում են արյունահոսություն քիթից, աղիքների բորբոքում, արյունալեցում աչքեր միեջ: Արյունը լցվում ե աչքի արտաքին լորձաթաղանթի մեջ, աչքը դառնում արնա-կարմրագույն:

Ինչպես խնամել կապույտ հագով հիվանդին — Կապույտ հագով հիվանդը ամենից շատ կարիք ե դրում մաքուր, թարմ ոդի, դրա համար կապույտ հագով հիվանդին պետք ե հեռացել տոթ և փոշոտ քաղաքներից և տանել գյուղ բայց հիվանդության վոչ վարակիչ շրջանում: Նկատված ե, վոր յերբ յերեսան գտնվում ե մաքուր ոդում, հագի նուսաները բավականաչափ պակասում են:

Ամռանը հիվանդ յերեսան ամբողջ ուրը պետք ե լինի թարմ ոդում, իսկ դիչերը պետք ե բաց թողել սենյակի թեկուղ մեկ լուսամուտը, վորպեսզի յերեսայի քնած ժամանակ սենյակը լավ ողափոխվի: Կապույտ հագով հիվանդ յերեսան ձմռանը նույնպես մի քանի ժամ պետք ե դրոսնի փողոցում, բայց տաք հագցրած:

Կապույտ հագի ժամանակ, անհրաժեշտ ե առանձնապես ուշադրություն դարձնել յերեսաների սնդի վրա: Ծծիկեր յերեսային ամենից լավ ե կերակրել մայրական կաթով: 6 ամսականից բարձր

յերեսաներին կարելի յե տալ լրացուցիչ սնունդ՝ ջրովի չիլայի ձեմով: Կարելի յե տալ մի քիչ լավ տոբրված կարտոֆիլ, ավելացնելով նրա վրա կաթ և կարաղ: Ալիլի մեծահասակ յերեսաներին նույնպես պետք ե տալ մանրացրած ուտելիք: Միսը պետք ե տալ վոչ կտորներով, այլ ծեծած՝ պատրաստել կատելիս կամ խառնել այն տոբրած կարտոֆիլի կամ դադարի հետ: Մեծահասակ յերեսաներին նույնպի ժամանակ պետք ե կերակրել կաթնամթերքներով — ժաժիկով, հում սերով, բացի դրանից, նրանց կարելի յե տալ թանձր չիլաներ, տոբրած կարտոֆիլ ծեծած մսով, դադար և այլ բանջարեղեններ լավ յեմած և տոբրած վիճակում:

Յեթե նույնպից հետո յերեսան փախել ե, նրան դարձյալ պետք ե կերակրել նույնպից անմիջապես հետո: Կապույտ հագի ժամանակ փսխումից հետո, սովորաբար սրտախառնություն չի առաջանում և այդ պատճառով նա հանդիստ կարող ե ուտել, նրա սիրտը չի խառնի: Կապույտ հագով հիվանդ յերեսային չպետք ե տալ միանգամից շատ ուտելու, այլ լավ ե ուտեցնել քիչ-քիչ և հաճախ: Հագի նույնպի ժամանակ, պետք ե յերեսային նստեցնել, ձեռքը դնել նրա ճակատին, վորպեսզի յերեսան կարողանա հենվել նրան, պետք ե նրան նեցուկ լինել հագի ժամանակ: Բժշկի ցուցումով յերեսային տաք լողան (վաննա) յեն նստեցնում:

Յեթե կապույտ հագով հիվանդ յերեսան հանկարծակի սկսում ե ուժեղ ջերմել, անհրաժեշտ ե դիմել բժշկի: Ջերմն սկսում ե սովորաբար աչք դեպքում, յերբ կապույտ հագին բարդություն ե միանում, այդպիսի դեպքերում պետք ե բուժել, վո-

քը կարող է միայն բռնել: Հիվանդութեան ծանր դեպքերի ժամանակ, յերեխային պետք է տեղափոխել հիվանդանոցում:

Ինչպես կանխել կապույտ հազի տարածումը կոլոստոստոքյուններում. — Յերբ կոլոստոստոքյան մեջ հայտնվում է կապույտ հազով թեկուզ մեկ հիվանդ, շատ դժվար է կանխել հիվանդութեան տարածումը առողջ յերեխաների մեջ: Դա դժվար է այն պատճառով, վոր հիվանդ յերեխան պակած չի լինում, այլ ման է դալիս, վազվզում, բացի դրանից, նրա հիվանդութունը յերկար է տևում, նրան դժվար է հեռու պահել մյուս յերեխաներից: Այնուամենայնիւ, պետք է ամեն կերպ աշխատել, վոր կապույտ հազով չվարակվեն կոլոստոստոքյան մյուս յերեխաները: Այն բնակարանում, վորտեղ գտնվում է կապույտ հազով հիվանդ յերեխան, անհրաժեշտ է ձեռք առնել նախադիտչական միջոցներ, վորպեսզի մյուս յերեխաները չվարակվեն:

Հիվանդի անկողինը անպայման պետք է առաձին և հեռու լինի մյուս յերեխաների անկողնից: Հիվանդը պետք է ուղտվի նաև առանձին ամանից: Մինչև հիվանդութեան վերաջանալը, նրա ամանեղենը չպետք է խառնել մյուս յերեխաների ամանների հետ և առանձին լվանալ:

Պետք է աշխատել հիվանդին հեռու պահել առողջ յերեխաներից: Յեթե ըտանիքում կան ուրիշ յերեխաներ, վորոնք արդեն անցկացրել են կապույտ հազը, այդ դեպքում հիվանդ յերեխան կարող է նրանց հետ խաղալ: Ով մեկ անգամ հիվանդացել է կապույտ հազով, յերկրորդ անգամ հազվադէպ դեպքում է հիվանդանում:

Կապույտ հազով հիվանդը վոչ մի դեպքում չպետք է հանդիպի ուրիշ աների յերեխաների հետ:

Յեթե պատահում է, վոր դուղի զանազան աներում արդեն կան կապույտ հազով հիվանդներ, պետք է կազմակերպել կապույտ հազով հիվանդների խմբակ, վորպեսզի նրանք միասին խաղան և զրոսեն մաքուր ողում: Անհրաժեշտ է, վոր այդ հիվանդ յերեխաների մայրերը իրար հետ պայմանավորվեն, վորպեսզի նրանք հերթով խաղան այդ յերեխաների հետ և հսկեն նրանց:

Անհրաժեշտ է հետեւել, վորպեսզի կապույտ հազով հիվանդ յերեխաները չափից դուրս չվազվզեն և խաղան. չափազանց ուժեղ շարժումներից սովորաբար ուժեղանում են հազի նոսրաները: Յուրաքանչյուր մայր զբաղված է անալիս դանազան գործերով և հսկել մի յերեխայի դժվար է նրա համար: Յերեխան մնում է առանց հսկողութեան: Իսկ յեթե, որինակ՝ 10 տան մեջ կան հիվանդներ և ըստ 10 մայրերը պայմանավորվում են իրար հետ, այդ դեպքում նրանցից ամեն մեկը, միայն 10 որը մեկ, մի քանի ժամ կտրամադրի հիվանդ յերեխաների հետ զրոսնելու և հսկելու համար: Դրանում չահազդուված պետք է լինեն բոլոր ծնողները: Կապույտ հազով հիվանդ յերեխաները կգտնվեն հսկողութեան տակ, պահանջված դեպքում կտանան ոգեշություն և վերջապես նրանք չեն խաղա առողջ յերեխաների հետ և չեն վարակի նրանց:

Կապույտ հազով հիվանդ յերեխաներին չի թույլատրվում հաճախել մանկական հիմնարկներ 6-8 շաբաթվա ընթացքում, քանի դեռ նրանց մոտ չարունակվում է հիվանդութունը: Ութ շաբաթից

հետո, թեև յերեխան շարունակում ե հազալ, բժիշկը թույլատրում ե նրան հաճախել մանկական հիմնարկ, վորովհետեւ նա արդեն վտանգավոր չե ուրիշ յերեխաների համար: Ութը շաբաթից հետո, նրա խորխում կապույտ հազի միկրոբներ չեն լինում: Յեթե կոլտնտեսութեան մեջ կապույտ հազով հիւանդներ չատ կան, այդ դեպքում հնարավոր ե կապույտ հազով հիւանդ յերեխաներից, վորոնք հատուկ խնամք ե պահանջում, հատուկ խմբակ կազմակերպել: Այդպիսի խմբակ կարելի յե կազմակերպել այն դեպքում, յերբ հնարավոր ե հիւանդ յերեխաներին առանձնացնել առողջներից:

Թեև կապույտ հազի միկրոբները մեղ հայտնի չեն, բայց դիտութեանը դեռ չի գտել պատվաստումներ կապույտ հազի դեմ, ինչպես ուրիշ հիւանդութեանների դեմ, որինակ՝ դիֆթերիայի, քութեչի, ծաղիկ ե այլն: Ներկայումս դիտնականները այդ խնդրով չատ են դրադված, բայց առայժմ՝ միայն այդ պատվաստումների փորձերն են կատարվում:

Պետք ե հուսալ, վոր կապույտ հազի դեմ ևս կգտնեն հատատուն միջոցներ: Գիտութեանն այստեղ ևս կգտնի հատատ միջոցներ, այդ հիւանդութեան դեմ պայքարելու համար:

Ձ Ր Ծ Ա Ղ Ի Կ

Անցյալում կարծում եյին, վոր ջրծաղիկը և բնական ծաղիկը միևնույն հիւանդութեանն ե, կարծում եյին, վոր ջրծաղիկը բնական ծաղիկի թեթեւ ձևն ե: Այդ պատճառով համարում եյին, վոր յեթե մարդը հիւանդացել ե ջրծաղիկով, նա այլևս

չի հիւանդանա բնական ծաղիկով ե ընդհակառակը: Բայց այդ յենթադրութեանը սխալ եր:

Ջրծաղիկը չպետք ե շփոթել բնական ծաղիկի հետ: Դրանք բոլորովին տարբեր վարակիչ հիւանդութեաններ են: Ջրծաղիկ հիւանդութեանն անցկացրածները, կարող են հիւանդանալ բնական ծաղիկով ե ընդհակառակը, բնական ծաղիկով հիւանդացողները կարող ե հիւանդանալ ջրծաղիկով:

Ջրծաղիկը յերեխաների մոտ թեթեւ ե անցնում ե՝ համարյա յերբեք մահացութեան չի տալիս: Յերեխաները նրանից շատ հազվադեպ դեպքում են մահանում ե այն ել, յեթե այդ հիւանդութեանը ծանր բարդութեաններ են միանում:

Ինչպես եմ վարակվում ջրծաղիկով. — Ջրծաղիկը սուր վարակիչ հիւանդութեանն ե: Նրա միկրոբը հիւանդից առողջին ե փոխանցվում՝ թքի ե րորձի փոքր կաթիլների միջոցով, վորոնք ընկնում են ողի մեջ հիւանդի փուշտոցի ե հազի ժամանակ:

Ջրծաղիկով ամենից շատ հիւանդանում են 6 ամսականից բարձր յերեխաները, բայց կարող են նրանով հիւանդանալ նաև ամենափոքր յերեխաները: Տառ տարեկանից բարձր տարիք ունեցողները ջրծաղիկով շատ հազվադեպ դեպքերում են հիւանդանում:

Ջրծաղիկը շատ վարակիչ ե, համարյա նույնքան, վորքան ծաղիկը ե կարմրուկը: Բավական ե, վոր յերեխան մուտք դործի հիւանդի սենյակը, վորտեղ ջրծաղիկով հիւանդ կա ե մնա այնտեղ մի քանի րոպե, վորպեսզի վարակվի ջրծաղիկով:

Ջրծաղիկի միկրոբը կայուն չէ և մարդու որդանից դուրս շատ շուտ վոլնչանում է:

Ինչպես է բնթանում ջրծաղիկը.— Ջրծաղիկի դադանի շրջանը շարունակվում է 14-ից 20 օր: Այդ ժամանակն անցնելուց հետո, յերեխան, վորը վարակված է ջրծաղիկով, զգում է բնդհանուր տկարություն, նրա ջերմաստիճանը բարձրանում է և առաջ է դալիս գլխացավ: Յերեխաները դառնում են անհանդիստ, լալկան, վատ են քնում, չեն ուզում ուտել: Յերեխան նրանք դանդաղում են բերանի և վորովայնի ցավերից: Մի քանի յերեխաներ փրսխում են, զոդացնում, նրանց ջերմությունը բարձրանում է, սկսում են դառնացել:

Դրանից հետո, ամբողջ մարմնի, յերեսի և զլխի մաշկի վրա առաջ է դալիս ցան (բծեր): Մի քանի ժամից հետո բծերը վեր են ածվում բշտիկների: 4 օրից հետո բշտիկները չորանում են և առաջանում է կեղեվ. 6-7 օրից հետո կեղեվը թափվում է: Բշտիկների տեղը յերբեք սպիներ չեն առաջանում, ինչպես դա միշտ լինում է բնական ծաղկի ժամանակ: Այնուհետև հիվանդն սկսում է առողջանալ:

Ջրծաղիկի ժամանակ բարդությունները շատ հազվադէպ դեպքերում են լինում: Բարդությունները նկատվում են միմիայն վատ խնամքի ժամանակ, կամ թուլակաղմ յերեխաների մոտ: Ջրծաղիկի բարդություններից են՝ թոքերի բորբոքումը, հոգերի թարախային բորբոքումը:

Թեպետ ջրծաղիկն այնպիսի հիվանդություն է, վորն առանձնապես վնաս չի հասցնում յերեխային,

այնուամենայնիվ անհրաժեշտ է պաշտպանել յերեխաներին այդ հիվանդությունից և միջոցներ ձեռք առնել վորպեսզի նա չտարածվի կոտնտեսության յերեխաների մեջ:

Հիվանդ յերեխան պետք է պառկած լինի առանձին անկողնում: Անկողինը պետք է լինի մաքուր. պետք է հետելել, վորպեսզի, յերեխան չքորի մաշկը և ձեռքերով չկեղտոտի մաշկի վրա բշտիկներից առաջացած վերքերը: Կեղտոտությունից առաջանում է թարախակալում և կարող է ծանր քարդությունների տեղիք տալ: Առողջ յերեխա բարդությունների տեղիք տալ զնալու հիվանդների մոտ: Ներին չպետք է թուլլ տալ զնալու հիվանդների մոտ: Հիվանդացած յերեխային անհրաժեշտ է առանձնացնել առողջներից: Հիվանդը դպրոց չպետք է հանալի, մինչև վոր թափվի նրա մաշկի կեղևը: Շենքը, ձախի, մինչև վոր թափվի նրա մաշկի կեղևը: Վորտեղ գտնվում է հիվանդ յերեխան անհրաժեշտ է լալ ոդալիսել, անհրաժեշտ է բլանալ հադուստեղներ և սալիսակեղներ, իսկ ամանեղներ յեռացնել: Պետք է լալ լողացնել նաև իրեն՝ յերեխային:

Ամենադլխալօրը, վորը պետք է հիշել ջրծաղիկի մասին, դա այն է, վոր ջրծաղիկ անցկացրած մարդը չի ադատվում բնական ծաղկով հիվանդանալուց և այն յերեխաները, վորոնք հիվանդացել են ջրծաղիկով, պաշտպանուր են ծաղկի պատվաստման յենթարկվել:

Խ Ո Ջ Ո Ւ Կ

Խոզուկ հիվանդությունը տարածված է բոլոր յերկրներում: Դա սուր վարակիչ հիվանդություն է: Փոքր յերեխաները շատ հազվադէպ դեպքում են ֆոքր յերեխաները շատ հազվադէպ դեպքում են ֆոքր հիվանդանում նրանով: Խոզուկով ամենից շատ հի-

վանդանում են 6-15 տարեկան յերեխաները: Մեծերը խողովակով հիվանդանում են հազվադեպ դեպքում, բայց նրանց մոտ այդ հիվանդությունն ավելի ծանր է ընթանում, քան յերեխաների մոտ:

Խոզուկի միկրոբները գտնվում են հիվանդների թքի մեջ: Նրանք կենսունակ չեն և հեշտությամբ վնասվում են մարդու որդանիզմից դուրս: Խոզուկի վարակը առողջին է փոխանցում հիվանդից, միկրոբը իրերի միջոցով չի փոխանցվում:

Խոզուկն ինքնին ծանր հիվանդություն չէ և մահացությունը նրանից շատ հազվադեպ է լինում, այն ել լուրջ բարդությունների ժամանակ: Խոզուկի դադանի չրջանը տեւում է 14-25 օր: Հիվանդության սկզբին յերեխան դանդաղում է ականջի ցավից, սրտախառնոցից, գլխապտույտից, նրա ջերմաստիճանը բարձրանում է: Այնուհետև յերեխայի հարականջային (ականջի հետին մասի) դեղձերը սկսում են ուռչել: Ուռուցքը զարգանում է կամ միայն մեկ կողմից, կամ յերկու կողմից: Ուռուցքն արագ զարգանում է և տարածվում այտի վրա: Հաճախ նա լինում է յերկկողմանի և յերեխայի յերեսը ստանում է խողի դլխի տեսք, (դրա համր ել այդ հիվանդությունը կոչվում է «Խոզուկ»): Բերանը բանալիս, ծնոտի հողում ցավ է զգացվում. հիվանդը դժվարությամբ է բաց անում բերանը և չի կարողանում ծամել: Ուռուցքը մնում է 3-ից մինչեւ 5 օր, հետո աստիճանաբար իջնում է և 10-14 օրից բոլորովին անհետանում: Յերբեմն պատահում է, վոր խոզուկին միանում են բարդություններ՝ տղաների մոտ ամորձիների բորբոքում, իսկ աղջիկների

մոտ՝ ձվարանների բորբոքում. յերբեմն պատահում է ականջների հիվանդություն:

Խոզուկով հիվանդը վարակիչ է սկսած հիվանդության սկզբից յերեք շաբաթվա ընթացքում և վորպեսզի նա չվարակի իրեն ընկերներին, չի կարելի թույլատրել նրան դպրոց դնալ հիվանդության օրից մինչեւ 3 շաբաթ լրանալը:

Ինչպես մյուս վարակիչ հիվանդությունների ժամանակ, այնպես ել խոզուկով հիվանդ յերեխային պետք է հեռու պահել մյուս յերեխաներից, առանձին տեղ քնեցնել և առանձին կերակրել:

ՄԱՆԿԱԿԱՆ ԼՈՒԾԵՐ

Ինչից եմ առաջանում մանկական լուծեր. — Մանկական լուծերը վաղահասակ յերեխաների համար ամենից հաճախակի պատահող հիվանդություններից են և մահացության գլխավոր պատճառ են դառնում առավելապես մինչեւ մեկ տարեկան յերեխաների համար: Հետեւապես պայքարը մանկական լուծերի դեմ առողջապահական մարմինների և խորհրդային հասարակայնության կարեւորագույն խնդիրներից մեկը պետք է հանդիսանա:

Շատ անգամ լուծերը լինում են յերեխայի անկանոն սննդից: Յերեխաների դերսնման կամ թերսնման, կամ վոչ պատշաճ սնունդ տալու դեպքերում, նրանց մոտ առաջանում է սննդառության խանգարում, վորը և լուծեր առաջանալու պատճառ է դառնում: Վորպեսզի յերեխան կարողանա կանոնապես սնվել և զարգանալ, անհրաժեշտ է նրան տալ իր հասակին համապատասխան կերակուր: Կերակու-

քը պետք է տալ բավարար չափով և վորոշ ժամե-
րին:

Կերակուրն ընկնում է ստամոքսը, իսկ աշխտեղից
աղիքները: Ստամոքսի և աղիքների մեջ կերակուրը
մարսվում է մարսողական հյութերի միջոցով:
Մարսված կերակուրը ծծվում է արյան մեջ և նրա
միջոցով տարածվում ամբողջ մարմնում:

Բայց վորպեսզի կերակուրը յուրացվի յերեսայի
որդանիղմի կողմից, անհրաժեշտ է, վոր նա յերեսայի
տարիքին համապատասխան լինի, վորպեսզի յերեսայի
ստամոքսը և աղիքները կարողանան մարսել այն: Յեթե
6 կամ 8 ամսական յերեսային սեվ հաց կամ միս
տան ուտելու, նրա ստամոքսը և աղիքները չեն կա-
րող մարսել և կսկսվի լուծը: Յերեսայի ստամոքսն
այդ ուտելիքը չի մարսի և նա դուրս կմղվի աղիք-
ների միջոցով: Այդպիսի ուտելիքը վոչ միայն ոգուտ
չի բերի յերեսային, այլ վնաս կպատճառի նրան,
վորովհետև կսկսվի լուծը, վորը սովորաբար ուժեղ
կերպով հյուծում է յերեսային:

Ամենից հարմար կերակուրը ծծկեր յերեսայի
համար կնոջ կրծքի կաթն է: Կովի կաթը ծծկեր յե-
րեսայի ստամոքսն անհամեմատ ավատ է մարսում:
Յերեսան ամենից լավ աճում է ու դարգանում
կրծքով կերակրվելու դեպքում:

Յերեսային չափազանց հաճախ կերակրելուց,
ինչպես այդ անում են մի քանի մայրեր, յերեսայի
ստամոքսը և աղիքները չեն կարողանում կերակուրը
մարսել, վորից յերեսայի մարսողությունը խան-
դարվում է: Անդիտակից մայրերը, յերբմն յերեսա-
յին իզուր տեղը կերակրում են հենց վոր նա լաց է

լինում: Կան մայրեր, վորոնք յերեսաներին իրենց
կողքին են քնեցնում և յերբմն յերեսան ամբողջ
դիչերը բերանից բաց չի թողնում մոր կուրծքը:
Բացի վնասից, յերեսան դրանից վոչնչ չի ստանում:
Ստամոքսը չի մարսում կերակուրը և նա հիվանդա-
նում է լուծով: Յերեսային թերսնելու դեպքում,
նա թուլանում է, նհարում, նրա ստամոքսի և ա-
ղիքների աշխատանքը խանդարվում է, և նա նույն-
պես հաճախ հիվանդանում է լուծով:

Բայց լուծերի գլխավոր պատճառը աղիքային
միկրոբներն են, վորոնք ապրում են մարդկանց և
կենդանիների աղիքների ստորին մասերում և մի-
շխարհներով դուրս են գալիս կղանքի հետ:

Աղիքային միկրոբները կարող են ապրել մարդ-
կային որդանիղմից դուրս: Նրանք գտնվում են ամե-
նուրեք, վորտեղ կարող են տարվել կղանքի թեկուզ
ամենաչնչին մասնիկները: Նրանք կարող են ապրել
և բազմանալ ուտելիքի, կաթի մեջ, մսի և այլ
անդամթերքների վրա, վորոնք դրժադրվում են
մարդու կողմից վորպես ուտելիք: Աղիքային միկ-
րոբներն ամենից լավ բազմանում են տաքության
մեջ: Բավական է, վոր մի քանի աղիքային միկրոբ-
ներ ընկնեն կաթի մեջ, մսի վրա կամ այլ անդա-
մթերքների վրա տաք տեղում, վորպեսզի նրանք
սկսեն արագորեն բազմանալ: Յեթե այսպիսի ուտե-
լիքը, վորի մեջ դարգացել են շատ միկրոբներ, ընկ-
նի յերեսայի աղիքների մեջ, յերեսան կհիվան-
դանա լուծով: Ամառվա չող որերին մթերք-
ներն առանձնապես հեշտությամբ են փչանում,
միկրոբների արագ բազմանալու պատճառով և յե-

բեխաները լուծով հաճախ հիվանդանում են առանձնապես աժառը՝ տարվա չող յեղանակներին:

Աղիքային միկրոբներն ինչպես են ընկնում յերեխայի աղիքների մեջ.—Մենք արդեն ասացինք, վոր աղիքային միկրոբները յերեխային են անցում վարակած ուտելիքի հետ:

Ինքը՝ մայրը կարող է յերեխային վարակել նույնիսկ իր կաթով կերակրելու ժամանակ, յեթե նա կուրծք է տալիս անլվա ձեռքերով, յեթե նա մինչ այդ չլվում է ունեցել կենդանիների հետ, յեթե նա յերեխային կուրծք է տալի, նախորոք չլվանալով պտուկը տաք ջրով:

Բայց ամենից հաճախ յերեխան աղիքային միկրոբներով վարակվում է կովի կաթից:

Կաթի մեջ միկրոբները հաճախ ընկնում են կթելու ժամանակ: Այդ բանը կատարվում է այսպես: Կովի կղանքի հետ միասին աղիքներից դուրս են դալիս բաղմաթիվ միկրոբներ, վորոնք ընկնում են նրա ստինքի և պոչի վրա: Կովին կթելու ժամանակ ստինքից, պոչից և բորից, վորոնք կեղտոտված են դոմաղբով, միկրոբները կարող են ընկնել կաթի մեջ, այնտեղ նրանք արագ բաղմանում են: Յեթե այդպիսի կաթը առանց յեռացնելու տանք յերեխային, միկրոբները կընկնեն յերեխայի աղիքներին մեջ և նրան կհիվանդացնեն լուծով:

Մենք արդեն ասացինք, վոր միկրոբները վորչիցանում են յեռացումից, դրա համար յերեխային աղիքային միկրոբներով չվարակելու նպատակով, հարկավոր է յեռացրած կաթ տալ նրան: Աղիքային

միկրոբներով կարելի չէ յերեխային վարակել յեթե նրան տալ թեև յեռացրած կաթ, բայց վատ լվացած չչից և կեղտոտ ծծակով:

Ծամոնի մեջ, վոր յերբեմն մայրերը կամ դայակները տալիս են յերեխային, բաղմաթիվ միկրոբներ են դնելում, վորովհետև մարդու բերանում միշտ էլ մեծ քանակութամբ միկրոբներ են լինում: Ծամած ծծակով կերակրելը յերեխայի լուծ է առաջացնում: Ուտելիքը կարող է միկրոբներով կեղտոտվել ճանճերի միջոցով: Մենք արդեն ասացինք, վոր ճանճերն իրենց թաթիկներով և թեփելով միկրոբներ են տեղափոխում աղբից անսղամթերքների վրա՝ կաթի, հացի, մսի և ամենուրեք, ուր նրանք նստում կն:

Պատահում է, վոր մարդիկ իրենց ձեռներով են տեղափոխում աղիքային միկրոբները ուտելիքի վրա: Որինակ, յեթե յերեխան հիվանդ է լուծով և մայրը խնամում է նրան, մաքրում է նրա կեղտոտ բարուրը և այնուհետև անլվա ձեռներով վերցնում է հաց կամ ուրիշ ուտելիք, ապա նա ուտելիքը վարակում է աղիքային միկրոբներով: Մյուս յերեխան ուտելով այդ կերակուրը, նույնպես վարակվում և հիվանդանում է լուծով:

Աղիքային միկրոբները կարող են ապրել նաև ջրում: Մենք արդեն ասել ենք այն մասին, թե ինչպես են վարակվում ջրհորները աղիքային միկրոբներով, բայց միկրոբները կարող են ջրի մեջ ընկնել նաև տանր: Պատահում է վոր ջուրը դնելում է բաց դուլի մեջ, ջրի այդ ձևով պահելու դեպքում, նրա մեջ կընկնեն ճանճերը և կվարակեն ջուրը:

Ջրի գույլին կարող են մոտենալ շներ, կատուներ, խոնկե և հոտոտել, թափահարել գույլի վրա իրենց պոչը, այդ բոլորը կկեղտոտի ջուրը աղիքային միկրոբներով։ Յերբ յերեխան խմում է այդ ջուրը, կամ այդ ջրով լվանում են յերեսը, նրա ամանեղենը, ապիք ջրով լվանում են յերեսը, նրա բերանը, իսկ պիքային միկրոբներն ընկնում են նրա բերանը, իսկ ախտեղից պոտամոքսի միջոցով անցում աղիքների մեջ և յերեխան հիվանդանում է լուծով։

Հաճախ աղիքային միկրոբները յերեխայի սրգանից են ընկնում այն ժամանակ, յերբ նա սողում է կեղտոտ հատակին, վերցնում հատակի վրա թափված իրերը և տանում է բերանը։ Նրա կեղտոտ ձեռքերի և իրերի վրա դառնում են աղիքային միկրոբները, վորոնք տեղափոխվել են կեղտոտ հատակից, վորտեղ քայլում են մարդիկ և ընտանի կենդանիներ։

Միկրոբները կարող են մարդու որպանիքմի մեջ ընկնել անվառ բանջարեղենների և մրգերի միջոցով, վորոնց վրա միկրոբները փոխանցվում են ճանճերի, վարակված ջրի, կեղտոտ ձեռքերի միջով։ Միկրոբները կարող են ընկնել բանջարեղենների ու մրգերի վրա նաև աղբված հոգից։

Ինչպես եմ արտահայտվում մանկական լուծերը։

Ինչպես բոլոր հիվանդությունները, նույնպես և լուծերը, լինում է թեթևի և ծանր։ Բայց ամենաթեթևի լուծը կարող է վերածվել ամենածանրի, յեթե յերեխային չխնամել ու չբուժել անհրաժեշտ ձևով։

Թեթևի լուծը միանգամից չի սկսվում, այլ աստիճանաբար։ Յերեխան դուրս է գնում նորմալ, ու

բախան 1-2 անգամ։ Այնուհետև ավելի շատ-շատ, որական 4-5 անգամ, իսկ յերբեմն ավելի։ Կղանքը դառնում է ջրալի և վոչ դեղին գույնի, ինչպես լինում է սոլորաբար, այլ կարծես թե չաղված կանաչի հետ։ Լուծի հետ միասին, սկսվում է գկոտոց և փսխում։

Յեթե յերեխան շատ թուլացած չէ, պատշաճ ձևով խնամելու և բուժելու դեպքում, նա շուտով առողջանում է։

Իսկ յեթե յերեխան մինչև լուծը հյուծված է յեղել, ապա հիվանդությունն ուժեղ է դարձանում։ Լուծը կրկնվում է ավելի ու ավելի հաճախ։ Հաճախ է կրկնվում նաև փսխումը։ Յերեխան սկսում է տաքացնել։ Նա դառնում է անշարժ։ Նա հաճախ է շնչում, մաշկը չորանում է։ Լուծը խիստ հյուծում է յերեխային։ Շատ անգամ յերեխան մահանում է լուծից։

Յեթե հաջողվում է ազատել աղբյուրի յերեխային, այդ դեպքում հարկավոր է յերկար ժամանակ ապահովել նրան ուշադիր և լավ խնամքով, վորպեսզի վերականգնի նրա առողջությունը։

Շատ դժվար են ընթանում յերեխաների արյունալուծերը (դիզենտերիա և վարակիչ կոլիտ)։ Տարբեր է սկսվում արյունալուծը։ Մի քանիսի մոտ նա հանկարծակի յե սկսվում։ Առողջ յերեխայի ջերմաստիճանը հանկարծ ուժեղ բարձրանում է, նրա կղանքի մեջ լորձ և արյուն է յերեում։ Մյուսների մեծ հիվանդությունն սկսվում է դանդաղորեն, մի յերկու որ յերեխան իրեն տկար է գգում, որական մի քանի ան-

զամ լուծում ե, աշուհեան սկսվում ե ջերմել,
կղանքի մեջ յերևում ե լորձ և արյուն:

Յերեխան ավելի ու ավելի հաճախ և լուծում,
բայց կղանքը քիչ ե լինում: Յերեխան ամբողջ ժա-
մանակ դու ե տալիս: Դրա հետ միասին նա ուժեղ
ցավեր ե զգում, դուռում ե ու լաց լինում: Յերբեմն
յերեխայի հետույքից դուրս ե ցցվում վերջնադիզբ:

Յերեխան նիհարում ե, թուլանում, հյուսվում,
յերբեմն ուշադնաց ե լինում: Յերբեխանները հաճախ
արյունալուծից մահանում են: Դա շատ ծանր վա-
րակիչ հիվանդութուն ե: Արյունալուծի միկրոօրգանիզմը
կարող են փոխանցվել վոչ միայն յերեխաններին,
այլ և մեծերին: Յերբեմն արյունալուծով հիվան-
դանում են ամբողջ ընտանիքներ:

Նախազգուշական միջոցներ ձեռք չառնելու
դեպքում արյունալուծը կարող ե տարածվել վողջ
կոլտնասության մեջ, ամբողջ գյուղում:

Ինչպես պետք ե խնամել լուծով հիվանդ յերեխա-
յին.— Հենց վոր սկսում ե լուծը, յերեխային անմի-
ջապես պետք ե ցույց տալ բժշկի: Յեթե ժամանակին
տալ յերեխային անհրաժեշտ բուժումը և խնամքը,
նրան կարելի յե փրկել ծանր լուծից և մահից:

Հիվանդ յերեխային պետք ե պառկեցնել մաքուր
անկողնում: Ամառը պետք ե բաց թողնել լուսա-
մուտները, իսկ ձմռանը հաճախ բանալ ողանցքները,
վորպեսզի մաքուր ողը շատ լինի: Յերեխային շատ
չպետք ե փաթաթել: Յերբ յերեխայի համար չոզ ե
և ողը ծանր, նա շատ ե թուլանում: Չի կարելի
նրան թողնել թաց և կեղտոտված բարձրի մեջ:
Թաց սպիտակեղենից նրա մաշկը չփաթուրք ե լինում

և ցավեցնում նրան: Հենց վոր յերեխան լաց յեղավ,
պետք ե մոտենալ նրան և կուրծք չտալ, այլ նայել,
թե հարմա՞ր ե պառկած, արդյոք թրջված չե՞, կամ
նայել, թե ճանճերը չե՞ն անհանդստացնում նրան:

Յերբ յերեխան սկսեց լուծել, պետք ե
6—12 ժամ քաղցած պահել նրան, վորպեսզի սառ-
մոքսը և աղիքները ազատվեն կերակրից: Այդ ժա-
մանակ յերեխային կարելի յե թեյի զղալով լամեցնել
միայն յեռացրած սառը ջուր:

Դրանից հետո յերեխային կարելի յե կուրծք
տալ: Թե ինչպես պետք ե կերակրել և բժշկել հի-
վանդ յերեխային, մանրամասն կրացատրի բժիշկը,
վորին պետք ե դիմել, չսպասելով, վոր յերեխայի
զրույթյունը վատանա:

Ուրիշ յերեխանների լուծի միկրոօրգանիզմով չփա-
րակելու և իրենց ել վարակից հեռու պահելու հա-
մար, անհրաժեշտ ե կառարել հետևյալ նախազգու-
շական միջոցները. յերեխայի բարձուրը պետք ե դնել
մի տեղում, ամենից լավ ե փակ դույլի մեջ, վոր-
պեսզի նրա վրա ճանճերը չնստեն: Այդ բարձուրը
պետք ե առանձին լվանալ և անպայման յեռացնել,
վորպեսզի աղիքային միկրոօրգանիզմը վոչնչանան: Ան-
լրվա բարձուրը չի կարելի ցայել միայն սառը ջրով,
սառնձնապես վառնդավոր ե ջրհորի մոտ ցայելը,
վորովհետև աղիքային միկրոօրգանիզմը կընկնեն ջրհորի
մեջ և կվարակեն ջրհորի ջրից խմող մարդկանց:

Յերեխայի բարձուրը փոխելուց հետո, նրան
խնամողը պետք ե լվանա իր ձեռքերը սաղոնով, վոր-
պեսզի իրեն և ուրիշ յերեխաններին չփարակի միկ-
րոօրգանիզմով:

ինչպես կանխել լուծերը.— Յերեխաներին լուծերից պաշտպանելու համար յուրաքանչյուր կոթորենտեսուհի պարտավոր է մաքրություն և կարգ պահպանել տան մեջ, տան մոտերքը, բակում և այլն: Տունը պետք է պահել ափսոս, ինչպես մենք բացատրեցինք վարակիչ հիվանդություններին վերաբերող գլխում: Մաքուր, լավորակ կաթ ստանալու համար, պետք է լուրջ ուշադրություն դարձնել և՛ դոմի և՛ կովի մաքրության վրա: Կթելուց առաջ կովի կուրծքը և սրտուկները պետք է լվանալ յեռացրած սառը ջրով:

Մանդամթերքները պետք է խնամքով ծածկել ճանճերից: Յերեխային պետք է կերակրել առանձին ամանից, վորն ամեն անգամ ուտելուց հետո պետք է լվանալ յեռացրած ջրով: Մաքուր ամանեղենը պետք է ծածկել ճանճերից մաքուր սրբիչով կամ մառլայով: Յերեխային պետք է կերակրել կանոնավոր և ժամանակին ափսոս, ինչպես կկարգադրի բժիշկը: Վոչ մի դեպքում նրան ծամած ծածկ չտալ:

Մարմինը, սպիտակեղենը, ամանեղենը, բնակարանը մաքուր պահելու, յերեխային կանոնավոր կերակրելու դեպքում, մանկակառն լուծերը չեն կարող լայն տարածվել:

Յերեխաներին լուծերից պաշտպանելու համար, մայրերը պարտավոր են կատարել հետևյալ կանոնները՝

1. Յերեխային պետք է մոտենալ մաքուր զգեստով և լվացած ձեռքերով:

2. Բացի կրծքի կաթից, առանց բժշկի խորհրդի, ծծկեր յերեխաներին վոչինչ չտալ:

3. Լրացուցիչ սնունդը, վորն ստացվում է մըստերից, պետք է պահել հով տեղ և նույն ամանում:

4. Յերեխայի յերեսը պետք է լվանալ միայն յեռացրած սառը ջրով:

5. Նախքան յերեխային խաղալիք տալը, վերջին պետք է լավ լվանալ յեռացրած ջրով: Յեթե յերեխան խաղալիքը պցում է հատակին կամ դետնին, պետք է նորից լվանալ:

6. Չտալ յերեխային ափսոսի խաղալիքներ, վորպիսիք հնարավոր է և լվանալ:

7. Ամանեղենը, զգալը, ծծակը և այլն ճանճերից պաշտպանելու համար պետք է պահել մաքուր սրբիչի մեջ. ամեն անգամ ուտագործելուց առաջ ողողել յեռացրած ջրով:

8. Ձի կարելի չափից դուրս տաքացնել յերեխայի մարմինը: Շուգ ժամանակ նրան պետք է հաղցնել միայն մեկ չապիկ և շուտ-շուտ խմացնել յեռացրած սառը ջուր (առանց չաքարի):

9. Թույլ չտալ յերեխային սողալ հատակի վրա:

10. Վորպեսզի սենյակում ճանճեր քիչ լինեն, պետք է հետեւել, վոր սեղանների, նստարանների և հատակի վրա հացի կտորներ և կերակրի մնացորդներ չմնան: Այդպիսիք պետք է խնամքով ափսել և դուրս թափել սենյակից: Ճանճերի դեմ պետք է համառ պայքար մղել:

III. ԻՆՁ Ե ԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեր յերկրում, հաղթանակած սոցիալիզմի յերկրում աճում են առողջ, ուժեղ, կենսուրախ վո-

խարինողներ: Նրանք աճում են աշնայիսի պամյաննե-
րում, վորպիսիք մինչ այժմ չի տեսել յերկրադեղի
և վոչ մի պետության յերիտասարդություն:

Այդ սերունդը կարող է հանգիստ և յերջանիկ
զանդանալ ու աճել: Ըստ մեծ Ստալինյան Մահմա-
նադրության, վորն ընդունվել է Խորհրդների 8-րդ
Արտակարգ Համագումարի կողմից 1936 թ. դեկ-
տեմբերի 5-ին, ծնողները չեն կարող դործադուրկ մնալ,
ինչպես զա լինում է ուրիշ բոլոր յերկրներում: Սո-
ցիալիստական պետությունը ապահովում է աշխա-
տանքի իրավունքը բոլոր քաղաքացիների համար:
Մեր նոր սերունդը հանգիստ ու յերջանիկ կարող է
աճել նաև այն պատճառով, վոր հոգատարությունը
դեպի մեր սոցիալիստական պետության յերեխաները
սկսվում է նախքան նրանց աշխարհ գալը:

Մեզ մոտ դոյություն ունեցող որենքների համա-
ձայն, աշխատավորուհիները և կոլտնտեսուհիները
արձակուրդից ուղտվում են ծննդաբերությունից ա-
ռաջ և հետո: 1935 թվին հղիության նպաստ է տրե-
վել 200 միլիոն ուրբլի:

«Արտաներն արդերելու, ծննդկաններին ցույց
տվող նյութական ունեությունն ավելացնելու, բազ-
մանդամ ընտանիքների համար պետական ունու-
թյուն հաստատելու, ծննդատների, մանկամսուրների
և մանկապարտեղների ցանցը ընդարձակելու» վերա-
բերյալ 1936 թվի հունիսի 27-ի որենքով, մեր պե-
տությունը բացառիկ հոգատարություն ցուցաբերեց
դեպի կանայք և յերեխաները: Ծննդաբերական մահ-
ձակալների ցանցի, մանկամսուրների և մանկա-
պարտեղների ավելացման համար 1936 թ. բաց են
թողնված արդեն հսկայական գումարներ: 1936 թ.

հունիսի 27-ի որենքի համաձայն, 1939 թ. հունվա-
րի 1-ին դոյություն ունեցող մանկամսուրների մահ-
ձակալների թիվը քաղաքներում, խորհունտեու-
թյուններում, բանվորական ավաններում, յերկա-
թուղային տրանսպորտում կրկնապատկելու յե և
նրանց ընդհանուր թիվը հասնելու յե 800 հազարի:
Գյուղական վայրերում դոյություն ունեցող ինչպես
մշտական, այնպես էլ սեզոնային կոլտնտեսային
մսուրների մահճակալների ցանցը առ 1-ն հունվարի
1939 թ. կրկնապատկելու յե. մշտական մսուրների
մահճակալների թիվը հասնելու յե 500 հազարի, իսկ
սեզոնային մսուրներինը՝ չորս միլիոնի:

Մսումներն ապահովում են ամենապիտք յերե-
խաների առողջ դաստիարակությունը: Յերեխան
տեղավորվում է մաքուր և լուսավոր մսուրում:
Մանկամսուրում մահճակալների սպիտակեղենը մա-
քուր է: Յերեխաներին խնամում են մաքուր և սպի-
տակ խալաթ հագած մսուրային քույրեր: Յերեխա-
ները մսուրում միշտ մաքուր են ու լվացված: Նը-
րանց կերակրում են բժշկի ցուցումներով կանոնա-
վոր պատրաստված կաթով: Մսուրում կահավորու-
մը՝ մահճակալները, սեղանները և աթոռները հար-
ժար են: Յերեխաները մսուրում բժշկի հսկողու-
թյան տակ են դտնվում:

Այդպես է մսուրների դրությունը, վորտեղ տե-
ղավորվում են յերեք տարեկան հասակ ունեցող յե-
րեխաները: Մեզ մոտ կազմակերպված է մսուր
չհաճախող յերեխաների բժշկական ունեության դոր-
ծը: Ամեն մի մայր կարող է մանկական կոնսուլտա-
ցիա բերել վոչ միայն իրեն հիվանդ, այլև առողջ

յերեխաներին: Այնտեղ բժիշկը կսովորեցնի նրան, թե ինչպես պետք է աճեցնել և սնել յերեխային, ինչպես խնամել, վորպեսզի առողջ և ամրակաղմ մեծանա:

Յերեխան դառնում է 3 տարեկան, մսուրներին փոխարինում են մանկապարտեզները և մանկական հրապարակները: Այստեղ ևս նույն հոգատարությունն է յերեխայի առողջության, նրա կանոնավոր ու դիտակից դաստիարակության նկատմամբ:

1937 թ. մանկապարտեզի յերեխաների թիվը, համաձայն 1936 թ. հունիսի 27-ի որենքի, նույնպես պետք է այնքանա՝ մեկ միլիոն 500 հազարով:

7—8 տարեկան յերեխան դպրոց է գնում: 7 տարեկան ընթացքում դարձյալ յերեխան աճում ու դարգանում է և կյանք մտնում ամրակուռ առողջությամբ և լավ պատրաստված:

1935 թվին տեղի ունեցած Համասուսական խորհուրդներին 16-րդ համագումարը մեծ ուշադրություն դարձրեց յերեխաների առողջացման հարցին: Համագումարն առաջարկեց Առողջապահության, Ժողկոմատին, ուժեղացնել յերեխաների առողջության պահպանության աշխատանքները, մասնավորապես «զգալիորեն լայնացնել յերեխաների մասնագիտական բուժօգնությունը, առանձնապես վարակիչ հիվանդությունների և տնային բուժօգնություն, ինչպես նաև յերեխաների կուրորոտային սպասարկման բնագավառներում»:

Այդ համագումարը սլարտավորեցրեց Առօրյա մասին՝ ապահովել բժշկասանիտարական վերահսկողությունը դպրոցներում, մանկապարտեզներում,

մանկամսուրներում, ինչպես նաև յերեխաների մեջ տարվող ամառային բոլոր տեսակի առողջապահական աշխատանքներում:

Համագումարն հանձնարարեց ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների խորհրդին մանկակառ, ցուցադրական կուրորոտ կառուցել հարավում: Այս բոլորը ցույց է տալիս, թե խորհրդային իշխանությունը վորքան է մտահոգված մեր յերեխաների առողջությամբ պահպանման և ամրապնդման գործով, թե մեր առողջապահությունը ինչ չափերով է ծառայում միլիոնավոր աշխատավորության շահերին, ձգտելով աշխատավորության առողջապահությունը հասցնել չտեսնված բարձրություններին:

Սխորհրդային իշխանությունն այդպես է հոգում յերեխայի մասին, այդպես է նա պատրաստում առողջ փոխարինողներ:

Կյանքի պայմանների անընդհատ բարելավման հետ միասին, վորի մեջ ապրում են մեր յերեխաները, խորհրդային Միության մեջ տարեց տարի պակասում են վարակիչ հիվանդությունները և մահացությունները նրանցից:

IV. ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԻ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԸ ՎԱՐԱԿԻՉ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Առողջապահական դժով աշխատելու համար ամեն մի կոլտնտեսությունում մեջ պետք է կադմակերպել սանիտարական հանձնաժողովներ: Այդ հանձնաժողովներում պետք է աշխատեն ակտիվ կոլտնտեսականները և սանիտարական լիազորները:

Սանկիադորները մեծ և պատասխանատու աշխատանք պետք է տանեն մանկական վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու գործում:

Միմիայն խորհրդային պետությունը, միակն ամբողջ աշխարհում, դռնով կնոջն ազատագրելու իսկական ուղին: Հասարակական սննդի կադմսկերպումը, կուտընտեսություն ճաշարանը ապառում է կնոջը յեմիել-թափելուց: Մսուրների, մանկապարտեզների կադմսկերպումը և յերեխաների խնամելը, հատկապես ալդ գործին սովորեցրած մարդկանց կողմից, հնարավորություն է տալիս կնոջը մտածելու վոչ միայն իր ընտանիքի, այլև իր գրադիտությունը բարձրացնելու մասին, կոտնտեսություն արտադրություն և հասարակական կյանքին մասնակցելու մասին:

Խորհրդային իշխանությունը մեծ չափով բարձրացրեց անդրադետ, խափար, ճնշված և իրավագուրկ պեղչկուհուն: Խորհրդային իշխանությունը նրան դարձրեց հասարակության լիբրավ անդամը: Խորհրդային Միության մեջ, վորտեղ արդեն կատուցված է անդատակարդ հասարակություն, կինը յիովին և իրապես ազատագրված է:

Կոտնտեսական կինը կոտնտեսություն մեջ պիտի լինի առաջավորներից առաջավորը:

Ներկայումս ԽՍՀՄ-ում քիչ է գյուղխորհրդների կին նախագահների թիվը, չատերը գլխավորում են կոտնտեսություններ, կոտնտեսության Փերմաներ, դեկավարում են բրիգադաներ:

Անհրաժեշտ է, վորպեսզի կինը, վոչ պակաս ախտիվ լինի նաև մանկական վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի գործում:

Սանկիադորները պետք է բացատրեն բոլոր մայրերին, վոր անդաման կոտնտեսացիա պետք է տանել վոչ միայն հիվանդներին, այլև առողջ փոքր յերեխաներին, վորպեսզի բժշկից խորհուրդներ ստանան, թե ինչպես կերակրել և սնել յերեխային, վորպեսզի նա առողջ և ամբակադմ լինի: Առողջ և ամբակադմ յերեխաները ավելի քիչ են հիվանդանում և հեշտություն տանում հիվանդությունները:

Աշխատանքն այնպես պետք է դնել, վորպեսզի ծնողները հայտնեն սանկիադորներին, յեթե նրանց յերեխան լուրջ հիվանդացել է: Սանկիադորը պարտավոր է անմիջապես կադմսկերպել ոգնությունը, վորպեսզի հիվանդանոց տանեն կոտնտեսականի կամ մենատնտեսի յերեխան, կամ բժշկ բերեն հիվանդ յերեխայի մոտ:

Սանկիադորները կարող են մեծ ոգնություն ցույց տալ հիվանդանոցին՝ ծաղկի, դիֆտերիայի և քուրթելի դեմ պատվաստումներ կատարելու գործում:

Անհրաժեշտ է, վոր սանկիադորները կուպ պահպանեն հիվանդանոցի և սանիտարական բժշկի հետ: Նրանց հետ միասին, նրանց դեկավարություն ասանկիադորները պետք է կատարեն առողջապահական այն աշխատանքները, վորոնք ամենից շատ անհրաժեշտ են տվյալ ժամանակամիջոցում: Յեթե կոտնտեսականներից վորեկե մեկի տանը քուրթելով կամ դիֆտերիայով հիվանդ կա, սանկիադորներից պետք է ընտրել վորեկե անգամակ կնոջ, վորը գեթ հնգորյակը մեկ անգամ դա հիվանդի տուն, հետևի, թե ծնողները ճիշտ են պահպանում բոլոր նախադրու-

չափան միջոցները, վորոնք անհրաժեշտ են, վորպես-
դի այդ հիվանդութիւնը չտարածվի ամբողջ կոլ-
տնտեսութեան մեջ:

Կոլտնտեսութեան սանիտարը պետք է հայտնի
դպրոցին, մսուրին, մանկապարտեզին այն մասին,
վոր այսինչ յերեխան հիվանդացել է վարակիչ հի-
վանդութեամբ: Յեւ նրա յեղբայրներին և քույրերին
չի կարելի մանկական հիմնարկ հաճախել, մինչև
վոր այդ մասին չլինի բժշկի թույլտվութեամբ:

Այսպիսով իրենք կոլտնտեսականները կողմնէն ա-
ռողջապահական մարմիններին:

Առողջապահական բաժիններին, հիվանդանոցնե-
րին, և կոլտնտեսական ակտիվի համերաշխ աշխա-
տանքով կհաջողվի հաղթանակել նաև մանկական
վարակիչ հիվանդութիւններին դեմ պայքարել ֆրոն-
տում, հասնել այնպիսի դրութեան, վորպեսզի մեր
յերկրում չլինեն մանկական վարակիչ հիվանդու-
թիւններ:

Պատ խմբագիր՝ Ա. ԱԼԵԿՍԱՆՅԱՆ
Լեզվ. խմբագիր՝ Ա. ՇԱԹԻՐՅԱՆ



Դրվագի լիազոր՝ 2093 Պատվեր № 319 Տիրած 3000
Հանձնված է արտադրութեան 31 մարտի 1939 թ.
Մտորագրված է տպագրութեան 1 հունիսի 1939 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՐԴԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԴՈՐԴՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0271601

9110 1 П. 25 4.

5233

887

А. Л. БРАИЛОВСКАЯ

**Детские заразные болезни
и борьба с ними в колхозе**

Сан. просвет отдел НКЗдрава Армян
ГРЕВАН

616.053.2

P-99